

ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954



Հայ Յեղափոխական Դաշնակցության Պաշտոնաթերթ

(75-րդ տարի) Թիվ-12 (1658)

Դեկտեմբեր 2021

Բովանդակություն



Հայ Յեղափոխական Դաշնակցության Պաշտոնաթերթ
(75-րդ տարի) Թիվ-12 (1658) ————— Դեկտեմբեր 2021

«Դրօշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության
պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմության թանգարան
հիմնադրամ»
Երևան, Միեր Սկրուչյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ <https://www.droshak.am>
Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ



1- Առաջնորդող

Հայթանակի և պարտության հնարավորի
արվեստը (Էջ 1-4)

2- Քաղաքական

Հրանտ Մելիք-Շահնազարյան
Հետպատերազմյան շրջանում հայ-
ադրբեջանական հարաբերու-
թյուններում ի հայտ եկած քաղաքական նոր
տարրերը (Էջ 5-7)

Գագիկ Եկմայան
Սյունիքի աշխարհաքաղաքական տեղն ու
դերը պանթուրանական ծրագրի իրագործումը
կասեցնելու գործընթացում (Էջ 8-14)

3- Պատմաքաղաքական

Արարատ Հակոբյան
1920 թ. դեկտեմբերի 2-ը Հայաստանի և հայ
ժողովրդի ճակատագրում. անցյալը և ներկան,
գնահատականներ և արժևորումներ (Էջ 15-17)

Անի Մելքոնյան
Հայ-ադրբեջանական հարաբերությունների
պատմությունից (Էջ 18-21)

4- Հայ Դատ

Թամարա Գասպարյան
ՀՅԴ Հայ դատի հանձնախմբերի
հանրային կապերի զարգացման
միտումները (Էջ 22-25)

5- Դաշնակցական բեմ

Ալո Գաթրճեան
ՀՅԴ կուսակցության գաղափարախօսությունը
մարմնավորող քայլերգը՝ «Մշակ, բանուոր,
ռենչալեր աղբեր»-ը (Երգի մը պատմութիւնը)
(Էջ 26-35)

6- Պատմության լուսարձակ

Մարիամ Հովսեփյան
Միլի շարժումը Կ. Պոլսի «Ճակատամարտ» և
«Ժամանակ» օրաթերթերի էջերում (1919-1920
թթ.) (Մաս 1) (Էջ 36-40)

7- Ընկերական գրույցներ

Վրէժ-Արմէն
Ի՞նչ երկիր կ'ուզենք կառուցել (Էջ 41-42)

8- Ամմահները (Էջ 43-44)

Հաղթանակի և պարտության հնարավորի արվեստը

Հետպատերազմյան 2021 թվականը խաղաղություն և կայունություն չբերեց հայ ժողովրդին: Ընդհակառակը՝ Արցախի դեմ ագրեսիան հաղթանակով ավարտելուց հետո ադրբեջանա-թուրքական դաշինքը դրսևորեց իր ծավալապաշտական հավակնություններն արդեն ինքնիշխան Հայաստանի նկատմամբ: Առանց սահմանագատման և սահմանագծման պայմանների և սկզբունքների ճշգրտման, առանց գործընթացի երկկողմանի մեկնարկի՝ Ադրբեջանը միակողմանիորեն սկսեց նոր սահմաններ հաստատել՝ սեփականելով հայկական բնակավայրերը, ռազմավարական ճանապարհները, բարձունքներն ու դիրքերը, ամրացնել դրանք և գրավված նոր բնագծերում տեղակայել իր զինված ուժերն ու տեխնիկան: Ավելին՝ թշնամական տանդեմը շարունակաբար պնդեց Հայաստանի տարածքով Ադրբեջանը Նախիջևանի հետ կապող միջանցքի տրամադրման պահանջը, խոսեց Սյունիքի ու Հայաստանի այլ տարածքների՝ Ադրբեջանին պատկանելության, իր, այսպես կոչված, պատմամշակութային կորուստների դիմաց հայկական կողմից տասնյակ միլիարդավոր դոլարների փոխհատուցման մասին, աշխատանքներ տարավ արտաքին աշխարհում Արցախի հայկական եկեղեցիները որպես ոչ հայկական ճանաչել տալու ուղղությամբ և այլն: Հայաստանի պարտված իշխանություններին իր նոր հավակնությունները պարտադրելու նպատակով թշնամին նախկինում և առ այսօր իրեն արդարացրած ռճով զուգահեռաբար դիմում էր մշտական ռազմական սադրանքների, սպանում ու գերեզմարում էր հայկական դիրքերում գտնվող զինվորներին, որպես ճնշամիջոց էր օգտագործում դեռևս վերջին պատերազմի օրերից իր մոտ պահվող հայ գերիներին:

Այս ամենին Հայաստանի իշխանությունների պատասխանը եղավ պատասխանից խուսափելը: Զինված ուժերին և ոչ միայն նրանց թելադրվեց չարձագանքել թշնամական ոտնձգություններին, չձեռնարկվեցին քայլեր կազմալուծված բանակը ոտքի կանգնեցնելու, մարտունակությունը բարձրացնելու և նոր բնագծերն ամրապնդելու ուղղությամբ: Ընդհակառակը՝ Հայաստանի դեմ ուղղված սադրանքների, ագրեսիվ հավակնությունների պայմաններում հայտարարվում էր բանակը կրճատելու, երկրի պաշտպանության գործում վերջինիս իրավասությունները սահմանափակելու մասին: Ադրբեջանական առաջխաղացումը Հայաստանի տարածքում, ճանապարհների ու բնակավայրերի գավթումը Հայաստանի իշխող ուժի ներկայացուցիչները արդարացնում էին՝ հայտարարելով, թե դրանք նախապես պատկանել են Ադրբեջանին:

Հայաստանի իշխանությունը Ադրբեջանի նախահարձակ արտաքին քարոզչության պայմաններում քայլեր չձեռնարկեց թշնամու կատարած ռազմական

հանցագործությունների հարցը միջազգային աստիճաններում արժարժեքի ուղղությամբ, իսկ այս կամ այն առիթով այդ հարցերին անդրադառնալու ժամանակ անհասկանալի լռություն է պահպանվում Թուրքիայի մեղսակցության վերաբերյալ:

Ավելորդ է խոսել ողբերգական կացության մեջ հայտնված Արցախի ճակատագրի նկատմամբ Հայաստանի իշխանությունների վերաբերմունքի մասին: Արցախը պարզապես գոյություն չունի նրանց օրակարգում, և այդ հանգամանքը նրանք ընդգծված ձևով փորձում են ակնառու դարձնել նաև ադրբեջանցիների, թուրքերի և ուրիշների համար:

Հիշենք այստեղ իշխանությունների հրամցրած այն կեղծիքը, թե նախկիններն էին տարիներ առաջ ծախել Արցախը: Այդ դեպքում ինչի մասին է վկայում նրանց անտարբերությունը հոշոտված Արցախի ներկայի ու ապագայի նկատմամբ, իսկ այժմ արդեն հայտարարություններ են արվում թշնամական թիրախում հայտնված Սյունիքի հարցում նախկինների մեղքերի մասին: Զինվորականների վրա են բարդվում ռազմական ճախողումները՝ սկսած գեներալներից մինչև շարքային զինվորներ, գերության մեջ տառապած զինվորներին Հայաստանում սպառնում են հարուցվող մեղադրանքներն ու բանտարկությունը: Սա հիշեցնում է ստալինյան բռնապետության մոայլ ժամանակները: Այնինչ ոչ վաղ անցյալում գերագույն զլխավոր հրամանատարը հոխորտում էր, թե ամեն ինչ ինքն է որոշում և ունի դրա ոչ միայն իրավասությունը, այլև հնարավորությունը:

Ողբերգական պատերազմից ընդամենը շաբաթներ անց իշխանական շրջանակները սկսեցին խոսել Թուրքիայի ու Ադրբեջանի հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատելու, հաղորդակցական ուղիները բացելու, առևտուր անելու մասին: Սա չի նշանակում արդյոք, որ շողկապված են պարտության փաստը և դրան նախորդած ու հաջորդած իրողությունները ներքին ու արտաքին քաղաքականության մեջ: Արժե մտածել այն մտքի շուրջ, որ եթե անգամ դավաճանություն չի եղել Հայաստանի իշխանությունների գործունեության հիմքում, ապա լինելու դեպքում նրանք կանեին ճիշտ այն, ինչ որ արել են:

Պատերազմից հետո պարտվածի հոգեբանությամբ, կամազուրկ իշխանությունը արտաքին ճակատում դադարեց գործոն լինելուց: Նա ավելի շուտ փորձում է ճարպկորեն խուսանալ արտաքին ուժերի և նրանց շահերի միջև, իսկ վերջիններիս համար Հայաստանի ղեկավարությունն այլևս քաղաքական կշիռ չունի, և նրանք Հայաստանին վերաբերող խնդիրները փորձում են լուծել իրար հետ: Միայն թե այնքան միամիտ չեն, որ կողմ գնան Փաշինյանի գավառական խորամանկությանը և ներքաշվեն գործող հակամարտության ու անգամ

ռազմական գործողությունների մեջ: Մանավանդ երբ Հայաստանի ղեկավարն ինքը բնավ մտադրություն չունի իր տրամադրության տակ եղած զինված ուժերով պաշտպանելու սեփական երկիրն ու նրա սահմանները: Այսինքն՝ ինքն իրեն երկրի իրական ղեկավար պատկերացնող անձը ունակ չէ կամ չի ցանկանում իրականացնել պետության ինքնիշխանությունը բնորոշող իր թիվ մեկ պարտականությունը: Մեր երկրի ապագան որոշվում է դրսում և թելադրվում է Հայաստանի իշխանություններին, ընդ որում, այդ ամենը թաքցվում է հայ ժողովրդից, որը մի օր կարող է հայտնվել նոր անակնկալների առաջ, ինչպես 2020 թ. նոյեմբերի 9-ի առավոտյան: Հայաստանի իշխանությունը զիջումների գնալու պարտադրանքի առջև հլու կամակատարի վարքով ավելի է շահագրգռում արտաքին ուժերին հասնելու այստեղ տասնամյակներով կուտակված խնդիրների հանգուցալուծմանը, ինչպես և տարածաշրջանային նոր վերադասավորումներին մեր երկրի հաշվին:

Մյուս կողմից՝ արտաքին ճակատում զիջողականությամբ Նիկոլ Փաշինյանը փորձում է շահել արտաքին «շահառուների» բարեհաճությունը, որպեսզի երկրի ներսում ձեռքերն ազատ լինեն անօրինական ու բռնի մեթոդներով հաշվեհարդար տեսնելու իր հակազգային կառավարման դեմ ուռճացող ընդդիմության ալիքի հետ: Իրավամբ էլ, այն պայմաններում, երբ քաղաքակիրթ Արևմուտքը զովերգում է Հայաստանի ժողովրդավարությունը, Նիկոլ Փաշինյանը երկրի ներսում թույլ է տալիս աղաղակող անօրինականություններ, թքել է ժողովրդավարության վրա, որի կարգախոսներով ոչ հեռու անցյալում իշխանությունն է նվաճել:

Երեկ նա բողոքի ամենափոքր դրսևորման դեմ դուրս էր բերում կարմիր բերետավորների, բանտարկում էր ընտրյալ պատգամավորներին, ուժային կառույցների ծառայողները թևերը ոլորելով խորհրդարանի դահլիճից դուրս էին հանում իշխանությանը քննադատող ընդդիմադիրներին, իսկ այսօր արդեն վարչապետը փորձում է ազդել տեղական


ընտրությունների արդյունքների վրա, հետապնդել հաղթող ոչյուրայիններին, անհիմն ձևով չեղյալ է հայտարարում այդ ընտրությունները, եթե տվյալ տարածքում իր թիմը չի հաղթել: Իշխանությունը Նիկոլ Փաշինյանի համար այլևս միայն փառատենչությունը բավարարելու և հարստանալու միջոց չէ, այլև դարձել է պատասխանատվությունից խուսափելու թերևս միակ հնարավորությունը: Ամենից լավ միայն նրան է հայտնի պետության ու ժողովրդի առջև իր կատարած հանցագործությունների չափը, և նա սարսավում է անխուսափելի պատասխանատվությունից: Երբ նա ասում էր, թե ընտրություններում պարտվելու դեպքում ընդդիմությունն իրենց ցցի կհաներ, իհարկե նկատի ուներ նոր իշխանության կայացրած, հետևաբար և օրինական ճանապարհով իրականացվելիք արդարադատությունը: Նիկոլ Փաշինյանը կեղծիքներով հաղթեց վերջին և խորհրդարանական, և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում: Ուժերի հավասարակշռությունը պահպանելու համար նա դրանից հետո էլ անում է ամեն անօրինական քայլ, այդ թվում շանտաժի ու կաշառքի միջոցով իրենից հլու ենթակայության մեջ է պահում թիմակիցներին, որոնք այլևս պատանդ են սեփական առաջնորդի ձեռքում: Ըստ էության, երկրի վարչապետը, հենվելով իր անձին ծառայող ուժային կառույցների վրա, երկրում գործադրելով անհամարժեք ու անհամաչափ ուժ և ընդդիմադիր գործիչների նկատմամբ ծավալելով համատարած հետապնդումներ, ցանկանում է հասարակությանը ներշնչել, թե փակել է Հայաստանում իշխանությանը ինչոր բան թելադրելու կամ իշխանափոխության հասնելու բոլոր օրինական ճանապարհները: Նիկոլ Փաշինյանի վարքը նման է այն հանցագործի վարքին, որը գնում է «վա բանկ»՝ իրականացրած հանցագործությունների համար հատուցումից խուսափելու նպատակով կատարելով նոր հանցագործություններ: Նույն կերպ ձախողվելով արտաքին քաղաքականության ասպարեզում՝ նա այսօր փորձում է իրականացնել արմատական շրջադարձեր Հայաստանի արտաքին կողմնորոշումների և զարգացման ռազմավարության մեջ:

Փաշինյանը չարաշահել է իր լիազորությունները՝ առանց խորհրդարանի ու Մահմանադրական դատարանի վավերացման, ինչպես և հանրաքվեների անցկացման վարելով բանակցություններ և կայացնելով որոշումներ, զիջելով Արցախի ու Հայաստանի Հանրապետությունների տարածքները, միայն իր ստորագրությամբ վավերացնելով միջազգային պայմանագրեր: Այս և երկրի ապագայի համար կենսական կարևորության այլ խնդիրներ լուծվում են ժողովրդից ծածուկ՝ նրա և թերևս նրան համախոհ նեղ շրջանակի գիտությամբ: Նրա ցուցումով իշխող մեծամասնությունը ձախողում է խորհրդարանական այն նիստերը, որոնց օրակարգերում ընդդիմության պահանջով ներառվում են երկրի ամբողջականությանը, անվտանգությանը վերաբերող և կարևորագույն այլ հարցեր:



Արհամարհելով երկրի բարձրագույն ներկայացուցչական մարմնի, այլ իրավասու պետական և ազգային ինստիտուտների, քաղաքական-հասարակական շրջանակների կարծիքը և ժողովրդի տրամադրությունները՝ Նիկոլ Փաշինյանը բանակցությունների սկիզբ է դնում Թուրքիայի ու Ադրբեջանի հետ՝ փաստացի արդեն իսկ թուրքերի համար պաշտոնապես բացելով հայ-ադրբեջանական հարաբերությունների դուռը, պարտության ու նահանջի ընթացքի մեջ դեմ հանդիման հայտնվելով թուրքական ու ադրբեջանական նախապայմաններին: Ոչ մի կասկած չկա, որ այդ նախապայմանները լինելու են Արցախի հարցից վերջնականապես հրաժարումն ու Ադրբեջանի հետ ներկայումս առկա սահմանների ճանաչումը, թշնամի տերություններին, այսպես կոչված, Սյունիքով միջանցքի (եթե ոչ միջանցքների) տրամադրումը, Հայաստանի տարածքների ու նախկին ադրբեջանաբնակ անկլավների գիշումը, որոնց էլ կհետևեն թուրքական հին պահանջները հայ-թուրքական սահմանի ճանաչման, ցեղասպանության հարցի հետապնդումից հրաժարման վերաբերյալ: Նիկոլ Փաշինյանի, նրա գաղափարական ուսուցիչ Ժիրայր Լիպարիտյանի և այլ համախոհների արտահայտությունները հուշում են, որ հայկական պետականության դեմ ուղղված այս բոլոր սպառնալիքները միանգամայն իրատեսական են:

Պարտված և քաղաքականապես կամագուրկ հայ ղեկավարի հայտարարությունները տարածաշրջանում, այսպես կոչված, «խաղաղության դարաշրջան» բացելու վերաբերյալ իրականում նոր բան չեն. դրանք հայոց պետականությունը թուրքարևմտյան ազդեցությանը ենթարկեցնելու այն նույն պարտվողական գծի շարունակությունն են, որը ժամանակին փորձեց իրականացնել ՀՀԸ-ական թիմը՝ Լևոն Տեր-Պետրոսյանի գլխավորությամբ: Հիշենք նորանկախ երկրում արցախյան ազգային-ազատագրական պայքարի օրերին Լևոն Տեր-Պետրոսյանի թիմի ծավալած գաղափարա-քարոզչական արշավը շրջադարձային 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի պատմության՝ ազգային-ազատագրական պայքարի, կամավորական շարժման դեմ: Ժամանակի հայկական իշխող ուժը մեղադրվում էր հայոց ցեղասպանության իրողության մեջ, մերժվում էին Առաջին հանրապետության գործիչները: Ազգային գաղափարախոսությունը պիտակավորվում էր որպես կեղծ կատեգորիա, իսկ Հայ դատի հարցը՝ արկածախնդրություն: Լևոն Տեր-Պետրոսյանը, լինելով արցախյան պայքարի առաջնորդը, իր բազմաթիվ ելույթներում ու հողվածներում ուրվագծելով քաղաքական փակուղի, քարոզում էր «ամեն գնով» հասնելու Արցախի հարցի լուծմանը և հաշտության Ադրբեջանի հետ: 1997 թ. նոյեմբերի 1-ին լույս տեսավ Լևոն Տեր-Պետրոսյանի «Պատերազմ, թե՛ խաղաղություն. լրջանալու պահը» հողվածը, որը և սկիզբը դարձավ նրա կարիերայի ավարտի: Արցախը զիջելու նույն պլատֆորմով նա նախագահական ընտրություններին մասնակցեց



2008 թվականին և դարձյալ ջախջախիչ պարտություն կրեց: Ի դեպ, այս անգամ նրա դաշինքին մաս էր կազմում նաև ՀՀԸ-ի մտուրում քաղաքականապես ձևավորված Նիկոլ Փաշինյանը: Այդ տարիներին դեռևս սթափ էր ժողովրդի ազգային բնագոյը, և հանրային միջավայրում իշխում էր ազգային-ազատագրական պայքարի գաղափարը: Լևոն Տեր-Պետրոսյանն իր նորացված թիմով մասնակցության հայտ ներկայացրեց նաև 2021 թվականի խորհրդարանական ընտրությունների ժամանակ, թեև իր ծավալած քարոզչությամբ հեռու էր հիմնական մրցակցության ձգտելու հավակնությունից: Ժողովրդի մեջ վախ ներարկելով, թե «Հայաստան» դաշինքի հաղթանակի դեպքում անխուսափելի է լինելու պատերազմը, նա, բնականաբար, ճանապարհ էր հարթում Նիկոլի հաղթանակի համար, քանի որ գործող նիկոլական իշխանությանը այլ իրական այլընտրանք գոյություն չուներ: Միրված աշակերտ է արդյոք Լևոն Տեր-Պետրոսյանի համար Նիկոլը՝ դժվար է ասել, շատ հավանական է, որ ոչ, որովհետև ի տարբերություն գաղափարական հոր վերջինս բռնի է, կիսագրագետ, անհավասարակշիռ միաժամանակ իր ուսուցչի պես ինքնահավան ու համառ: Իրականում, «Հայաստան» դաշինքի դեմ պայքարելով, նա փորձում էր փրկել ոչ այնքան Նիկոլին, որքան նիկոլիզմը, ինչն էլ լեռնիզմի շարունակությունն է: Այդ պատճառով էլ այլ ժամանակներում Հայաստանի ճակատագրի համար աղմուկ բարձրացրած ՀՀ առաջին նախագահը լուր է վերջին տարիներին, երբ Հայաստանի ներկան ու ապագան իրապես վտանգված է: Փոխարենը Նիկոլի թուրքամետ քաղաքականության պաշտպանությանն է լծվել Լևոն Տեր-Պետրոսյանի գաղափարակից և երբեմնի խորհրդական Ժիրայր Լիպարիտյանը: Թուրքամետների այս թիմը Նիկոլի քաղաքականության համար հասարակական պա-

րարտ հող ապահովելու նպատակով փորձում է համոզել մեզ, թե աղբբեջանցիներն ու թուրքերը թշնամի չեն հայ ժողովրդին: Փորձում են համոզել Արցախի և հայության դեմ սանձագերծված ցեղասպանական պատերազմից ընդամենը մեկ տարի անց, երբ ամեն օր թշնամին դիմում է նոր սադրանքների ու սպանությունների, սպառնում է պատերազմով, պահանջում է միջանցքներ և տարածքներ, որոնք Հայաստանին կգրկեն երբևէ ինքնիշխանության ձգտելու հնարավորությունից: Պարտվողականների քաղաքական հոսանքը, ինչպես 30 տարի առաջ և ինչպես մեկ դար առաջ, փորձում է գնալ զիջումների, որոնք կբավարարեն թուրքերին ու աղբբեջանցիներին և կհամոզեն հաշտության ձեռք մեկնել հայերին: Այդ դեպքում, ի դեպ, ավելորդ կդառնա տարածաշրջանում ռուսական գործի և առհասարակ ռուսական գործոնի դերակատարությունը, ինչպես և հարավից կշրջափակվի ու ամբողջականությունը կորցնելու սպառնալիքի տակ կհայտնվի Իրանը: Այնպես որ այս թիմը շատ ավելի մեծ առաքելության է կոչված: Ինչ վերաբերում է հայկական զիջումներին, ապա լավ կլինի մեզ համար բացահայտվել, թե Հայաստանի իշխանությունների համար որն է այդ զիջումների կարմիր գիծը: Եթե թուրքաղբբեջանական տանդեմի համար մեկ տարի առաջ կենսական հարց էր Արցախի օկուպացումը, ապա այսօր ավելի կարևոր հարց է դարձել Ջանգեղուրի միջանցքի խնդիրը: Ստանալով այն՝ նրանց համար կենսական գերնպատակ կդառնա Հայաստանի այլ տարածքներին տիրանալը, որոնք կապահովեն այս թուրքական երկրների ծավալապաշտական վերջնական ծրագրերի իրականացումը: Եվ այս դատողությունները տեսական ոլորտից չեն, որոնց շուրջ կարելի է բանավիճել նիկոլների ու լիպարիտյանների հետ, այլ աշխարհաքաղաքական իրողություններ են, որոնց փոթորիկների մեջ են այսօր Թուրքիայի բոլոր հարևանները և ոչ միայն նրանք: Թուրքերի դարավոր բարեկամ Վրաստանը նույնպես իր դոմենը բացեց եղբոր առաջ, իսկ այսօր փորձում է դիմակայել խաղաղ օկուպացիային, որն իրականացվում է հիմնականում տնտեսական և կոմունիկացիոն քաղաքականության ճանապարհով: Թերևս չարժեր շատ ուշադրություն դարձնել «պատվերով երգող» Ժիրայր Լիպարիտյանի նման մեկի դատողություններին, սակայն անդրադառնանք նրա մեկ մտքին, որը, ըստ էության, ընկած է հայ պարտվողականների գաղափարախոսության հիմքում: Լիպարիտյանը, ակնարկելով զիջումների անխուսափելիությունը, ասել է, թե «Քաղաքականությունը հնարավորի արվեստն է»: Ոմանք, իրենց ձեռնտու ձևով մեկնաբանելով Բիսմարկի միտքը, փորձում են ապացուցել, թե քաղաքականությունը սահմանափակված է իր իրականացման հնարավորությամբ, այնինչ նույն միտքը հակառակ կողմից մեկնաբանելով ստացվում է, որ Բիսմարկը խոսել է հնարավորության սահմաններն առավելագույնս ընդլայնելու, անհնարինը հնարավոր

դարձնելու արվեստի մասին: Լևոն Տեր-Պետրոսյանի, Լիպարիտյանի, Նիկոլի գաղափարական նախորդները 1915 թվականին նույնպես խոսում էին դիմադրություն ցույց չտալու, թուրքական ջարդերի հետ համակերպվելու մասին: Գաղտնիք չէ, իհարկե, որ հայոց ազատագրության պայքարին այն ժամանակ ևս մասնակցել է ժողովրդի փոքրամասնությունը, սակայն անժխտելի է, որ փրկությունը եղել է այնտեղ, որտեղ կազմակերպվել է պայքար ու դիմադրություն: Հայ ժողովրդի գրեթե երկուհազարամյա պատմությունը գոյատևման պայքարի ընթացք է, երբ մեր հերթական վերածնունդները ապահովվել են անհնարինը հնարավոր դարձնելու արվեստի շնորհիվ: Մեր պատմության երկայնքով ձգվող գոյափրկության այս գծի ճշմարտացիության մասին է շեշտել Դերենիկ Դեմիրճյանը՝ իր նշանավոր վեպը վերնագրելով «Վարդանանք» և ոչ թե «Վասակենք»: Վերջապես, դարավոր անելությունից հետո հայոց պետականության վերականգնումը մի սխրանք էր, որը հնարավոր դարձավ քաղաքականության մեջ անհնարինը հնարավոր դարձնելու շնորհիվ:

Ազգային վերագարթոնքի, նորանկախ պետականության հզորացման և արցախյան հաղթանակի վավերացման բախտորոշ ներկա ժամանակահատվածում մենք Արամ Մանուկյանների ժառանգորդների իշխանության կարիքն ունենք, բայց այդ իշխանությունը հանձնվեց Ավիս-նուրիջանյանների ժառանգորդներին:

Հայաստանը դանդաղորեն գնում է դեպի անկում, հայ ժողովուրդը Նիկոլ Փաշինյանի ետևից գնում է դեպի պետականության վերջնական կորուստ: Պատմության այս ընթացքը ետ շրջել կարող են նրանք, ովքեր հավատում են և ունակ են անհնարինը դարձնելու հնարավոր, իսկ մյուսները պետք է զսպեն իշխանություն լինելու կիրքը և քաշվեն մի կողմ: 2022 թվականը պետք է դարձնել այդ ջրբաժանը, այլապես հետո ամեն ինչ կարող է դառնալ անիմաստ: ■



Գրիգոր Խանջյան «Վարդանանք»

Հեռապատերազմյան շրջանում հայ-ադրբեջանական հարաբերություններում ի հայտ եկած քաղաքական նոր տարրերը

Հրանտ Մելիք-Շահնագարյան
Քաղաքագետ, «Ոսկանապատ» վերլուծական կենտրոնի ղեկավար

2021 թվականը բավական նոր տարրեր բերեց հայ-ադրբեջանական հակամարտության կարգավորման գործընթացում: Ինչպես և կարելի էր սպասել, ոգևորվելով 2020 թ. 44-օրյա պատերազմում տարած հաղթանակով, թուրք-ադրբեջանական դաշինքը փորձեց օգտվել հարմար պահից և հնարավորինս ամրապնդել իր դիրքերը թե՛ դիվանագիտական և թե՛ ռազմաքաղաքական ոլորտներում: Աչք փակելով նոյեմբերի 9-ի, ինչպես նաև հունվարի 11-ի հայտնի եռակողմ հայտարարություններում ամրագրված իր պարտավորությունները կատարելու անհրաժեշտության վրա՝ ադրբեջանական կողմը ձեռնամուխ եղավ վերոնշյալ խնդիրների լուծման իր համար խիստ անհրաժեշտ գործին: Պաշտոնական Բաքուն ժամանակ չէր կորցնում: Նախ, գործեր մտցնելով նոյեմբերի 9-ի պայմանավորվածությամբ Արցախի Հանրապետության իրեն հանձնված շրջանները, ադրբեջանական կողմը որոշեց էլ ավելի հեռուն գնալ և մարտական հենակետեր տեղակայել նաև ՀՀ այն հատվածներում, որոնք հետագայում հնարավորություն կտային Ադրբեջանին փաստացի վերահսկողություն սահմանելու ՀՀ Սյունիքի, Վայոց ձորի, Գեղարքունիքի և Արարատի մարզերի՝ ռազմավարական նշանակություն ունեցող հատվածների վրա:



Թշնամու գործողությունների տրամաբանությունը շատ պարզ էր: Նախ այդ կերպ նրանք փորձում էին ապահովագրել իրենց ապագայում հայկական կողմի հնարավոր «ռևանջիստական» տրամադրություններից բխող սպառնալիքներից՝ տոտալ վերահսկողություն սահմանելով ոչ միայն սահմանամերձ բարձունքների, այլև մեր գործերի տեղաշարժի բոլոր հնարավոր ճանապարհների և ուղիների վրա: Այս խնդիրն Ադրբեջանի համար մեծ կարևորություն ունի հատկապես այն պատճառով, որ 44-օրյա պատերազմի հետևանքով Արցախի՝ իր վերահսկողության տակ անցած Քարվաճառի և Քաշաթաղի շրջանների հետ կապը խիստ թույլ և խոցելի է: Ադրբեջանի ռազմաքաղաքական իշխանությունը գիտակցում է, որ հնարավոր նոր պատերազմի պարագայում այդ երկու շրջանները պաշտպանելու տեսանկյունից իրենք կարող են լուրջ խնդիրներ ունենալ, հետևաբար ամեն ինչ անում է, որպեսզի օգտվի ստեղծված իրավիճակից և առավելագույնս ամրապնդի այդ տարածքները հայկական հնարավոր վտանգի առջև: Բայց սա Ադրբեջանի ծրագրի միևնույն է: Թշնամու՝ առավել հեռուն գնացող նպատակը նվաճողական է: Բաքվում հաշվարկել են, որ այս շրջանի իրենց ագրեսիվ քաղաքականությունը կարող է իսպառ ոչնչացնել իրավիճակը շտկելու Հայաստանի վերջին հնարավորությունները: Խոսքը, իհարկե, ՀՀ

Սյունիքի մարզում այնպիսի իրավիճակ ստեղծելու մասին է, որից հետո Հայաստանի հարավային շրջաններին սպառնացող թուրք-ադրբեջանական վտանգը կգերազանցի Քարվաճառի և Քաշաթաղի վերաբերյալ Ադրբեջանի բոլոր մտահոգությունները:

Բացի այդ, ամրապնդվելով ՀՀ արևելյան սահմաններին, թուրք-ադրբեջանական դաշինքը փորձում է վերջապես հասնել երկար տարիներ իր հետապնդած նպատակին՝ Թուրքիայի և Ադրբեջանի միջև ցամաքային կապ ստեղծելուն: Եվ սա երկրորդ, բայց ամենակարևոր տարրն է, որն ի հայտ է եկել այս անցնող տարում: Տեսնելով, որ ՀՀ իշխանություններն ընդունակ չեն պաշտպանելու երկրի արևելյան սահմանները և թույլ են տվել ադրբեջանական զինված ուժերին փակել անգամ Հայաստանը Իրանին կապող միջպետական ճանապարհը, Ալիևի վարչակազմը որոշում է նաև հաջորդ քայլն անել և գործ մտցնել Հայաստանի միջազգայնորեն ճանաչված տարածքներ: Ավելին՝ թուրք-ադրբեջանական դաշինքը նույնիսկ ՀՀ Սյունիքի մարզն ամբողջությամբ նվաճելու ուղղությամբ քայլեր է ձեռնարկում, ինչի հետևանքով տարածաշրջանում շահ հետապնդող երկրները, հատկապես Իրանի Իսլամական Հանրապետությունը, սկսում են լայնամասշտաբ պատերազմի պատրաստվել ՀՀ տարածքում: Լարվածությունն իր գագաթնակետին է հասնում սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին: Իրանը լայնամասշտաբ գործարկություններ է սկսում Հայաստանի և Ադրբեջանի հետ սահմանին, Թեհրան է հրավիրում ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանին, ակտիվ բանակցություններ սկսում Մոսկվայի ու Անկարայի հետ: Պաշտոնական Թեհրանը բոլոր հանդիպումների ժամանակ հստակ հայտարարում է, որ չի հանդուրժի տարածաշրջանի պետությունների միջազգայնորեն ճանաչված սահմանների փոփոխություն, և իր այդ ակտիվ գոր-

ծունեությանը կարծես ստիպում է Թուրքիային և Ադրբեջանին ետ կանգնել Սյունիքը նվաճելու արկածախնդրությունից:

Երրորդ կարևոր տարրը, որ հայ-ադրբեջանական հարաբերություններում առաջացել է անցնող տարում, բխում է վերոնշյալ զարգացումների հանգուցալուծումից: Հասկանալով, որ Հայաստանի հարավային շրջանների նվաճումը ներկայիս աշխարհաքաղաքական իրավիճակում անլուծելի խնդիր է՝ թուրք-ադրբեջանական դաշինքն առաջ է քաշել ՀՀ տարածքով անցնող, այսպես կոչված, միջանցքի հարցը: Ընդ որում, խոսքը հենց թուրքական պետությունների վերահսկողության տակ գտնվող, այսպես կոչված, սուվերեն ճանապարհի մասին է, որն ադրբեջանական քարոզչությունն արդեն կոչել է «Զանգեզուրի միջանցք»:

Թուրքիայի իշխանությունները հասկանում են, որ նման միջանցքը հնարավորություն է տալու առանց որևէ սահմանափակման գենդ-զինամթերք տրամադրել Ադրբեջանին և ազդեցիկ հարվածային ուժ ձևավորել այնտեղ, ինչը Թուրքիայի համար կարող է նաև լրացուցիչ փաստարկ դառնալ Իրանի և Ռուսաստանի հետ հարաբերություններում՝ իր շահն առաջ մղելու համար: Այլ կերպ ասած՝ նման միջանցքը Թուրքիայի և Ադրբեջանի համար ոչ միայն տնտեսական, կոմունիկացիոն և ռազմական, այլև աշխարհաքաղաքական նշանակություն ունի: Այդ է պատճառը, որ Թուրքիան, իբրև Հայաստանի հետ հարաբերությունները կարգավորելու նախապայման, հիմա էլ առաջ է քաշել հենց սուվերեն միջանցք տրամադրելու խնդիրը: Այս փաստը հայտնի դարձավ նոյեմբերի 11-ին: Այդ մասին ֆրանսիական «Լը Ֆիգարո» օրաթերթին տված հարցազրույցում ասել է ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը՝ ընդգծելով, որ «դա բացարձակապես չի կարող քննարկման առարկա լինել»:

Իհարկե, Թուրքիային և Ադրբեջանին ՀՀ տարածքով միջանցք տալու դեմ պայքարում է ոչ միայն հայկական կողմը: Այդ նախագծի թուրքական և ադրբեջանական ընկալումների դեմ են հանդես գալիս նաև Իրանը (պաշտոնական Թեհրանը շարունակ պնդում է, որ տարածաշրջանի քաղաքական քարտեզը չպետք է փոխվի) և Ռուսաստանը, թեև վերջինս դրա մասին բացահայտ հայտարարություններ չի անում: Ավելին, ըստ էության, թուրքական միջանցքի գաղափարը ոգևորությամբ չեն ընդունել նաև Արևմուտքում: Որքան էլ ԱՄՆ-ն և ԵՄ-ն հետաքրքրված լինեն դեպի հյուսիս Իրանի կոմունիկացիոն հնարավորությունների սահմանափակմամբ, և որքան էլ Թուրքիան շարունակի մնալ ԱՄՆ-ի կարևոր գործընկերը մեր տարածաշրջանում, այնուամենայնիվ, Վաշինգտոնում, Բրյուսելում և Եվրոպական այլ մայրաքաղաքներում լավ են հասկանում, որ Թուրքիայի չափից ավելի հզորացումն այդ երկիրը իրենց դաշնակցից վերածելու է հզոր մրցակցի, որի հետ դժվար կլինի գործընկերային հարաբերություններ պահպանել: Խնդիրն այն է, որ Թուրքիայի իշխանությունները, ոգևորվելով արցախյան վերջին

պատերազմում հաղթանակով, անտեսում են աշխարհաքաղաքական իրողությունները՝ այնպիսի կեցվածք ընդունելով, կարծես Արցախում հաղթել են ոչ միայն հայկական կողմին, այլև Իրանին, Ռուսաստանին ու ԱՄՆ-ին: Մինչդեռ դա, իհարկե, այդպես չէ և չէր էլ կարող այդպես լինել: Որքան էլ Թուրքիան կարևոր դերակատարություն ունեցավ Արցախի դեմ Ադրբեջանի վարած պատերազմում, այնուամենայնիվ, դա Անկարայի համար տարածաշրջանն ըստ իր ցանկության վերաձևելու բավարար ռեսուրս չի ապահովում: Ուստի կարելի է սպասել, որ այս ծրագրում ևս, ինչպես Սյունիքի մարզը գրավելու մտադրության դեպքում էր, Թուրքիայի իշխանությունները ստիպված կլինեն տեղի տալ և միջանցքի գաղափարը փոխարինել այլ լուծումներով:

Նման լուծում, ըստ ամենայնի, կարող է լինել, այսպես կոչված, Լաչինի միջանցքի մոդելը, այսինքն՝ ճանապարհի վերահսկումը ռուս սահմանապահների կողմից: Սա այն տարբերակն է, որին դեմ չի լինի ոչ միայն Մոսկվան, այլև Թեհրանը: Ի վերջո, Իրանի համար տարբերություն չկա, թե ՀՀ տարածքի կոնկրետ որ հատվածում կիրականացվի ռուսական վերահսկողություն: Մինչույն է, դա վաղուց գոյություն ունեցող փաստ է, որն իրանական կողմի համար մինչ օրս խնդրահարույց չի եղել: Բայց, Լաչինի միջանցքի մոդելն էլ իհարկե այն չէ, ինչը կարող է ընդունելի լինել Հայաստանի պետական շահի տեսանկյունից (միջանցքի գաղափարն ինքնին չի կարող ընդունելի լինել Հայաստանի համար), և ամենևին էլ այն չէ, ինչը ցանկանում են Թուրքիան և Ադրբեջանը: Ուստի այս խնդրի քննարկումները շարունակվում են: Նոյեմբերի 26-ին Մոսկվայում տեղի է ունեցել Հայաստանի, Ռուսաստանի և Ադրբեջանի դեկլարանտների հերթական հանդիպումը, որից երկու օր անց՝ նոյեմբերի 28-ին, Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը Աշխաբադում հայտարարել է, թե իբր «Զանգեզուրի միջանցքն իրականություն է դառնում»: Իհարկե, Ալիևի այդ խոսքերին հավատալու որևէ հիմք չկա, մանավանդ եթե հաշվի առնենք այն փաստը, որ Մոսկի հանդիպումից հետո նման որոշման մասին որևէ հայտարարություն չի եղել: Այնտեղ Պուտինը, Փաշինյանը և Ալիևը խոսել են ոչ թե միջանցքի, այլ տրանսպորտային կոմունիկացիաներն ապաշրջափակելու իրենց պատրաստակամության մասին, որը նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության դրույթներից մեկն է: Ճիշտ է՝ ՌԴ նախագահը գործածել է նաև «միջանցքներ» բառը (հոգնակի), բայց այն վերաբերում էր տարածաշրջանի երկաթուղային և ավտոմոբիլային ճանապարհներին:

Պետք է գիտակցել, սակայն, որ Նախիջևանի և Թուրքիայի հետ կապի ինչ հնարավորություն էլ Ադրբեջանը ստանա, մինչույն է, Ալիևն ու Էրդողանը դա կոչելու են «Զանգեզուրի միջանցք»: Նրանց խնդիրը շատ պարզ է. նրանք գիտակցում են, որ ՀՀ Սյունիքի մարզով անցնող ցանկացած ճանապարհ, որը կարող են օգտագործել թուրքական երկու պետությունների կապն ապահովելու համար, հետագայում Թուրքիային և Ադրբեջանին հնարավորություն է տալու մշտապես

ճնշում գործադրելու Հայաստանի վրա: Ադրբեջանն այդ ճանապարհին ապագայում կկոչի «կյանքի ճանապարհ» կամ նման մի բան և ինքն իրեն իրավունք կվերապահի անհրաժեշտության դեպքում պաշտպանելու այն: Կարևոր մյուս հանգամանքն այն է, որ, այսպես կոչված, միջանցքը թուրք-ադրբեջանական դաշինքի համար առավելապես ոչ թե տնտեսական, այլ հենց ազգային նշանակություն ունի: Հակառակ պարագայում Բաքվի և Անկարայի համար ավելի շահեկան կլինե՞ր օգտվել ՀՀ հյուսիսարևելյան շրջաններում դեռևս խորհրդային տարիներից գոյություն ունեցող երկաթուղուց և ավտոմոբիլային ճանապարհներից: Բայց նրանք նախընտրում են հենց Սյունիքը, որովհետև, բացի ՀՀ հարավը հետագայում թուրքականացնելու նպատակից, դրանով նրանք լուծում են ևս մեկ խնդիր՝ Քաշաթաղի և Քարվաճառի յուրացումը: Թշնամին լավ է հասկանում, որ ՀՀ Սյունիքի մարզից Քաշաթաղի շրջան մտնող ճանապարհը կնպաստի նաև Քաշաթաղի տնտեսական զարգացմանը:

Չորրորդը: Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևն առիթը բաց չի թողնում պնդելու, որ դարաբաղյան հակամարտություն այլևս գոյություն չունի, և իրենք այդ խնդիրն արդեն լուծել են: Տարբեր երկրներ շարունակ շնորհավորում են Ադրբեջանին «տարածքային ամբողջականությունը» վերականգնելու առթիվ, խոսում այն մասին, որ տարածաշրջանը վերջապես կթևակոխի խաղաղության դարաշրջան (ի դեպ, այս թեզի դրոշակակիրը ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն է) և այլն, և այլն: Եվ այս ամենը՝ ՀՀ իշխանությունների գրեթե բացարձակ լռության պայմաններում: Նույնիսկ ԵԱՀԿ ՄԻՄ համանախագահ երկրների, առավելապես ԱՄՆ-ի ու Ֆրանսիայի հայտարարություններն այն մասին, որ Արցախի հակամարտությունը չի կարելի լուծված համարել, որ հայկական երկրորդ պետության կարգավիճակը դեռևս որոշված չէ, և անհրաժեշտ է վերսկսել բանակցությունները, ամբողջ տարվա ընթացքում պաշտոնական Երևանի կողմից գրեթե անարձագանք մնացին: ՀՀ իշխանությունները դադարել են այցելել Արցախ, և ընդհանրապես ադրբեջանա-արցախյան հակամարտության կարգավորման խընդիրը դուրս է եկել տարածաշրջանի քաղաքական օրակարգից: Նույնիսկ Սոչիի հիշատակված եռակողմ հանդիպման ընթացքում ընդունված հայտարարության մեջ Արցախի մասին ոչ մի բառ չի նշվում: Փոխարենը Հայաստանը, Ադրբեջանը, Ռուսաստանը և տարածաշրջանում շահ հետապնդող այլ պետություններ ակտիվորեն քննարկում են Սյունիքի մարզում Ադրբեջանի զինված ուժերի գործողությունները և դրանց հետևանքով ստեղծված լարվածության հնարավոր հանգուցալուծումը: Այսինքն՝ Արցախի խնդիրը փոխարինվել է Սյունիքի խնդրով, և այն դարձել է մեր տարածաշրջանի աշխարհաքաղաքական հիմնական խնդիրը:

Իրականությունն այն է, որ Ադրբեջանի իշխանությունները, մշտական լարվածություն ապահովելով Սյունիքում, փորձում են ստիպել պաշտոնա-

կան Երևանին ճանաչել Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը և այլևս չվիճարկել Արցախի պատկանելիության հարցը: Ահա այս խնդիրը լուծելու ճանապարհին թուրք-ադրբեջանական դաշինքը հայ-ադրբեջանական հարաբերություններում առաջ է բերել ևս մեկ տարր՝ հինգերորդը, որն է Հայաստանի և Ադրբեջանի սահմանագծման և սահմանազատման անհրաժեշտությունը: Ըստ ամենայնի, ս.թ. նոյեմբերի 26-ին Սոչիում կայացած Պուտին-Փաշինյան-Ալիև եռակողմ հանդիպման ընթացքում այս խնդիրն արդեն ստացել է իր լուծումը: Համենայնդեպս, ՌԴ նախագահն իր ամփոփիչ խոսքում հայտարարել է, որ երեք երկրների փոխվարչապետները մինչ այս տարվա վերջ սահմանագծման և սահմանազատման աշխատանքներ իրականացնելու մեխանիզմներ կմշակեն: Վ. Պուտինը հայտարարել է նաև, որ այդ գործի համար որևէ խոչընդոտ չի տեսնում:

Հայ-ադրբեջանական հարաբերություններում ի հայտ եկած նշված բոլոր նոր տարրերը կարելի է դասավորել ըստ ընթերցողի հարմարության: Հասկանալի է, որ այս հարցում Հայաստանի համար առաջնային և երկրորդական խնդիրներ չկան: Բոլորն էլ վերաբերում են մեր անվտանգությանը, կենսական շահերին և, ըստ այդմ, շատ կարևոր են: Իսկ ամենատհաճն այն է, որ նշված տարրերից և ոչ մեկը որևէ կերպ չի համապատասխանում հայկական երկու պետությունների շահերին: Այսինքն՝ ծավալվող բոլոր քննարկումները, բանակցությունները և հատկապես «գետնի վրա» ընթացող զարգացումները միայն ու միայն վնասում են Հայաստանի և Արցախի պետականություններին: Սա շարունակական պարտության մի ընթացք է, որը կասեցնելու ոչ մի հնարավորություն անցնող տարում հայկական կողմին չի տրվել: Իհարկե, դա մեծապես պայմանավորված է այն հանգամանքով, որ պատերազմում ջախջախիչ պարտություն կրելուց հետո էլ հայ ժողովուրդը երկրի կառավարման ղեկը կրկին վստահեց Նիկոլ Փաշինյանին ու նրա թիմակիցներին: 2021 թ. հունիսի 20-ին Հայաստանում տեղի ունեցած արտահերթ խորհրդարանական ընտրությունների արդյունքներն իսկական աղետ դարձան հայկական պետությունների համար: Այդ օրը, ըստ էության, ոչնչացան Հայաստանի պարտության ընթացքը կասեցնելու վերջին հույսերը, որից հետո հայկական պետությունը, ցավոք, նաև ժողովուրդը վերջնականապես կորցրին սեփական ճակատագիրը տնօրինելու և իրավիճակը փրկելու վերջին հնարավորությունները: Միջազգային հանրությունն արձանագրեց, որ հայ ժողովուրդը համաձայն է դեպքերի զարգացման նման տրամաբանությանը և շարունակում է առաջ ընթանալ հենց այդ ուղով: Դրա հետևանքով Հայաստանի և Արցախի համար դրական և բացասական բոլոր զարգացումներն այսուհետև պայմանավորվելու են բացառապես արտաքին խաղացողների գործողություններով: Եվ դա կշարունակվի այնքան ժամանակ, քանի դեռ հայ էլիտաներն ու ժողովուրդը չեն որոշի փոխել դավաճան իշխանություններին և վերջապես տեղ կանգնել սեփական պետությանը: ■

Սյունիքի աշխարհաքաղաքական տեղն ու դերը պանթուրանական ծրագրի իրագործումը կասեցնելու գործընթացում

Գագիկ Եկմալյան

ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի, բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանող: Սույն ուսումնասիրության համար Գագիկ Եկմալյանը արժանացել է ՀՅԴ Բյուրոյի երիտասարդական գրասենյակի «Դեպի Սյունիք» ծրագրի մրցանակի

Հայաստանի ողնաշարը հանդիսացող Սյունիքը աշխարհաքաղաքական գործընթացների կիզակետում է եղել դեռևս Առաջին հանրապետության շրջանում, երբ թուրքերը ձգտում էին գրավելու մերձկասպյան շրջանները՝ իրենց թիրախում ունենալով Բաքվի նավթահորերը:

Սակայն որպեսզի հասկանանք Սյունիքի կարևորությունը, նախ հակիրճ խոսենք այն մասին, թե ինչ գործընթացներ են ծավալվում տարածաշրջանում:

Հայկական բարձրավանդակի տարածաշրջանը գրեթե բոլոր ժամանակներում եղել է համաշխարհային ուժային կենտրոնների շահերի բախման գոտի: Այստեղով են անցնում «հյուսիս-հարավ» և «արևելք-արևմուտք» պայմանական ճանապարհները, որոնք իրար են կապում Արևելյան Ասիայից մինչև Եվրոպա, Հնդկաստանից, Արաբական թերակղզուց ու Իրանից մինչև Արևելյան Հյուսիսային ծով ընկած շրջանները: Այսօր դրանք ստացել են «Մետաքսի մեծ ճանապարհ¹» և «Միջազգային հյուսիս-հարավ հաղորդակցային միջանցք²» անվանումները:

Աշխարհի միաբնեռ համակարգի փլուզմանը և նոր աշխարհակարգի ձևավորմանը զուգընթաց՝ համաշխարհային պետություններն իրենց շահերը տարածաշրջանում առաջ են մղում միջնորդավորված կերպով, որտեղ Արևմուտքի ֆորպոստի դերում հանդես է գալիս Թուրքիան: Ահա թե ինչու թուրքական քաղաքականության էությունն ու գործընթացների լրջությունը պետք է առաջին հերթին դիտարկել այս համատեքստում: Անհրաժեշտ է գիտակցել, որ պանթուրքիստական այն քաղաքականությունը, որ վարում է Էրդոհանի վարչակարգը, ամբողջովին տեղավորվում է Արևմուտքի շահերի տիրույթում³:

Ինչ է պանթուրքիզմը, և ինչ նպատակներ է այն հետապնդում:

Օսմանյան կայսրության թուլացմանը զուգընթաց՝ 19-րդ դարում, սկսեց ձևավորվել պանթուրանական գաղափարախոսությունը, որն ուղղված էր թյուրքալեզու ժողովուրդների համախմբմանը մեկ պետության՝ Մեծ Թուրանի ներքո: Այն նախատեսում էր միավորել Օսմանյան կայսրությունն ու Ռուսական կայսրության, Իրանի, Չինաստանի և Աֆղանստանի թյուրքախոս հատվածները⁴:

Պանթուրքիզմը գաղափարական, քաղաքական և մշակութային շարժում է, որն ուղղված է թյուրքական բոլոր ժողովուրդների միավորմանը, ընդհուպ մինչև թյուրքական պետությունների ֆեդերացիա ստեղծելուն՝ հիմնված ազգային ինքնության վրա:



Պանթուրքիզմը 1918-1920 թթ.

Առաջին աշխարհամարտի ընթացքում Օսմանյան Թուրքիան փորձեց լուծել իր առջև դրված խնդիրները՝ իրականացնելով հայության աննախադեպ ցեղասպանություն և հայրենագրվում հայերի հայրենիք Հայաստանի արևմտյան մասում, որն այսօր հորջորջվում է *Արևելյան Ասսարոյիա*⁵: Պատերազմից Ռուսական կայսրության՝ դուրս գալուց հետո մեր տարածաշրջանում Թուրքիան որոշ ժամանակ դարձավ գլխավոր գործող ուժը և փորձեց հնարավոր առավելագույնը պոկել նոր անկախացած Անդրկովկասից⁶: Տրապիզոնի բանակցությունների ընթացքում Վեհիբ փաշան ասում է, որ պետք է իր առաջխաղացումը շարունակի այնքան, մինչև որ հանդիպի ռուսական զորքերի: Անդրկովկասում այդ պահին ռուսական զորքեր չկային, պարզ է, որ թուրքերը մտադրվել էին հասնել առնվազն մինչև Հյուսիսային Կովկաս: Այդ մասին Ա. Խաչատրյանը գրում է. «Բայց թուրք դիւանագետներին ու ռազմավարներին ոգևորողն այս պարագային միայն երկրակալական անյազ ձգտումը չէր, այլ նոյնպէս ամէնուն յայտնի համախալանական ու համաթրքական շողշողուն հեռապատկերի իրականացման հնարատրոթիւնը»⁷:

Հետագայում արդեն Հարավային Կովկասի շեյխուլ-իսլամ Ախունդ մուլլա Մուհամմեդ Փիշնամազգադեն Տրապիզոնում օսմանյան պատվիրակության նախագահին ուղղված նամակում գրում է. «Մեր ազգը (կովկասյան թաթարներ – Գ. Պ.) միայն մեկ


ցանկություն ունի, այն է՝ միավորվել մեր մեծ եղբայր Օսմանյան Բարձր պետության հետ և հնարավորինս շուտ Անդրկովկասում (Հարավային Կովկաս) հյուրընկալել օսմանյան բանակին»⁸: Իսկ արդեն 1918 թ. մայիսի 7-ին՝ թուրքական շոգենավի վրա ճաշկերույթի ժամանակ, երիտթուրքական կենտրոնական կոմիտեի անդամներից դոկտոր Բեհաեդդին Շաքիրը, դիմելով հայ պատվիրակներին, ասել է. «Հայերը կանգնած են մեր համախալամական և համաթրքական սրբազան իտեղներու իրականացման ճամբուն վրայ, և մենք անխուսափելիորեն կը բախուի՞նք անոնց հետ: Ատիկա վեր է և դուրս է մեր անձնական զգացումներէն ու տրամադրութիւններէն: Մենք հարկադրուած ենք տարերայնօրէն ոչնչացնել մեր ճամբուն վրայէն այն ամէնը, ինչ որ արգելք կը հանդիսանայ մեր ազգային սրբազան իտեղներուն... մենք կը հասկնանք կենդանի մարմնի կեանքը, և անոր մէջ չկայ մարդասիրութիւն կամ կամքի տկարութիւն»⁹: Բերված օրինակները ցույց են տալիս, որ նպատակ էր դրված միավորելու Անդրկովկասի արևելյան շրջանները Օսմանյան Թուրքիայի հետ, գրավելու Բաքուն, տիրանալու Բաքվի նավթին և հաղթարշավը շարունակելու դեպի Միջին Ասիա: Այս նպատակի իրականացման համար Անդրկովկասը թուրքերի ջանքերով պառակտվեց, և Թուրքիայի անմիջական հովանավորությամբ ստեղծվեց «Արևելակովկասյան մուսուլմանական հանրապետությունը» Ադրբեջանը: Կովկասում Ադրբեջան կոչվող միավոր երբեք չէր եղել: Իրական Ադրբեջանը, այն է՝ պատմական Ատրպատականը, գտնվում է Իրանի հյուսիսում: Թուրքերը այս անունով պետության ստեղծումով նպատակ էին դրել հետագայում միավորելու երկու Ադրբեջանները և միացնելու իրենց տիրապետությանը: Ահա թե ինչու էր Իրանն այդ ժամանակ պաշտոնական բողոքի նոտա հղել Թուրքիային՝ խոր գարմանք արտահայտելով Ադրբեջան անունով պետության ստեղծման կապակցությամբ և պահանջելով վերանայել որոշումը¹⁰: Թուրքերը ոչ միայն չվերանայեցին որոշումը, այլև 1918 թ. սեպտեմբերի 15-ին գրավեցին Բաքուն, որը մինչ այդ գտնվում էր հայկական խորհրդային ուժերի իշխանության ներքո՝ Ստեփան Շահումյանի գլխավորությամբ¹¹: Այդ փուլում ավելին անել Թուրքիան չկարողացավ, քանզի արդեն նոյեմբերի 11-ի Կոմայիենի զինադադարով աշխարհամարտը ավարտվեց, իսկ Թուրքիայի դաշնակից Գերմանիան (Քառյակ դաշինքի վերջին մասնակիցը) պարտվեց: Դրանով ավարտվեց թուրքական աշխարհակալական նկրտումների այդ փուլը:

Հայաստանը հնարավորություն ստացավ կայունանալու և ամրապնդվելու: Սակայն հարկ է նշել, որ, Բաքուն գրավելով անգամ, թուրքերը չեն կարողացել վերցնել Սյունիք-Ջանգեզուրը, իսկ իրենց զորքերը տեղափոխել էին Նախիջևանի երկաթուղով Իրանի տարածքով, որը հետո ռազմակալվել էր անգլիացիների կողմից: Նրանց անհրաժեշտ էր Նախիջևանից Սյունիքով կապվել իրենց զորամիավորումների հետ: Այդ պայմաններում Սյունիք

է գալիս զորավար Անդրանիկը, ով ստանձնում է երկրամասի պաշտպանությունը: Հուլիսին Անդրանիկը թուրքերից մաքրում է Գորիս-Միսիան ճանապարհը, տեղի թուրքաբնակ գյուղերը (Աղուղի, Վաղուղի) ևն: Անդրանիկը, սակայն, ըստ պատմաբան Ռիչարդ Հովհաննիսյանի, վճռականորեն չէր գործում՝ ըստ երևույթին սպասելով դաշնակից զորքերի հաղթանակին ու հաշտության կոնֆերանսին:

1920 թ. ապրիլին Ադրբեջանի, իսկ դեկտեմբերին Հայաստանի խորհրդայնացումով իրավիճակը փոխվեց: Թուրք-հայկական պատերազմից հետո Հայաստանը խորհրդայնացվեց թուլացած վիճակում: Թուրքիայում իրեն իշխանություն հռչակած Մուստաֆա Քեմալ Աթաթուրքը ճարակորեն օգտվեց իրավիճակից՝ օգտագործելով Խորհրդային Ռուսաստանի ուժերը: Թուրքիայի անմիջական օգնությամբ Ադրբեջանը բռնազավթեց Նախիջևանն ու Արցախը: Տվյալ պահին տարածաշրջանում միակ չխորհրդայնացած երկրամասը, որը պայքարում էր նաև թուրք զավթիչների դեմ, Ջանգեզուրն էր: Այնտեղ ինքնապաշտպանական փառահեղ մարտերը գլխավորում էր Գարեգին Նժդեհը: Նա Սյունիք էր եկել դեռևս 1919 թ. հունիսին: Նժդեհը կարողացավ համախմբել տեղի հայությանը, բարձրացնել ժողովրդի ինքնապաշտպանական ոգին, հմտորեն ղեկավարել մարտերը: Նրա ջանքերի շնորհիվ Սյունիքը չարժանացավ Նախիջևանի և Արցախի ճակատագրին: Սյունիքի կարևորությունը Նժդեհը գիտակցել է և գրել. «Ոչ մի տեղ առանց Սյունիքի ու Արցախի: Առանց աշխարհագրական Հայաստանի այդ հզոր ողնաշարի մեր ամբողջական հայրենիքը գոյություն ունենալ չի կարող»¹²:

Ահա այդ ծանր շրջանում էր, որ թշնամին չկարողացավ գրավել Սյունիքը, անխափան կապ ապահովել Նախիջևանի և Ադրբեջանի միջև, ինչը կործանարար հետևանքներ կունենար ոչ միայն հայության, այլև գուցե տարածաշրջանի ժողովուրդների համար: Այս ընթացքում կարևորագույն հարցը, որ լուծեց Թուրքիան, Ադրբեջան պետության ստեղծումն էր, որը դարձավ պան-



Թուրքական պետությունների կազմակերպության դրոշը

թյուրքիզմի հենարանը տարածաշրջանում¹³:

Պանթյուրքիզմը վերադառնում է

Թուրքիայում պանթյուրքիզմի վերածնունդը որպես նոր համաթյուրքականություն սկսվեց Թուրքիայի՝ Եվրամիությանն անդամակցելու արտաքաղաքական առաջնահերթության տապալման հետևանքով: Երկրի ներսում քրդական լրջագույն հարցի սրումն էլ ստիպեց թյուրքական իշխանություններին նոր քաղաքականություն մշակել, նոր գաղափարախոսությամբ միավորել երկիրը: Այդ գործընթացների գաղափարական հիմքը նեոսուննիզմի ոչ պաշտոնական արտաքին քաղաքական դոկտրինն էր, որը գիտականորեն և տեխնիկապես զարգացրել էր նախկին արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուն իր «Ռազմավարական խորություն. Թուրքիայի միջազգային դիրքը» աշխատության մեջ, թեև նեոսուննիզմի նշանները սկսել էին նկատվել դեռևս Թուրքոյթ Օզալի և Աբդուլլահ Գյուլի կառավարման ժամանակներից¹⁴:

Բացի նեոսուննիզմից՝ Թուրքիայում տարածվեցին այլ գաղափարախոսություններ ևս, մասնավորապես՝ նեոպանթյուրքիզմն ու թյուրքական եվրասիականությունը: Այդ դոկտրինների հիմքը պանթյուրքիզմն էր, որը համընկավ երկրի ծավալապաշտական նկրտումներին, աշխարհաքաղաքական խաղացողների շահերին:

Դեռևս 1990-ականների վերջին ԱՄՆ-ում մշակվել էր «Մեծ Մերձավոր Արևելք» նախագիծը, որը նախատեսում էր միավորել Մադրեբից մինչև Պակիստան ընկած տարածքները¹⁵: Իրադրությունը բարենպաստ էր, քանի որ Խորհրդային Միության փլուզումով Միացյալ Նահանգները համաշխարհային միաբևեռ առաջնորդի դեր էր ստանձնել, և տարածաշրջանում ուժային վակուումը անհրաժեշտ էր անմիջապես լցնել: Այդ ծրագրի իրականացման համար հարմար գործիք ու հարթակ կարող էր ծառայել պանթյուրքիզմը: Իսկ Թուրքիայի ակտիվ մասնակցությունը Ադրբեջանի համար հաղթական արցախյան պատերազմին ակնհայտ ապացույցը դարձավ այն բանի, որ Անկարայի արտաքին քաղաքականության դոկտրինների հիմքում իսկապես ընկած են երկու գաղափարախոսություններ՝ նորոսուննականությունը և նոր համաթյուրքականությունը: Երկու գաղափարախոսությունների նպատակների վերջնարդյունքը նույնն է՝ «Մեծ Թուրքիայի» ստեղծումը, իսկ ոմանք պնդում են, որ Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը գործնականում վարում է այդ երկու ուղղությունների սինթետիկ քաղաքականություն¹⁶: Նրա պատերազմները Իրաքում, Սիրիայում և Լիբիայում, Հունաստանի հետ ռազմական հակամարտություն հրահրելու փորձերը ներկայացվում են որպես նեոսուննիզմի դրսևորում, այսինքն՝ նախկին Օսմանյան կայսրության սահմաններում Անկարայի ազդեցության



Պանթյուրքիզմի քարտեզը

վերականգնում:

Կիպրոս ներխուժումից մինչև արցախյան վերջին պատերազմը թյուրքական բոլոր գործողությունները կարելի է համարել նոր պանթյուրքիզմի դոկտրինի հաջող կիրառման արդյունք:

Թուրքական հետդարձ

Դեռևս Հեյդար Ալիևի օրոք Ադրբեջանում սկսեց կիրառվել «Մեկ ազգ, երկու պետություն» կարգախոսը, որը թյուրքական փափուկ ուժի արդյունքն էր: Դժվար չէ կոսահել, որ նույն ազգի երկու պետությունները ձգտում են առնվազն ընդհանուր սահմաններ ունենալու, ինչի սկիզբը դրվեց Կարսի պայմանագրով, երբ Նախիջևանը բռնակցվեց Ադրբեջանին: Ապա նաև Ադրբեջանի կազմում ձևավորվեց ԼՂԻՄ կոչվող վարչատարածքային միավորը: Այդ շրջանում, ինչպես նշեցինք, Անդրանիկի, ապա Նժդեհի հերոսական գործողությունների շնորհիվ Մյունիքը պոկել հնարավոր չեղավ, իսկ արցախյան պատերազմի առաջին շրջանում (1990-1994 թթ.) ազատագրելով Լեռնային ու Դաշտային Ղարաբաղի մեծ մասը՝ մենք մեծացրինք հայկական ոսկորը, որը մնացել էր երկու պետությունների կոկորդոմ: Մեր հաղթանակն այդ ընթացքում կարելի է պայմանավորել նաև աշխարհաքաղաքական գործոնով, քանզի Խորհրդային Միության փլուզումից հետո ձևավորված Ռուսաստանի Դաշնությունը կրիտիկական սպառնալիք չէր ներկայացնում Արևմուտքի համար:

Իրավիճակը գնալով փոխվեց, և ռուսական սպառնալիքին դիմակայելու և «Ռուսաստանին զսպելու» համար դարձյալ ակտիվացվեց համաթյուրքական գործիքը: Թուրքիան իր հայացքը հառեց դեպի Արևելք: Դա կարելի է պայմանավորել տնտեսական, ռազմաքաղաքական և էթնիկ-կրոնական գործոններով:

Տնտեսական առումով Թուրքիան նպատակ ունի թուրքմենական և դազախական գազերը Կասպից ծովից Ադրբեջանով, Մեղրիով, ապա Նախիջևանով, իր տարածքով դեպի Եվրոպա տարանցելու: Նշված ուղղությունը ամենակարճ և հարմար տարբերակն է:

Ռազմաքաղաքական առումով վերոնշյալը տեղա-

վորվում է թուրքական իմպերիալիզմի, Ռուսաստանին զսպելու Արևմուտքի քաղաքականությունների տիրույթում:

Էթնիկական առումով այն ուրվագծում է Թուրքիայի և թյուրքական ժողովուրդների ապագան: Դուրս մնալով Եվրոպայից՝ Թուրքիան ձգտում է միավորվելու թյուրքալեզու այլ պետությունների հետ և ծավալվելու արևելքում: Արևելք գնալու համար Թուրքիան օգտագործում է բոլոր հնարավոր միջոցները: Առաջին միջոցը Վրաստանն է, որտեղ թուրքական տնտեսական էքսպանսիայի հետևանքով Աջարիան ամբողջությամբ հայտնվել է Թուրքիայի ազդեցության ոլորտում: Հայ-վրացական սահմանին ինտենսիվորեն հիմնվում են ադրբեջանական բնակավայրեր, որտեղ ադրբեջանցիներին տրվում են բնակարաններ, աշխատատեղեր: Փորձ է արվում հյուսիսից շրջափակել Հայաստանը, իսկ հնարավորության և անհրաժեշտության դեպքում՝ այդ շրջաններով ապահովելու երկու պետությունների կապը: Նախագիծը էթնիկական, տնտեսական և գաղափարական առումներով հաջողվում է: Այն ապագայում կարող է քաղաքական «դե յուրե» գրանցում ստանալ:

Հաջորդը Իրանի հյուսիսային շրջաններով անցումն է դեպի Ադրբեջան, ինչը դեռևս Առաջին աշխարհամարտի ընթացքում ապահովվել էր Նախիջևանի երկաթուղու միջոցով:

Իրանական Ատրպատականի տարածքում բնակվում են շուրջ 20 մլն էթնիկ ադրբեջանցիներ, որոնք ցանկացած պահի կարող են օգտագործվել Իրանի պառակտման համար¹⁷: Այս ուղղությամբ թեև տնտեսական, քաղաքական հիմքեր դեռևս չկան, բայց էթնիկ մեծաթիվ համայնքը կարող է ապագայում վճռական դեր խաղալ:

Վերջին միջոցը Հայաստանն է, առավել ստույգ՝ Սյունիքի մարզը: Քարտեզին նայելիս անգամ կարելի է հասկանալ իրադրությունը: ՀՀ տարածքի ամենաձգված, ամենանեղ, հաղորդակցության առումով ամենախոցելի հատվածը Սյունիքն է: Դա այս պահին ամենահարմար տարբերակն է՝ ճեղքելու հայկական ոսկորը և միավորվելու: Իրավիճակը, ցավոք, սրվել է 44-օրյա պատերազմից հետո:

Կովկասից ճանապարհ է բացվում դեպի Կասպից ծով, Պովոլժիե և Կենտրոնական Ասիայի պետություններ: Ճեղքելով Սյունիքը՝ Թուրքիան անմիջապես կհայտնվի Կենտրոնական Ասիայում, կձգտի ակտիվացնել Չինաստանի Սին-Ցզյան նահանգում ապրող տարբեր հաշվարկներով 20-50 մլն ույղուրական (թյուրքալեզու) համայնքը: Դա Չինաստանին զսպելու հավանական և իրագործելի ուղի է, որի համար Թուրքիան անպայմանորեն ունի Արևմուտքի հավանությունը:

Թուրքական եվրասիականությունը և Հայաստանը

1990-ականների սկզբին թուրքական եվրասիականության առաջին դրսևորումը հակառուսական ու

արևմտամետ էր: Երկրորդը, որը կարելի է ասացնել նախկին արտոգործախարար Իսմայիլ Ջեմի (1997-2002 թթ.) հետ, Թուրքիայի ձգտումն էր՝ գտնելու իր դերը Մառը պատերազմի ավարտից հետո ստեղծված աշխարհաքաղաքական իրականության մեջ¹⁸: Երրորդ և ընթացիկ դրսևորումը նույնպես սկիզբ է առնում 2000-ականների սկզբին և կրում է հակաարևմտյան գաղափարական դիրքորոշման որոշ տարրեր: Խորհրդային Միության փլուզումից հետո Թուրքիան հասկացավ, որ Կենտրոնական Ասիայում պոտենցիալ ազդեցության գոտի է ձևավորվել: Արևմուտքի կողմից հովանավորվող եվրասիականությունն այդ շրջանում նշանակում էր, որ Թուրքիան կարող էր առաջատար դեր խաղալ Կենտրոնական Ասիայի և Կովկասի նոր անկախ պետությունների գործերում: Հետևաբար դա նույնպես հիմնված էր Ռուսաստանի հետ մրցակցային օրակարգի վրա: Մակայն, չնայած այդ դարակազմիկ զարգացման առավելություններից օգտվելու իր վաղ ցանկությանը, Թուրքիան չկարողացավ առաջատար դեր ստանձնել Կենտրոնական Ասիայում:

Արցախյան երկրորդ պատերազմում Ադրբեջանի հաղթանակը (որը մեծ մասամբ հնարավոր դարձավ Թուրքիայի անմիջական աջակցության շնորհիվ) ոգեշնչել է Անկարային՝ մեր տարածաշրջանում և Կենտրոնական Ասիայում ավելի մեծ դերի ձգտելու: Դրա իրականացման դեպքում, ԱՖղանստանում ԱՄՆ-ի հեռանալուց հետո իրադարձությունների զարգացմանը Թուրքիայի մասնակցության ձգտումը կարող է հանգեցնել նաև տարածաշրջանում ավելի մեծ դեր խաղալու ցանկության: Այդ նպատակով Անկարան, հավանաբար, թուրք ժողովուրդների հետ ավելի սերտ հարաբերություններ հաստատելու ուղիներ կփնտրի այնտեղ, ինչը կարող է ակտիվացնել թյուրքական աշխարհի գաղափարը՝ որպես Թուրքիայի արտաքին քաղաքականության ինտելեկտուալ, գաղափարական և քաղաքական շարժիչներից մեկը:


Յուսուֆ Աքչուրան, ով Ռուսաստանում է ծնվել և թուրքական ազգայնականության գաղափարախոսն է, այս սցենարը կանխատեսել էր ավելի քան մեկ դար առաջ: Նա պնդում էր, որ օսմանյան վերնախավը պետք է կենտրոնանա թուրքական ազգայնականության և պանթյուրքիզմի վրա, որպեսզի հետ շրջի կայսրության ճակատագիրը¹⁹: Խորհելով կայսերական համաշխարհային կարգի շրջանակներում թյուրքական աշխարհի նման քաղաքականության իրականացման մասին՝ Աքչուրան պնդում էր, որ Ռուսաստանը կլինի հիմնական խոչընդոտն ու հակառակորդը, մինչդեռ Արևմուտքը հավանաբար կաջակցի այդ քաղաքականությանը այն հիմքով, որ այն կթուլացնի Ռուսական կայսրությունը, որն իշխում է հսկայական թուրք բնակչության վրա: Այն, ինչ ճշմարիտ էր այն ժամանակ, արդիական է նաև այսօր: Եթե աշխարհաքաղաքական եվրասիականությունն ու թյուրքական աշխարհի գաղափարը հաղթեն Անկարայի արտաքին քաղաքականության մեջ, առաջին գոհն անխուսափելիորեն կդառնա գաղափարական եվրասիականությունը, որը փորձում է Թուրքիային

մերձեցնել Ռուսաստանի և Չինաստանի հետ՝ ի հեճուկս Արևմուտքի: Այն, ըստ երևույթին, փորձ է կատարում ռուսական եվրասիականության հետ համադրելու թուրքական շահերը և խուսանավելու Արևմուտքի և Արևելքի խաղացողների միջև: Այս քաղաքականության վառ դրսևորումներից են ռուսական «S-400» հակաօդային պաշտպանության համակարգի գնումները, ռուսների հետ համագործակցությունը Սիրիայում, Անդրկովկասում (պատերազմից հետո ռուս-թուրքական համատեղ վերահսկողության կենտրոնի ստեղծումը) և: Այս տեսանկյունից կարելի է բացատրել նաև Պեկինի լռությունը արցախյան պատերազմի օրերին՝ ենթադրելով հնարավոր Անկարա-Մոսկվա-Պեկին առանցքի ուրվագծման մասին: Պեկինը կարող է շահագրգռված լինել այս հարցում, որպեսզի կարողանա չեզոքացնել թուրքական վտանգը ուղղորակյալ հարցի առումով:

Այժմ, երբ առավել պարզեցվեց թուրքական եվրասիականությունը, կարելի է պնդել, որ այն, որոշ փոփոխություններով, առաջ է տանում նորպանությունից գաղափարները և նույնպես վտանգավոր է մեզ համար, որքան նորպանությունը:

Պանթյուրքիզմը, Իրանը և Սյունիքը

Վերջին շրջանում սեղմվում է օղակը Իրանի շուրջ: Իրանի արտաքին գործերի նախարար Հոսեյն Ամիր Աբդոլլահիանը հայտարարել է, որ Թեհրանը Մոսկվայից արձագանք է ակնկալում Հարավային Կովկասում «սիոնիստների և ահաբեկիչների» ներկայությանը: Այս մասին իրանական դիվանագիտության ղեկավարն ասել է հոկտեմբերի 5-ի երեկոյան իրանական «IRNA» լրատվամիջոցին²⁰: Ինդիքն այն է, որ 44-օրյա պատերազմի ընթացքում Ադրբեջանը Թուրքիայի միջոցով ահաբեկիչներ բերեց տարածաշրջան, որպեսզի կարողանա բեկում մտցնել պատերազմում: Այդ տեղեկությունը հաստատվել էր բազմաթիվ աղբյուրների՝ Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի, Պենտագոնի, սիրիական հետախուզության, ՌԴ արտաքին հետախուզության ծառայության տնօրեն Սերգեյ Նարիշկինի կողմից²¹: Պատերազմից հետո, իհարկե, ահաբեկիչները չբեցին տարածաշրջանը, այլ խուսակցություններ սկսվեցին, որ ադրբեջանական իշխանությունները փորձում են նրանց բնակեցնել Արցախից օկուպացված տարածքներում: Իրանն իր անհանգստությունը հայտնեց այդ դեպքերի առնչությամբ: Հայաստանում Իրանի արտակարգ և լիազոր դեսպան Աբբաս Բադախշան Զոհուրին ԵՊՀ իրանագիտության ամբիոնում պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ուսանողների հետ հանդիպման ժամանակ, ի թիվս այլ անկյունաքարային հարցերի, նշեց նաև, որ Իրանի համար չափազանց կարևոր են Արցախից գրավյալ տարածքներում ահաբեկիչների՝



Սյունիքը ՀՀ քարտեզի վրա

ճամբարներ ստեղծելու և բնակություն հաստատելու հանգամանքները: Նա հատուկ ընդգծեց, որ եթե Իրանի կողմից նման դեպքերը հավաստանշվեն և փաստարկվեն, ապա, առանց Բաքվին և Անկարային տեղյակ պահելու և զգուշացնելու, Թեհրանը կդիմի համապատասխան գործողությունների²²: Սա նշանակում է, որ Իրանը շրջափակվում է թշնամու կողմից: Այս պարագայում Իրանը փորձում է լողալ, և իր միակ հնարավորությունը այս ուղղությամբ Սյունիքի (Մեղրիի) միջոցով անխափան կապ ապահովելն է դեպի Եվրոպա և Ռուսաստան: Այսպես՝ Հայաստանի հետ 42 կմ-անոց ճանապարհը «պաշարված ամրոց» Իրանի համար այլընտրանքային ելք է դեպի Եվրոպա Վրաստանով և Սև ծովով²³:

Լեոնային Ղարաբաղի հակամարտության հարցում Ադրբեջանի հաղթանակը հանգեցրել է նրան, որ Թուրքիայի կողմից հովանավորվող պանթյուրքիստներն Իրանին սպառնում են հյուսիսային սահմանի ողջ երկայնքով: Այս մասին հայտարարել է իրանցի փորձագետ, միջազգային հարաբերությունների հետազոտությունների ինստիտուտի աշխատակից Էհսան Մովահեդյանը նոյեմբերի 13-ին «Fars News» լրատվական գործակալության հրապարակած հոդվածում: «Պանթյուրքիստների միջամտությունն արդեն հուզումների պատճառ է դարձել Իրանի որոշ քաղաքներում ադրբեջանական բնակչության հետ»,- նշել է Մովահեդյանը²⁴:

«Թուրք ծայրահեղական լրագրող Իբրահիմ Քարագուլը «Yeni Safak» թերթում հոդված էր գրել, որում հայտարարել էր, թե Իրանը... այլևս Լեոնային Ղարաբաղի հետ սահման չունի, և այլևս չպետք է գոյություն ունենա Իրանի և Հայաստանի միջև սահմանը (իմա՝ Սյունիքի մարզը, այսինքն՝ Մեղրիի շրջանը պետք է որպես միջանցք տրամադրվի Ադրբեջանին – Գ. Ե.), իսկ Միջին Ասիա տանող ճանապարհը Թուրքիայի համար պետք է բաց լինի»²⁵:

Սյունիքի մարզը կարևոր է նաև տնտեսական տեսանկյունից: Իրանական ապրանքների մուտքը Հայաստան և հակառակը տեղի են ունենում Սյունիքի մարզի ճանապարհներով: Օգոստոսին Գորիս-Կապան ճանապարհի փակումը նպատակ

ուներ ստուգելու Իրանի արձագանքը և հնարավոր բացասական ազդեցությունը Իրանի և Հայաստանի տնտեսությունների վրա:

Այսքանից հետո զարմանալի չէ, որ Իրանը սկսել է գորքերի գանգվածային տեղափոխումը սահման՝ ինչպես հակամարտության գոտու, այնպես էլ Ադրբեջանի և Նախիջևանի Իսլամավար Հանրապետության հետ: Ընդ որում, եթե այստեղ ՀՕՊ-ի տեղակայումը դեռ կարելի է բացատրել նրանով, որ պետք է որսալ թուրքական հրթիռային արկերն ու ԱԹՄ-ները, որոնք թռել էին Իրանի տարածք, ապա ցամաքային գորքերի և Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի տեղափոխումն ակնհայտորեն պայմանավորված է ավելի լուրջ մտավախություններով: Լրացուցիչ լարվածությունն առաջացնում թուրքական գործակալական ցանցի փորձերը՝ սոցիալական ցանցերի միջոցով անկարգություններ հրահրելու Իրանի ադրբեջանցիների շրջանում, երկրի հյուսիս-արևմուտքում բնակվող ադրբեջանցիների ուժերով փակելու Հայաստանի հետ սահմանը:

Նկատի ունենալով Սյունիքի միջոցով Իրան-Հայաստան կապի բացառիկ կարևորությունը հակաթուրքական պայքարում՝ չի բացառվում, որ Իրանը ստիպված լինի այդ ուղղությամբ ուժեղացված ռազմական ներկայությունը պահպանել երկար ժամանակ²⁶:

Վերաթմուրելով Սյունիքը

Սյունիքը Հայաստանի Հանրապետության ցամաքային ամենամեծ մարզն է, որն զբաղեցնում է 4500 կմ² տարածք: Սյունիքի մարզը, բացի ռազմավարական շրջան լինելուց, մեծ կարևորություն ունի նաև հետևյալ առումներով.

Տնտեսական: Սյունիքի մարզը կարելի է համարել Հայաստանի տնտեսական զարկերակը: Այն օգտակար հանածոներով հանրապետության ամենահարուստ մարզն է: Հայտնի են Քաջարանի, Կապանի, Ագարակի, Դաստակերտի, Լիճքի, Սվարանցի մոլիբդենի, պղնձի, ոսկու և հազվագյուտ այլ մետաղների հանքավայրերը, որոնցից շահագործվում են Քաջարանի, Կապանի, Ագարակի և Լիճքի հանքավայրերը: Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատը ՀՀ երկրորդ ամենախոշոր հարկատուն է, որը պետքային է վճարում գրեթե 26 միլիարդ դրամ:

Զգալի են բազալտի, մարմարի, կրի և կավի պաշարները, կան հիդրոէներգետիկ մեծ ռեսուրսներ:

Սյունիքով է անցնում Իրան-Հայաստան գազամուղը, որը կառուցվել է 2007 թ.: Սկզբնապես նախատեսվում էր կառուցել 1200 մմ տրամագծով խողովակաշար, սակայն կառուցման ավարտին գրեթե կրկնակի նվազեցվել էր լայնությունը՝ հասցվելով 700 մմ-ի: Այն տարեկան կարող է մինչև 2 մլրդ մ³ գազ տարանցել դեպի Հայաստան: 2016 թ. տեղեկություններ հայտնվեցին, որ Իրանն ու Վրաստանը համաձայնության են եկել, որ Իրանից



Սյունիք

Հայաստանի տարածքով մինչև 500 մլն մ³ գազ արտահանվի Վրաստան²⁷, ինչը ևս կասեցվեց:

ԵԱՏՄ շրջանակներում Հայաստանն ունի 4 ազատ տնտեսական գոտու քվոտա, որոնցից մեկը գտնվում է Սյունիքի մարզում՝ Մեղրիի ազատ տնտեսական գոտին, որը ևս չի աշխատում ինչ-ինչ պատճառներով:

Ռազմավարական: Մարզում կան շուրջ 170 մեծ և փոքր գետեր, որոնցից առավել խոշորներն են Որոտանը, Ողջին և Մեղրիգետը: Մարզի ջրամբարներն են Սպանդարյանի (ջրատարությունը՝ 257 մլն մ³), Տոլորսի (96,8 մլն մ³), Շամբի (13,6 մլն մ³), Անգեղակոթի (3,4 մլն մ³) և Գեղիի (15 մլն մ³) ջրամբարները:

Ռազմավարական նշանակության են Սյունիքի անտառները, որոնք կազմում են մարզի տարածքի գրեթե 20 %-ը:

Սյունիքում են տեղակայված մեկ քաղաքացիական և երեք ռազմական օդանավակայաններ:

Աշխարհագրական: Պանթյուրքիզմի դեմ պայքարի համար բնական պատնեշ են Սյունիքի մարզի լեռնազանգվածները, մասնավորապես՝ Զանգեզուրի լեռնաշղթան, Բարգուշատը և Մեղրիի լեռները:

Մշակութային: Սյունիքը հայության օրրանն է եղել պատմական անհիշելի ժամանակներից, և այստեղ կառուցված բազմաթիվ մշակութային կոթողները, վանքերը, բերդերը, ժայռապատկերները հայության ինքնության ու ինքնաճանաչման համար կարևորագույն նշանակություն ունեն:

Հոգեբանական: Սյունիքի բնակչության բարոյա-հոգեբանական վիճակը շատ ավելի բարձր է, քան հանրապետության մնացյալ շրջանների բնակչությանը: Այն կապված է Սյունիքի տեղանքի, պատմության հետ, և մարտնչող ոգին Սյունյաց բարձրաբերձ լեռներից մտել է տեղացիների հոգեկերտվածքի մեջ:

Այսքանով հանդերձ՝ Սյունիքը Հայաստանի ամենանոսր բնակեցված մարզերից է: Սյունիքի մարզում է գտնվում ՀՀ ամենանեղ հատվածը՝ մոտավորապես

25-26 կմ, որի շրջակայքում ընդամենը մեկ բնակավայր կա:

Թուրքական ծավալապաշտական նկրտումների դեմ Մյունխիքը կարող է պայքարել, սակայն անհրաժեշտ են ռազմավարական լուծումներ այս և այլ խնդիրներին:

Մյունիքի մարզի բնակչության համար պիտի ստեղծվեն առավելագույնս բարենպաստ պայմաններ՝ բնական աճը խթանելու համար: Պետք է կառուցվեն նոր բնակավայրեր:

Ռազմավարական առումով անվտանգային հարց է Իրան-Հայաստան երկպառնուցի կառուցումը, որը կփոխի տարածաշրջանային հաղորդակցությունների և անվտանգային քարտեզը: Այդպիսի փոփոխությունների մասին արդեն խոսում են Իրանում²⁸: Իրանի ճանապարհների և քաղաքային զարգացման նախարար Ռոստամ Ղասեմին գրել էր, որ Կովկասի տարածաշրջանի տարանցիկ քարտեզը շուտով կփոխվի: Նա նշել էր, որ կովկասյան միջանցքի և Նորդուզից Հայաստան ճանապարհի խնդիրը կլուծվի: Հայկական կողմը պետք է հասնի նաև երկաթուղու կառուցմանը:

Անհրաժեշտ է հստակեցնել, որ թուրքական քաղաքականության դեմ պայքարող սուրբեկտ լինել կարող է միայն Հայաստանի զորեղ ու կենսունակ հանրապետությունը, իսկ Մյունիքն այն երակն է, որը պետք է առավելագույնս սնուցի հանրապետությունը՝ պանթուրքիզմի դեմ հաղթանակելու համար:

Մյունիքի բացառիկ կարևորությունը հասկացել և բարձրաձայնել է ՀՀ ազգային հերոս Վազգեն Սարգսյանը, ով 1999 թ. որպես ՀՀ վարչապետ Մյունիք այցի ժամանակ ասել է հետևյալ խոսքերը. «Աշխարհագրական տարածք չէ Մեդրին, հայրենիքի մի բուռ չէ: Եվ երբ դու Մեդրին տալիս ես օտարին, քո տան դուռը փակում ես քեզ վրա: Չգիտեմ՝ ներսից, չգիտեմ՝ դրսից, ու բանալին կախում ես կրծքիդ... Ես զգուշացնում եմ՝ Մեդրին մի օր պայթելու է հենց Երևանի կենտրոնում²⁹»:

Անփոփեղով ցանկանում ենք ընդգծել, որ Մյունիքն այսօր այն միակ սեպն է, որ խանգարում է թուրքական աշխարհին միավորվել: Այն ռազմաքաղաքական կարևորագույն լծակ է, որը կարող է կանգնեցնել նորհամաթյուրքական շարժումը, կանխել դրա տարածումը դեպի արևելք, Կենտրոնական Ասիա: Մյունիքն այսօր նույնքան կարևորություն ունի և Իրանի Իսլամական Հանրապետության համար, որը ստիպված է մի քանի ճակատներով կռվել թուրքական էքսպանսիայի, իսրայելական սպառնալիքի, արևմտյան պատժամիջոցների և հնարավոր ինտերվենցիաների դեմ:

Եթե Մյունիքում Հայաստանը զիջի միջանցքի հարցում, ապա Թուրքիան կդառնա աշխարհաքաղաքական կարևորագույն գործոն, իսկ Հայաստանը կկորցնի ինքնիշխանության իր վերջին բեկորները³⁰:

Հղումներ

- 1- Տես Եկմայան Գ., Թուրքիայի ներգրավվածությունը տարածաշրջանային վերջին զարգացումներում, «Регион и мир», 2021, № 5, էջ 13:
- 2- Տես <https://m.economicstimes.com/topic/International-North-South-Transportation-Corridor> (մուտք՝ 12.10.2021թ.):
- 3- Տես Եկմայան Գ., Թուրքիայի ներգրավվածությունը տարածաշրջանային վերջին զարգացումներում, «Регион и мир», 2021, № 5, էջ 13:
- 4- Տես <https://www.britannica.com/topic/Pan-Turkism> (մուտք՝ 12.10.2021թ.):
- 5- «Անատոլիա» բառը հունարենից թարգմանաբար նշանակում է «արևելք», հետևաբար «Արևելյան Անատոլիա» կնշանակի «արևելյան արևելք», որն անիմաստություն է:
- 6- Ռուսական կայսրության փլուզումից հետո Անդրկովկասյան սելմը Անդրկովկասը հայտարարեց անկախ, որը գոյատևեց ընդամենը երեք ամիս և փլուզվեց 1918 թ. մայիսի 28-ին Անդրկովկասում երեք անկախ հանրապետությունների հռչակումով:
- 7- Պետրոսյան Գ., Անդրկովկասը դիվանագիտական հորձանտում. հայոց անկախ պետականության կերտումը, Եր., 2018, էջ 36:
- 8- Նույն տեղում, էջ 85:
- 9- Նույն տեղում, էջ 130:
- 10- Տես <https://www.google.com/amp/s/vstrokax.net/istoriya-pis-mo-korolevstva-iran/%3famp=1> (մուտք՝ 12.10.2021թ.):
- 11- Տես <http://www.aniarc.am/2021/09/13/towards-turan-and-the-armenian-massacres-in-september-1918/> (մուտք՝ 12.10.2021թ.):
- 12- Տես <http://archive3.ankakh.com/article/?id=37156/ch-mi-tyegh-arants-syunici-u-artsakhi%2%BB-garyeghin-njdyehi-khvosqyerits>, (մուտք՝ 25.11.2021թ.):
- 13- Տես <https://cyberleninka.ru/article/n/artsahskaya-problema-i-ideologiya-pantyurkizma/viewer> (մուտք՝ 12.10.2021թ.):
- 14- Տես Sharapo A., New Ottomanism as a Guiding Foreign Policy Doctrine for Modern Turkey, Minsk, 2016, page 48:
- 15- Տես Ottaway M. and Carothers Th., The Greater Middle East Initiative: Off to a False Start, (մուտք՝ 12.10.2021թ.):
- 16- Տես <https://www.mei.edu/publications/turkeys-dangerous-new-exports-neo-ottoman-visions-and-regional> (մուտք՝ 12.10.2021թ.):
- 17- 2021 թ. հոկտեմբերի սկզբին Իրանում տեղի ունեցան արբեջանցիների զանգվածային հանրահավաքներ: Բողոքի ակցիայի մասնակիցները փակել էին Հայաստան տանող ճանապարհները: Նրանք կառավարության, հայերի, պարսիկների և Ռուսաստանի դեմ կարգախոսներ էին վանկարկում: Բողոքի ակցիաներն ընդգրկել էին Թավրիզը, Ռուսիան և Ջեջեսը, հասել մինչև Թեհրան: Հուզումների ոչ մի կենտրոնացված կազմակերպություն չի եղել, եղյույթները համակարգվել են սոցիալական ցանցերի միջոցով: Հանրահավաքների նախօրեին Իրանի չորս նահանգներում քաղաքացիները ադրբեջանցի քաղաքացիների ներկայությամբ հայտարարություններ են արել և պաշտպանություն Ադրբեջանի:
- 18- Տես <https://www.aa.com.tr/en/turkey/remembering-top-turkish-diplomat-ismail-cem/1373374> (մուտք՝ 12.10.2021թ.):
- 19- Տես <https://www.turkocaklari.org.tr/kurucu/yusuf-akcura> (մուտք՝ 12.10.2021թ.):
- 20- Տես <https://eadaily.com/ru/news/iran-zhdet-reakcii-rossii-na-nahozhdenie-tiristov-v-zakavkaze> (մուտք՝ 12.10.2021թ.):
- 21- Տես Եկմայան Գ., Թուրքիայի ներգրավվածությունը տարածաշրջանային վերջին զարգացումներում, «Регион и мир», 2021, № 5, էջ 13:
- 22- Տես <https://blog.168.am/blog/332322.html> (մուտք՝ 12.10.2021թ.):
- 23- Տես Եկմայան Գ., Некоторые проблемы внешней политики РА в довоенный период, «Регион и мир», 2021, № 5, էջ 6:
- 24- <https://rossaprimavera.ru/news/96cb3a3d> (մուտք՝ 12.10.2021թ.):
- 25- Նույն տեղում:
- 26- Թեհրանը մտահոգված է հատկապես նրանով, որ Թուրքիան օգտագործում է իր էթնիկ ինքնությունը, որն ընդհանուր է Կենտրոնական Ասիայի և Կովկասի շատ պետությունների համար, իր ազդեցությունն ընդլայնելու համար: Բաքվում կայացած ռազմական շրթնի ժամանակ Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի կողմից Հայաստանի նկատմամբ Ադրբեջանի տարած հաղթանակին նվիրված արբեջանական ազգայնական բանաստեղծության ընթերցումը, որում կոչ է արվում վերամիավորելու իրանական երկու էթնիկ ադրբեջանական նահանգներն Ադրբեջանի հետ, կոշտ արձագանքի արժանացավ Իրանում:
- 27- Տես <https://www.google.com/amp/s/www.azatutyun.am/amp/27481040.html> (մուտք՝ 12.10.2021թ.):
- 28- Տես <https://panarmenian.net/m/arm/news/295965> (մուտք՝ 12.10.2021թ.):
- 29- http://newslime.am/news/vazgen_sargsyan_es_zgowshanoem_em_patmowtyowny_na_avartvowm_e_otnahetqerov/2021-11-18-1991, (մուտք՝ 25.11.2021թ.):
- 30- Տես Եկմայան Գ., Թուրքիայի ներգրավվածությունը տարածաշրջանային վերջին զարգացումներում, «Регион и мир», 2021, № 5, էջ 13:

1920 թ. դեկտեմբերի 2-ը Հայաստանի և հայ ժողովրդի ճակատագրում. անցյալը և ներկան, գնահատականներ և արժևորումներ

Արարատ Հակոբյան
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Մեկդարյա հեռավորությունից Հայաստանի ու հայ ժողովրդի պատմական ճակատագրում նշանավորվում են 1920 թ. դեկտեմբերի 2-ով թվագրվող երկու պատմական իրադարձություններ: Նախ՝ դեկտեմբերի 2-ին՝ հինգշաբթի օրը՝ կեսօրին՝ ժամը 12-ի մոտ, Երևանում ստորագրվում է Դրո-Լեզրան 8-կետանոց համաձայնագիրը, որով, ստեղծված ռազմաքաղաքական անելանելի հանգամանքների թելադրանքով, ՀՀ կառավարությունը կամավոր հեռանում է իշխանությունից՝ այն հանձնելով Հայիեղկումին. դրանով Հայաստանը խորհրդայնացվում է: Մյուս իրադարձությունը դրանից մի քանի ժամ անց՝ դեկտեմբերի 2-ի լույս 3-ի գիշերը, Ալեքսանդրապոլում ՀՀ պատվիրակության ղեկավար Ալ. Խատիսյանի և թուրք պատվիրակ Բ. Կարաբեքիր փաշայի միջև պայմանագրի ստորագրումն է, որը, սակայն, երկու կողմերն էլ չեն վավերացրել, և այն Կարսի 1921 թ. հոկտեմբերի 13-ի թուրք-անդրկովկասյան պայմանագրով ճանաչվել է առ ոչինչ (չեղյալ):

Այժմ արդի իրողությունների լույսի ներքո ավելի քան 100-ամյա հեռավորությունից ինչ նյութերումներ կարելի է անել այդ երկու հիշարժան իրադարձությունների վերաբերյալ: Նախ արձանագրենք, որ դեկտեմբերի 2-ի Երևանի համաձայնագրով Հայաստանի խորհրդայնացումը տեղի է ունեցել խաղաղ ճանապարհով, երբ ՀՀ ՀՅԴ Բյուրո-կառավարությունը, ստեղծված իրավիճակում այլ ելք չտեսնելով, նոյեմբերի 30-ի երեկոյան կառավարության դահլիճում, ապա՝ դեկտեմբերի 1-ի գիշերը, մոմի լույսի տակ, խորհրդարանի հետ համախորհուրդ, որոշեց հետանալ իշխանությունից և երկրի հետագա ճակատագիրը հանձնել ռուսական Կարմիր բանակի ուղեկցությամբ Ղազախից Հայաստան մուտք գործած Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեին (Հայիեղկումին), որը գլխավորում էր բոլշևիկ Ս. Կասյանը: Եվ այս համատեքստում միանգամայն ստահող է 70 տարի շարունակ շրջանառված այն կեղծիքը, թե իբր Հայաստանում խորհրդային կարգերը հաստատվել են 1920 թ. նոյեմբերի 29-ին՝ «ապստամբած աշխատավոր զանգվածների միջոցով»¹:

Դեկտեմբերի 2-ի պատմական իրադարձությանն առնչվող մյուս կեղծիքն այն է, որ Երևանի Դրո-Լեզրան համաձայնագրով Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունը (ՀՍԽՀ) հայտարարվում էր «անկախ», և անվերապահորեն ՀՍԽՀ կազմում էին ներառվելու Երևանի նահանգն ամբողջությամբ, Կարսի մարզը, Ղազախ գավառի մի մասը և այլն, Հայիեղկումի կառավարության կազմում ընդգրկվելու էին ՀՅԴ կուսակցությունից երկու «ձախ» անդամ, Դաշնակցությունը, մյուս սոցիալիստական



կուսակցությունները և դրանց անդամները չէին հետապնդվելու, հալածանքի չէին ենթարկվելու և այլն, և այլն: Մի խոսքով՝ ստորագրված այդ 8-կետանոց պայմանագրային փաստաթղթի կետերը, ըստ էության, չկենսագործվեցին՝ բացառությամբ նրա, որ Հայաստանը խորհրդայնացվեց²: Ավելին՝ ՀՅԴ-ի և այլախոհ համարվող մյուս բոլոր կուսակցությունների հանդեպ բոլշևիկների կառավարությունը ոչ միայն լույս չգտնվեց, այլև հետագա մի քանի տարիներին, նրանց դեմ հրապարակային ու ցուցադրական դատավարություններ կազմակերպելով, լուծարեց և հետագրեց խորհրդային երկրի քաղաքական ասպարեզից, իսկ այդ կուսակցությունների այն ներկայացուցիչները, որոնք փորձեցին մնալ և ապրել հայրենիքում, հետագայում ենթարկվեցին ստալինյան որակված քաղաքական բռնաճշմունքների՝ բանտարկության, աքսորի ու գնդակահարությունների³:

Տարակույս չկա, որ դեկտեմբերի 2-ի Երևանի համաձայնագրով ի սկզբանե Խորհրդային Հայաստանի անկախությունը կրել է սուկ ձևական բնույթ: Ավելին՝ Հայաստանը շուտով զրկվեց այդ «անկախությունից» և 1922 թ. Անդրդաշնության և ԽՍՀՄ կազմավորումից հետո խորհրդային մեկուկես տասնյակի հասնող հանրապետությունների նման այդ կարգավիճակում մնաց 7 տասնամյակ: Հարկ է նշել, որ անցած խորհրդային 70 տարիներին Հայաստանի՝ խորհրդային-կոմունիստական միակուսակցական ամբողջատիրական (տոտալիտար) համակարգում լինելը ունեցել է երկակի ազդեցություն. մի կողմից՝ խորհրդահայ ժողովուրդը կրել է բազում զրկանքներ, ենթարկվել է քաղաքական հետապնդումների ու հալածանքների, Հայրենական պատերազմում տվել է 200 հազարից ավելի զոհ և այլն, բայց մյուս կողմից՝ Հայաստանի՝ ԽՍՀՄ կազմում գտնվելով՝ խորհրդահայ ժողովուրդը համեմատաբար պաշտպանված է եղել հարևան ու արտաքին ոտնձգություններից: Բացի այդ՝

անուրանալի իրողություններ են հետպատերազմյան տասնամյակներին խորհրդային երկրի ու ժողովրդի՝ սոցիալ-տնտեսական, գիտակրթական ու մշակութային կյանքում նշանակալի ձեռքբերումներն ու առաջընթացը:

Արդեն հետխորհրդային շրջանում Հայաստանի ու հայ ժողովրդի համար ազգային-քաղաքական միանգամայն նոր փուլ նշանավորվեց 1988 թ. սկսված արցախյան ազատագրական շարժումով ու Հայաստանի անկախացման գործընթացներով, որոնց հետևանքով էլ համաժողովրդական քվեարկությամբ 1991 թ. հռչակվեց Հայաստանի և նաև ԼՂՀ անկախությունը: Վերջին երեք տասնամյակներին, չնայած բազում դժվարություններին, մեծագույն ձեռքբերում պետք է համարել 70-ամյա ընդմիջումից հետո ՀՀ անկախության վերականգնումը, ազգային-պետական սեփական ճակատագրի տնօրինումը, քանզի, ինչպես նկատել է ՀՅԴ ճանաչված տեսաբան ու գործիչ Վ. Նավասարդյանը, «Անկախությունը ազգերի անկապտելի իրավունքն է, նրանց անվերաքննելի ու նուիրական սեփականությունը: Անկախությունն ազգ-սուրբեկտի ազատութան միակ ձևն է, անկաշկանդ ապրելու և ստեղծագործելու միակ միջոցը»⁴: Տեղին է նաև հիշել հայ մեծ մտավորական Ն. Աղբալյանի (Հանգույց) դիտարկումն այն մասին, որ «Ամեն ազգ պետք է իր քաղաքական հայրենիքն (ընդգծումն մերն է – Ա. Հ.) ունենա»⁵: ԽՍՀՄ փլուզումով Հայաստանը Արցախի հետ միասին ձեռք բերեց իր քաղաքական անկախությունը, և դրանով, պետք է ասել, որ ուղիղ հոգևոր կապ ստեղծվեց Առաջին հանրապետության հետ՝ իր պետականության խորհրդանիշներով՝ դրոշով, օրհներգով ու զինանշանով, պետաիրավական ու տնտեսական համակարգերով, ժողովրդավարական այլ արժեքների փոխորդելով: Եվ այս իմաստով պատմության գիրկն է անցնում «դեկտեմբերի 2» հասկացությունը, և անմիջական ժառանգորդական կապ է ստեղծվում Առաջին և Երրորդ հանրապետությունների միջև:

Ինչ վերաբերում է 1920 թ. դեկտեմբերի 2-ի մյուս հիշարժան իրադարձությանը, ապա հարկ է փաստել, որ անցած մեկ դարում խորհրդահայ և անգամ մեր ժամանակների պատմագրության մեջ հանդիպում են հեղինակներ, որոնք շրջանցում են 1921 թ. մարտի 16-ի (իրականում՝ մարտի 18-ի) Մոսկվայի ռուս-թուրքական և դրա տրամաբանական շարունակությունն ու կրկնօրինակը հանդիսացող Կարսի հոկտեմբերի 13-ի թուրք-անդրկովկասյան պայմանագրերի հայավասա վիթխարի հետևանքները, որոնց գնահատականը տրվեց մասնավորապես 2021 թ. հոկտեմբերի 19-21-ին Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտի, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի, Հայ Յեղափոխական Դաշնակցության Հայ դատի կենտրոնական խորհրդի ու «Արևմտահայոց հարցերի ուսումնասիրության կենտրոն» գիտահետազոտական հիմնադրամի համատեղ կազմակերպած՝ դրանց 100-ամյա տարելիցին նվիրված Երևանի միջազգային

գիտաժողովում: Ալեքսանդրապոլի 1920 թ. դեկտեմբերի 2-3-ի հայ-թուրքական պայմանագիրը ոմանք զուտ հակադաշնակցական քարոզչության նպատակներով ներկայումս էլ շարունակում են որակել որպես ամենանվաստացուցիչ պայմանագիրը: Այն, ինչպես հայտնի է, կնքվել էր հարկադրաբար՝ թուրք-հայկական պատերազմում Հայաստանի կրած ծանր պարտության հետևանքով, թուրքական բիրտ ուժի ու սպառնալիքի գործադրմամբ: Պատմական իրողությունն այն է, որ տարածքային-սահմանային առումով Ալեքսանդրապոլի պայմանագիրը, համեմատած Մոսկվայի ռուս-թուրքական և դրա կրկնօրինակը հանդիսացող Կարսի թուրք-անդրկովկասյան «բարեկամության ու եղբայրության» պայմանագրերի հետ, համեմատաբար ավելի նպաստավոր էր:

Նախ Ալեքսանդրապոլի պայմանագրի պատմաիրավական ու քաղաքական գնահատականի հարցում պետք է արձանագրել, որ այն փաստացի (de facto) կատարված իրողություն է, բայց չի ունեցել իրավական ուժ մի քանի առումներով. ա) Հայաստանի պատվիրակությունը պետական խաղաղ հեղաշրջման ու իշխանափոխության հետևանքով այլևս չունեի այն ստորագրելու իրավասություն, բ) պայմանագիրը չի վավերացվել արդեն չգո Հայաստանի խորհրդարանի կողմից, և գ) պայմանագիրը ստորագրվել է հակառակորդ կողմի բռնի ուժի, անգամ ֆիզիկական սպառնալիքի տակ: Բացի այդ՝ գործադրվել է հոգեբանական ճնշում. պայմանագրի ստորագրման օրը ամրոցի պատուհանից դուրս նկատվել են կախաղան բարձրացված մի քանի մարմիններ, որով Ք. Կարաբեքիրը պարզ հասկացրել է հայ պատվիրակներին, որ նրանք չեն կարող հեռանալ առանց իր պահանջած ստորագրությունը տալու⁶: Ինչ վերաբերում է թուրքական կողմին, ապա՝ ա) Ք. Կարաբեքիր փաշայի ներկայացրած կառավարությունը միջազգայնորեն ճանաչված չէր, անգամ այն գլխավորող Մ. Քեմալ փաշան օսմանյան օրինական կառավարության կողմից համարվել է հանցագործ և նրա դատարանի վճռով մահվան դատապարտվել, բ) Ալեքսանդրապոլի պայմանագիրը չի վավերացվել թուրքական Ազգային մեծ ժողովի (մեջլիսի) կողմից, և գ) Անգորայի կառավարության կողմից բիրտ ուժի ու սպառնալիքի գործադրմամբ պարտադրված պայմանագիրը միջազգային պայմանագրային իրավունքի տեսանկյունից չէր կարող ունենալ իրավական ուժ, ուստի և միջազգային ճանաչում:

Անշուշտ, Ալեքսանդրապոլի պայմանագիրը ծանր պարտություն կրած կողմին ուժով ու սպառնալիքով պարտադրված անիրավահավասար, միևնույն ժամանակ իրավական ուժ չունեցող անվավեր պայմանագիր էր: Ինչպես արդեն նշվել է, 18 հոդվածից բաղկացած Ալեքսանդրապոլի պայմանագիրը ոչ մի կողմ չի վավերացրել և պաշտոնապես չի հրապարակել: Այն մասին, որ Ալեքսանդրապոլի պայմանագիրը միջազգային-իրավական ուժ չունեցող փաստաթուղթ է, ՌՄԴԽՀ արտգործոժողկոմ Գ. Չիչերինը իրազեկել է Մոսկվայում Թուրքիայի դեսպան Ալի Ֆուադին 1921 թ. ապրիլի 8-ին հղած նոտայում:

Դրանում նա հիշեցնում էր թուրք դեսպանին, որ Ալեքսանդրապոլի պայմանագիրը կնքվել է դաշնակցական կառավարության կողմից այն պահին, երբ արդեն հռչակված էր Հայաստանի խորհրդային կառավարությունը, և այն չի վավերացվել: Բացի այդ, ըստ պայմանագրի տեքստի, այն գործողության մեջ կարող էր դրվել մեկ ամսվա ընթացքում կողմերի օրենսդիր մարմինների կողմից հաստատվելուց հետո, ինչը նույնպես չի արվել⁷: Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ բոլոր առումներով Ալեքսանդրապոլի պայմանագիրը չի ունեցել իրավական որևէ հիմք, որպեսզի ճանաչվեր և գործողության մեջ դրվեր:

Մյուս կողմից՝ խորհրդային պատմագրության մեջ և նույնիսկ հետխորհրդային մի շարք հեղինակների աշխատություններում շրջանառվում էր նաև մի կարծրատիպ, թե իբր Ալեքսանդրապոլի պայմանագրով Հայաստանին մնում էր ընդամենը 10 հազար քառ. կմ տարածք, որը հավասարվում էր Բաթումի 1918 թ. հունիսի 4-ի հայ-թուրքական պայմանագրով նախատեսված տարածքին⁸: Դա, սակայն, չի համապատասխանում իրականությանը: Տարածքային-սահմանային խնդրի քիչ թե շատ հետևողական ու արդարացի լուծման դեպքում, կարծում ենք, որ ՀՄԽՀ տարածքը կարող էր հասնել առնվազն 40 հազար քառ. կմ-ի⁹:

Ալեքսանդրապոլի և Մոսկվայի պայմանագրերով գծված հայ-թուրքական սահմանի տեղանշումները համեմատելիս կարելի է համոզվել, որ տարածքային-սահմանային առումով Ալեքսանդրապոլի պայմանագիրը ոչնչով չի զիջել Մոսկվայի, ինչպես և դրա կրկնօրինակ Կարսի պայմանագրերին: Ավելին, եթե Ալեքսանդրապոլի պայմանագրով սահմանը Կարսի մարզի հատվածում անցել է Թիխնիս, Մեծ Ղմրու և Ղըզըլ-Ղաշ գյուղերից դեպի արևմուտք, այսինքն՝ հիշյալ բնակավայրերը իրենց շրջակա տարածքներով ներառվել են Հայաստանի կազմում, ապա Մոսկվայի պայմանագրով, ընդհակառակը, հայ-թուրքական սահմանագիծն անցել է այդ գյուղերից արևելք, այսինքն՝ դրանք թողնվել են Թուրքիայի կազմում: Ճանաչված պատմաբան-քարտեզագետ Բ. Հարությունյանի քարտեզագիտական դիտարկումներով ու կատարած մոտավոր հաշվումներով՝ Մոսկվայի պայմանագրով, Ալեքսանդրապոլի պայմանագրի համեմատ, Թուրքիային է անցել 250 քառ. կմ տարածք¹⁰: Եթե նկատի առնենք, որ Ալեքսանդրապոլի պայմանագրով Հայաստանին էր անցնում Կարսի մարզի հյուսիս-արևելյան շրջանից 600 քառ. կմ տարածք, իսկ Մոսկվայի և Կարսի պայմանագրերով շուրջ 250 քառ. կմ եռանկյունի մի հողատարածք խորհրդային սահմանագծող ու քարտեզագրող կողմի անփութության և անհետևողականության հետևանքով կրկին զիջվել է Թուրքիային, ապա, Ալեքսանդրապոլի պայմանագրի համեմատ, Մոսկվայի պայմանագրով Կարսի մարզից Հայաստանին թողնվել է ընդամենը 350 քառ. կմ, որն էլ կազմում է Աղբաբայի՝ ներկայիս Ամասիայի ենթաշրջանը¹¹:

Մեր կողմից բերված սույն փաստը բնավ նպատակ չի հետապնդում արդարացնելու կամ

պաշտպանության տակ առնելու Ալեքսանդրապոլի կողոպտիչ, բայց և անվավեր ու չգո պայմանագիրը: Այստեղ պատմագիտական կեղծիքն այն է, որ եթե չկնքվեր Ալեքսանդրապոլի պայմանագիրը, չէին լինի Մոսկվայի պայմանագրի՝ Հայաստանին վերաբերող ծանր պայմանները: Այնինչ, ինչպես արդեն ակնարկվեց, Մոսկվայի խորհրդածողովի ընթացքում որևէ հիշեցում չի եղել Ալեքսանդրապոլի պայմանագրի գոյության մասին: Էլ չենք խոսում բացահայտ կեղծ այն մտամարզանքի մասին, թե իբր Մոսկվայի պայմանագրով չեղյալ համարվեց Ալեքսանդրապոլի պայմանագիրը: Ինքնին հասկանալի է, որ այս և պատմական իրողությունների հետ աղերս չունեցող համանման հայտարարությունները նախկինում օգտագործվել են որպես զենք ՀՅԴ-ի դեմ մղված քաղաքական-քարոզչական պայքարում:

Այսպիսով, հանրագումարի բերելով վերոշարադրյալը, կարելի է արձանագրել, որ որպես պատմական հիշարժան օր՝ 1920 թ. դեկտեմբերի 2-ը տխուր խորհուրդ ունի, քանզի մի կողմից Երևանի Դրո-Լեզրան համաձայնագրով արձանագրվեց ՀՀ անկումն ու անկախության կորուստը, իսկ մյուս կողմից իրադարձությունների բերումով այդ նույն օրը՝ ուշ գիշերին, ստորագրվեց Ալեքսանդրապոլի հայ-թուրքական (Խատիսյան-Կարաբեքիր) կողոպտիչ, սակայն անվավեր պայմանագիրը, և դարձյալ արձանագրվեց Հայաստանի տարածքների մի մեծ հատվածի կորուստ: Մեր տպավորությամբ, 100-ամյա հեռավորությունից դեկտեմբերի 2-ի այդ երկու տխուր փաստն են ծանրացած մեր ժողովրդի պատմական հիշողության մեջ, և դրանց հաղթահարմանը պիտի միտված լինեն Հայաստանի ու համայն հայության առաջիկա ու հետագա հավաքական ջանքերը: ■

Հղումներ

- 1- «Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (Քաղաքական պատմություն)», փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Եր., 2000, էջ 367:
- 2- Տես Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 200, ց. 1, գ. 560, թ. 476: Տես նաև «Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ.», էջ 383-384:
- 3- Այդ մասին հանգամանորեն տես Մանուկյան Ա., «Քաղաքական բռնամտումները Հայաստանում 1920-1953 թթ.», Եր., 1999, Ղազախեցյան Վլ., 1937-ը Հայաստանում, Եր., 2004, Հակոբյան Ա., Միակուսակցական վարչակարգի ձևավորումը Խորհրդային Հայաստանում (1920-ական թվականներ), Եր., 2016, նույնի՝ Հ. Յ. Դաշնակցություն կուսակցությունը լուծարելու հայկոմկուսի փորձերը. 1920-ական թվականներ, Եր., 2020, նույնի՝ 1937 թվականը Հայաստանում, Եր., 2017 և այլն:
- 4- Նավասարդեան Վ., Հայաստանի անկախությունը, Ժրնոն, 1924, էջ 44-45:
- 5- Հանգոյց Ն. (Նիկոլ Աղբաբյան), Մտածումներ Հ. Յ. Դաշնակցութեան մասին, Փարիզ, 1930, էջ 89:
- 6- Տես Արծրունի Վ., Հայ-տաճկական պատերազմը, Հայ սպայությունը, Շատախ, Եր., 2002, էջ 320:
- 7- Տես Սահակյան Ս., Ցավալի պայմանագրեր, Եր., 2007, էջ 350:
- 8- Տես «Հայ ժողովրդի պատմություն», հ. 7, Եր., 1967, էջ III, Արզումանյան Մ., Դարավոր գոյամարտ, Եր., 1989, էջ 349, «Հայկական համառոտ հանրագիտարան», հ. 1, Եր., 1990, էջ 83, Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները (1917-1923 թթ.), Եր., 1999, էջ 376, «Ազատամտություն», 14.10.2009 և այլն:
- 9- Տես Հակոբյան Ա., Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, Եր., 2010, էջ 94:
- 10- Տես Հարությունյան Բ., Երկու ճշգրտում (Նախնական հիմնախորհրդակցություն 1921 թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրում), գիտաժողովի նյութեր, Եր., 2001, էջ 78:
- 11- Այդ մասին քարտեզագրական սահմանագծման պատկերներով տես Հայաստանի ազգային առկա, հ. Բ, Եր., 2008, էջ 210-215:

Հայ-ադրբեջանական հարաբերությունների պատմությունից

Անի Մելքոնյան
Պատմաբան

Հայ-թուրքական հարաբերությունների պատմության մասին շատ է խոսվել, բայց Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների պատմության մասին ոչ այնքան հաճախ է խոսվում, թեև դա ոչ պակաս կարևոր է:

Նախ՝ փոքր-ինչ Ադրբեջանի մասին: Ադրբեջանը՝ որպես աշխարհաքաղաքական միավոր, Իրանի հյուսիսարևմտյան երկրամասն է, որն առանձնապես կապ չունի մեզ այսօր հայտնի Ադրբեջան կոչվող պետության հետ: Այժմյան Ադրբեջանի Հանրապետության տարածքը ներառում է պատմական Աղվանքը, Մեծ Հայքի Ուտիք, Արցախ, Փայտակարան, մասամբ՝ նաև Սյունիք և Այրարատ նահանգները: Իսկ Ադրբեջան տեղանունը, որը, ինչպես արդեն ասացինք, Իրանի հյուսիսարևմտյան երկրամասի պատմական անվանումն է, մինչև 1918 թ. չի տարածվել նրա տարածքների վրա: Ավելին՝ Ադրբեջանում բնակվող թյուրքերը մինչև 1936 թ. հայտնի էին Կովկասի թյուրքեր կամ Կովկասի թաթարներ անվանումներով, իսկ ադրբեջանցիներ անվանումը սկսեց կիրառվել միայն 1936 թվականից՝ «ստալինյան սահմանադրության» (ԽՍՀՄ 1936 թ. Սահմանադրություն) ընդունումից հետո, երբ Անդրկովկասի Խորհրդային Սոցիալիստական Ֆեդերատիվ Հանրապետության փոխարեն կազմավորվում են երեք նոր սոցիալիստական հանրապետություններ: Որպես արդյունք՝ Ադրբեջանական ԽՍՀ բնակչությունը, անկախ ազգային պատկանելությունից (իսլամացած հայեր, թաթար, թալիշներ, ուդիներ, լեզգիներ և այլ ցեղեր ու ցեղախմբեր), կոչվեց ադրբեջանցի, ասել է թե՛ Ադրբեջանի բնակիչ:

Ադրբեջանի Հանրապետությունը, ինչպես արդեն ասացինք, ստեղծվել է 1918 թ.՝ Ռուսական կայսրության փլուզման հետևանքով, «...երբ մայիսի 27-ին մուսուլմանների ազգային խորհուրդը, հիմք ունենալով Անդրկովկաս ներխուժած ցեղակից Թուրքիայի անվերապահ աջակցությունն ու հովանավորությունը, հայտարարեց «Արևելակովկասյան Մուսուլմանական Հանրապետության» (ԱԿՄՀ) անկախության մասին...»¹: Արևելակովկասյան Մուսուլմանական Հանրապետությունը հռչակումից կարճ ժամանակ անց վերանվանվեց Ադրբեջան՝ իրանական Ադրբեջան երկրամասի նկատմամբ կովկասյան թաթարների և Թուրքիայի ունեցած հավակնություններից ելնելով: Նաև երկրի անվանումն էր պատճառը, որ Ազգերի լիգան ոչ միայն մերժեց պաշտոնապես ճանաչել Ադրբեջանի Հանրապետությունը, այլև չընդունեց Ադրբեջանի Հանրապետության դիմումը Ազգերի լիգային անդամակցելու վերաբերյալ: Այսպես. «1920 թ. դեկտեմբերի 1-ին Ազգերի լիգայի ասամբլեայի 5-րդ կոմիտեն արձանագրել է. Ադրբեջանի հանրապետությունը նախկինում երբեք պետություն չի եղել և ընդգրկված է եղել ավելի մեծ տերություն-



ների մեջ, ինչպիսին են Մոնղոլիան (սկստի ունի մոնղոլ-թաթարական տիրապետությունը – Ա. Մ.) կամ Պարսկաստանը, իսկ 1813 թ. Ռուսական կայսրությունը: Ադրբեջան անվանումն էլ ոչ այլ ինչ է, քան հարևան պարսկական գավառի անունը, որը ընտրվել է որպես նորաստեղծ հանրապետության անվանում»²: Նույն ժամանակ Ազգերի լիգան արձանագրել է. «ա. Ադրբեջան պետություն մինչև 1918 թ. գոյություն չի ունեցել,

բ. Ադրբեջան անվանումը պարսկական գավառներից մեկից փոխառնված անվանում է,

գ. հրաժարվում է ճանաչել Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետությունը որպես միջազգային սուբյեկտ»³: Մինչդեռ լրիվ հակառակն էր Հայաստանի Հանրապետության դեպքում, որը նույն՝ 1920 թ. իր փաստացի տարածքով (70.000 քառ. կմ) ճանաչվեց Ազգերի լիգայի կողմից:

Հայ-ադրբեջանական հարաբերությունները, սակայն, 1918 թվականից չէ, որ սկիզբ են առել: Հայ և կովկասցի թաթար ժողովուրդները եղել են և՛ Պարսկական, և՛ Ռուսական կայսրությունների տիրապետության ներքո: Հենց Ռուսական կայսրության տիրապետության պայմաններում էր, որ իրանական տարրը թուլացնելու համար թյուրքական տարրն ուժեղացնելու քայլեր արվեցին. «Գործի դրվեց տարածաշրջանի իրանագերծման քաղաքականությունը: Քաղաքական այդ ուղեգծի իրագործման համար կայսրությունը հենարան ընտրեց երկրամասում բոլորից ուշ հայտնված, փոքրաթիվ, բայց պարսիկի պոտենցիալ մրցակից թյուրքախոս բնակչությանը, որին «մկրտեց» կովկասյան թաթարներ (кавказские татары) անունով ու օժտեց տարբեր արտոնություններով»⁴:

1905-1907 թթ. Ռուսական կայսրության հատուկ ծառայությունները հրահրեցին հայ-թաթարական բախումներ. «1905 թ. փետրվարի 6-ին Բաքվում, տեղական իշխանությունների և անձամբ նահանգապետ Նակաշիձեի դրդմամբ, մոլեգնած թաթարները հարձակվեցին հայերի վրա:


Հրդեհեցին հայկական թաղամասեր, կողոպտեցին հայերի գույքն ու կահ-կարասին»⁵: ՀՅԴ-ն ստանձնեց հայության ինքնապաշտպանության գործը. Նիկոլ Դումանը, Մարտիրոս Չարոխյանը, Մկրտիչ Աղամալյանը, Հմայակ Ջանփոլադյանը, Աբրահամ Գյուլխանդանյանը, Վարդանը (Մարգիս Մեհրաբյան), Սեբաստացի Մուրադը (Խրիմյան), Քեռին (Արշակ Գավաֆյան), Համագասպը (Մրվանձտյան) ձևավորեցին ինքնապաշտպանական խմբեր: Քառօրյա արյունալի ընդհարումներից հետո խաղաղություն հաստատվեց, սակայն ցարական կառավարության հետադիմական ուժերի ջանքերով այդ բախումները տեղափոխվեցին նաև Անդրկովկասի այլ քաղաքներ:

1905 թ. օգոստոսին արյունալի բախումները վերսկսվեցին Բաքվում, որոնց ընթացքում սպանվեց շուրջ 400 մարդ: Հրդեհվեցին հայերին պատկանող նավթահորերը. վնասը շուրջ 25 մլն ռուբլի էր: Նոյեմբերի 20-ին Բաքվում ծավալվեց հայ-թաթարական ընդհարումների 3-րդ փուլը: Բախումներ տեղի ունեցան նաև Երևանի նահանգում և Նախիջևանում: Զինված հրոսակները 1905 թ. մայիսի 12-15-ը կողոպտեցին ու կոտորեցին հայերին: 182 հայապատկան խանութներից անվնաս մնացին միայն 4-ը: Տասնյակ հայկական գյուղեր ավերվեցին ու հրդեհվեցին, հայ ազգաբնակչությունն ունեցավ շուրջ 400 սպանված և վիրավոր: Բռնությունների փուլը Նախիջևանից տեղափոխվեց Շարուր-Դարապազյազի գավառ, Զանգեզուրի և Ղարաբաղի շրջաններ: Կատաղի կռիվներ տեղի ունեցան Ելիզավետպոլի նահանգում և բոլոր այն վայրերում, որտեղ հայ ու թաթար խառը բնակչություն էր ապրում:

«Երևանի նահանգում ինքնապաշտպանական ուժերի ղեկավարությունը ստանձնեց Նիկոլ Դումանը, Արցախում այն գլխավորեցին Վարդանն ու Համագասպը, Զանգեզուրում՝ Քեռին, Թիֆլիսում՝ Արմեն Գարոն (Գարեգին Փաստրմաճյան): Նիկոլ Դումանի ընդհանուր հրամանատարությամբ կռվում էին հին ու նոր բազմաթիվ խմբապետներ՝ Մաքոն, Խեչոն, Դրոն, Ռաշիդը, Մուրադը, Սեպուհը, Առաքելը, Առյուծ Ավագը, Կոփեցի Մուշեղը, Կոտոյի Հաճին և ուրիշներ:

Երևանում ազգամիջյան արյունալի բախումներ տեղի ունեցան 1905 թ. մայիսի 23-25-ը: Հայերի հակահարվածից հետո թաթարները, զգալի զոհեր տալով, այլևս չհամարձակվեցին նոր հարձակումներ ձեռնարկել»⁶:

Հայ-թաթարական կռիվներ տեղի ունեցան Շուշիում, Ասկերանում և Վարանդայում: Շուշիում բախումներն սկսվեցին 1905 թ. օգոստոսի 7-ին և տևեցին մի քանի շաբաթ: Դրանք կրկնվեցին նաև 1906 թ. հունիսին: Թիֆլիսում բախումներ տեղի ունեցան 1905 թ. նոյեմբերին: Շուրջ 500 հայ կամավորներ 3 օրվա ընթացքում (նոյեմբերի 22-25-ը) հակահարված տվեցին թաթար խուժանին և ապահովեցին Թիֆլիսի հայության (շուրջ 100 հզ.) անվտանգությունը: Թեև 1906 թ. որոշ վայրերում բախումները կրկնվեցին, սակայն այլևս զանգվածային բնույթ չստացան և



Դրո և Մուրադ

ավարտվեցին սեպտեմբերին:

Առավել հայատյաց ցարական պաշտոնյաների նկատմամբ ՀՅԴ-ն մահապատժի դատավճիռ կայացրեց: 1905 թ. մայիսի 11-ին Բաքվի Պարապետի հրապարակում Դրոն ահաբեկեց Բաքվի հայության ջարդերի գլխավոր կազմակերպիչ նահանգապետ Նակաշիճեին: Հայոց վրիժառությունից չխուսափեցին նաև Բաքվի ջարդերի այլ կազմակերպիչներ՝ Մահմեդբեկովը, Միքելաճեն, Շահթալաթինսկին: Ալեքսանդրապոլում Դրոն և Մարտիրոս Չարոխյանը ահաբեկեցին Նախիջևանի կոտորածների կազմակերպիչ գեներալ Ալիխանով-Ավարսկուն: Նիկոլ Դումանի գլխավորությամբ կազմակերպվեց Երևանի նահանգի թուրքամոլ պաշտոնյա Կենգելոյինսկու հետապնդումն ու սպանությունը. վերջինս խրախուսել էր թաթարների վայրագությունները:

1905-1906 թթ. հայ-թաթարական կռիվների ժամանակ ցարական շատ պաշտոնյաներ հիմնականում բացահայտ կամ ոչ լավ քողարկված կերպով աջակցում էին թաթարներին. «Առկասի փոխարքայի գիտությամբ և հովանավորությամբ թաթար հրոսակները Ելիզավետպոլի և Բաքվի նահանգներում ստեղծեցին «Դիֆայի» («Պաշտպանություն») կազմակերպությունը, որի նպատակը Բաքվի մահմեդական կապիտալիստների օգնությամբ ողջ Ղարաբաղի հողերը գնելն էր՝ դրանք բացառապես մահմեդականներով բնակեցնելու համար. «Ղարաբաղը վերածել մուսուլմանական պրովինցիայի, գենքով և փողով պարտադրել դարաբաղցիներին դուրս գալ այնտեղից», Ղարաբաղը դարձնել ադրբեջանական տարածք: «Դիֆային» զբաղվում էր ոչ միայն ահաբեկչությամբ, այլև մահասարսուռ թռուցիկներ էր տարածում՝ լուսնի վրա խաչվող 2 դաշույնների դրոշմով: Ի պատիվ դարաբաղցիների՝ ոչ ոք չհամաձայնեց իր տունն ու տեղը թողնել մահմեդականներին և հեռանալ»⁷:

Այս իրադարձություններից հետո տասնամյակներ շարունակ ազգամիջյան թշնամանքն ու հակասությունները Ռուսական կայսրությունը զսպում էր ուժի միջոցով, սակայն կայսրության փլուզումից և 1918 թ. մայիսի վերջերին այսրկովկասյան երեք

հանրապետությունների կազմավորումից հետո այդ հակասություններն ու թշնամանքն առավել սրությամբ դրսևորվեցին: Միայն 1918 թ. քարտեզի վրա հայտնված և հարևաններին տարածքային անհիմն պահանջներ ներկայացնող՝ արհեստականորեն Ադրբեջան կոչված պետությունը նկրտումներ ուներ ոչ միայն Իրանի ու Վրաստանի, այլև հիմնականում Հայաստանի տարածքների նկատմամբ: Երիտթուրք պարագլուխներից Էնվերի եղբոր՝ Նուրի փաշայի գործուն մասնակցությամբ ստեղծված Ադրբեջան պետությունը այս տարածաշրջանում Թուրքիայի պանթուրքիստական նկրտումների արգասիքն ու դրանց իրագործողն է, և հենց պանթուրքիզմի հեռահար նպատակներից ելնելով էր, որ թուրքադրբեջանական տանդեմը փորձեց զավթել հայկական Նախիջևանը, Արցախն ու Զանգեզուրը: Հայաստանի առաջին հանրապետության կառավարությունը հնարավոր բոլոր միջոցներով փորձում էր կանխել Հայաստանի այդ տարածքների զավթումը Ադրբեջանի կողմից, ինչն իրականացավ միայն 1920 թ. դեկտեմբերի 2-ին Հայաստանի խորհրդայնացումից հետո: Մինչդեռ մինչև Հայաստանի խորհրդայնացումը Ադրբեջանի հեղկումը հանդես էր եկել մի հայտարարությամբ, որով հրաժարվում էր Լեռնային Ղարաբաղի, Զանգեզուրի և Նախիջևանի նկատմամբ ունեցած հավակնություններից.

«Ադրբեջանը հրաժարվում է «վիճելի» տարածքներից, և տարածքային հարցերը չեն կարող երկու ժողովուրդների՝ «հայերի և մահմեդականների» միջև արյունահեղության պատճառ դառնալ: Հռչակագրով Խորհրդային Ադրբեջանի ղեկավարությունը Զանգեզուրի և Նախիջևանի գավառները ճանաչել է Խորհրդային Հայաստանի անբաժանելի մաս, իսկ Լեռնային Ղարաբաղի աշխատավոր գյուղացիությանը տվել ինքնորոշման իրավունք, պարտավորվել դադարեցնել ռազմական գործողությունները Զանգեզուրում և ադրբեջանական զորքերը դուրս հանել երկրամասից: 1920-ի նոյեմբերի 30-ին հրապարակվել է նաև Խորհրդային Ադրբեջանի հեղկումի նախագահ Ն. Նարիմանովի



Համազասպ և Արմեն Գարիբ

և արտաքին գործերի ժողկոմ Հուսեյնովի դիմում-ուղերձը՝ Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը Խորհրդային Հայաստանին վերամիավորելու մասին: Դիմում-ուղերձում Ադրբեջանի ղեկավարությունը հայտարարում է, որ Հայաստանի ու Ադրբեջանի միջև վերացված են սահմանային վեճերը, և այդ օրվանից Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը համարվում են Խորհրդային Հայաստանի անբաժան մասերը: Ադրբեջանի հեղկումի 1920-ի նոյեմբերի 30-ի հռչակագրի, «Հայաստանի ու Ադրբեջանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների կառավարությունների միջև եղած համաձայնության», ինչպես նաև Ռուսաստանի կոմունիստական (բանվորական) կուսակցության կենտկոմի Կովկասյան բյուրոյի 1921-ի հունիսի 3-ի որոշման հիման վրա՝ Խորհրդային Հայաստանի ժողկոմխորհը 1921-ի հունիսի 12-ին Լեռնային Ղարաբաղը հայտարարել է ՀԽՍՀ անբաժան մաս: Հայտնվելով մի կողմից թուրքական բացահայտ ռազմական ճնշման, մյուս կողմից՝ խորհրդայնացման անխուսափելիության առաջ՝ Հայաստանի կառավարությունը տեղի տվեց: Կառավարության, Դաշնակցության բյուրոյի և խորհրդարանի դաշնակցական ֆրակցիայի համատեղ խորհրդակցությունում որոշվեց ընդունել ռուսական առաջարկը: Մյուս կողմից՝ վտանգավոր զարգացումներից խուսափելու համար Ալ. Խատիսյանի պատվիրակությանը լիազորվեց ընդունել թուրքական պայմանները և ստորագրել հաշտության պայմանագիրը: Դեկտեմբերի 1-ին, երբ Հայաստանը դեռևս խորհրդայնացած չէր, Երևանում տեղի է ունենում խորհուրդների հանդիսավոր նիստը, որտեղ Գ. Օրջոնիկիձեն խոսում է Արցախը, Զանգեզուրն ու Նախիջևանը Հայաստանին թողնելու մասին. «Ինչ որ Զանգեզուր, անբերրի լեռներ, ո՛չ հաց կայ, ո՛չ ջուր: Այնտեղ ոչինչ չկայ: Ինչ որ Նախիջևան ճահիճ, մալարիա և ուրիշ ոչինչ: Ինչ որ Լեռնային Ղարաբաղ: Ինչ կայ այդ Ղարաբաղում: Ոչինչ չկայ: Եւ ահա ընկ. Նարիմանովն ասում է. «Դրանք ձեզ վերցրեք: Այդ անբերրի հողերը վերցրեք Հայաստանի համար»»⁸:

Ադրբեջանա-բոլշևիկյան այս ներկայացումը նպատակ ուներ արագացնելու Հայաստանի խորհր-



Նիկոլ Դաման

դայնացումը՝ վստահեցնելով, որ Հայաստանը տարածքային կորուստներ չի ունենա: Եվ ահա դեկտեմբերի 2-ին կնքվում է Հայաստանի խորհրդայնացման պայմանագիրը, որով Հայաստանը հռչակվում է «խորհրդային սոցիալիստական հանրապետություն»:

Հայաստանի տարածքի բզկտումը սկսվեց նրա խորհրդայնացումից հետո: 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի և հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրերով Հայաստանը կորցրեց մի շարք տարածքներ: Նույն թվականի հուլիսի 5-ին Արցախյան ապօրինաբար կցվեց Ադրբեջանին, Կարսի պայմանագրով Նախիջևանն արդեն տրվել էր այդ երկրին, և Հայաստանին մնաց միայն Զանգեզուրը, այն էլ՝ Նժդեհի գլխավորությամբ մղված երկարատև ու հերոսական պայքարի շնորհիվ:

1988-1994 թթ. Արցախյան շարժման և պատերազմի շնորհիվ հայ ժողովուրդն ազատագրեց 1921 թ. հուլիսի 5-ին Ստալինի և բոլշևիկ այլ պարագլուխների ճնշմամբ և Կաբլուրդյի որոշմամբ Ադրբեջանին բռնակցված Արցախը, որը յոթ տասնամյակ շարունակ Ադրբեջանը ապարդյուն փորձում էր հայաթափել: Հայությունը հերոսական պայքարի շնորհիվ ազատագրեց և ավելի քան երկու տասնամյակ շենացրեց Արցախը, և թվում էր, որ Արցախի ազատագրումն ու Հայաստանի անկախությունը անշրջելի իրողություն են, բայց այն, ինչ տեղի ունեցավ 2020 թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին, սառը ցնցուղ էր պարտությունների էջը փակած հայության կամ գոնե նրա մի հատվածի համար: Պատերազմի ընթացքում 44 օր հաղթանակի վերաբերյալ հավաստիացումներ լսող հանրությանը 2020 թ. նոյեմբերի 20-ին թիկունքից դաշույնի հարված հասցրեց Հայաստանի՝ Ադրբեջանի ձեռքին գործիք դարձած դեկավարը՝ Նիկոլ Փաշինյանը: 2020 թ. նոյեմբերի 9-ին հայ ժողովրդի թիկունքում կնքվեց, այսպես կոչված, հրադադարի համաձայնագիր, որը ստորագրեցին Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանը, Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը և Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինը: Համաձայնագրի կետերի մասին բազմիցս խոսել ենք, ուստի դրանք ևս մեկ անգամ մեջբերելն ավելորդ ենք համարում, միայն հիշեցնենք, որ այս փաստաթղթով Հայաստանը ոչ միայն կորցրեց Արցախի տարածքի 75 %-ը, այլև թուրքը, ավելի քան հարյուր տարի առաջ նախ Արամի, հետո Նժդեհի շնորհիվ վիժեցված պանթյուրքիզմի ծրագրին հետամուտ, հայտնվեց իր համար անհասանելի երազանք դարձած Զանգեզուրում: Շուրջի և Արցախի կորստով Հայաստանի Հանրապետությունը կանգնած է կործանման վտանգի առաջ, քանի որ ՀՀ դարպասները բացված են թշնամու առաջ, թշնամին, փաստորեն, նոյեմբերի 9-ից հետո առանց ջանք թափելու ստանում է այն ամենը, ինչ ուզում է՝ Սոթք, Որոտան, Երասխ, Նոր Այգեձոր, Կույթ, և ՀՀ այլ գյուղերին իշխող բարձունքները առանց դիմադրության հանձնվել են թշնամուն: Այս ամենով չբավարարվելով՝ թշնամին պահանջում է միջանցք Մեղրիով, ինչը կկտրի Հայաստանի



Հեղափոխական շարժումներն Արևելյան Հայաստանում և Անդրկովկասում 1905-06 թ.թ.: Հայ-թաթարական 1905-06 թ.թ. ընդհարումները

Հանրապետությունը Իրանի Հանրապետությունից և օղակի մեջ կվերցնի Հայաստանը:

Հայ-ադրբեջանական հարաբերությունները թևակոխել են մի նոր՝ հայության համար չափազանց ծանր փուլ, երբ հերթական անգամ խաղասեղանին դրված է Հայաստանի ու հայության լինել-չլինելու հարցը, որի պատասխանը պետք է տա ինքը՝ հայ ժողովուրդը, առաջիկա մեկ տարում թուրք-ադրբեջանական տանդեմի ու նրան դաշնակից Հայաստանի իշխանությունների վերաբերյալ իր դիրքորոշումը հստակեցնելիս: ■

Յղումներ

1. http://www.historyofarmenia-am.armin.am/am/Encyclopedia_of_armenian_history_HH_Ankaxutyun_hrchakumy.
2. <http://www.hhk.am/hy/news/item/2019/10/07/Sharmazan-ov1368/>.
3. Նույն տեղում:
4. Մանասյան Ա., Ինչո՞ւ ադրբեջանական հանրապետության ցեղասպանական վարքը արտացոլված չէ նրա քաղաքական նկարագրում, http://ysu.am/files/02A_Manasyan-1545980753-.pdf, էջ 22:
5. <https://www.encyclopedia.am/pages.php?bId=2&hId=1276>.
6. Նույն տեղում:
7. Նույն տեղում:
8. Վրացեան Ս., Հայաստանը բոլշևիկեան մուրճի և թրքական սայի արանքում, Պեյրոթ, 1953, էջ 127-128:

Օգտագործված գրականության ցանկ

1. Վրացեան Ս., Հայաստանը բոլշևիկեան մուրճի և թրքական սայի արանքում, Պեյրոթ, 1953:՝

Համացանցային նյութեր

1. http://www.historyofarmenia-am.armin.am/am/Encyclopedia_of_armenian_history_HH_Ankaxutyun_hrchakumy.
2. <http://www.hhk.am/hy/news/item/2019/10/07/Sharmazan-ov1368/>.
3. Մանասյան Ա., Ինչո՞ւ ադրբեջանական հանրապետության ցեղասպանական վարքը արտացոլված չէ նրա քաղաքական նկարագրում, http://ysu.am/files/02A_Manasyan-1545980753-.pdf:
4. <https://www.encyclopedia.am/pages.php?bId=2&hId=1276>.

ՀՅԴ Հայ դատի հանձնախմբերի հանրային կապերի զարգացման միտումները

Թամարա Գասպարյան

ԵՊՀ «PR և հաղորդակցային տեխնոլոգիաներ» մագիստրոսական ծրագրի շրջանավարտ

Հաղորդակցության առանձնահատկությունները

Հաղորդակցությունը և հանրային կապերը Հայ դատի հանձնախմբերի և գրասենյակների դեպքում, կատարած աշխատանքը հանրահռչակելուց բացի, ունեն գործառնության նշանակություն և ծառայում են որպես գործիք: Դրանք հնարավորություն են տալիս բարձրաձայնելու հայությանը հուզող խնդիրների մասին, նպաստում են հայ համայնքի անդամներին համախմբելուն, նրանց՝ որպես քաղաքացիների աջակցությունը ստանալուն, Հայ դատի հանձնախմբերի և գրասենյակների աշխատանքներին հայության ֆինանսական մասնակցությանը, ինչպես նաև մեծ դեր են խաղում թուրք-ադրբեջանական քարոզչությանը հակազդելու գործում:

Հայ դատի հանձնախմբերից և գրասենյակներից յուրաքանչյուրն ունի հաղորդակցության և հանրային կապերի իր առանձնահատկությունները, որոնք առաջին հերթին պայմանավորված են գործունեության երկրով, դրա քաղաքական մշակույթով, գործող հասարակական և քաղաքական համակարգերով, կառույցների նպատակներով, առաջադրած խնդիրներով, ինչպես նաև արդեն արձանագրած հաջողություններով:

Արևելքի երկրներում զարգացած չէ լոբբինգի ինստիտուտը, ինչպես Արևմուտքում է: Դա դժվարացնում է Հայ դատի Միջին Արևելքի գրասենյակի և Միջին Արևելքում գործող հանձնախմբերի աշխատանքն ու թելադրում հաղորդակցության և հանրային կապերի այլ միջոցների ու խողովակների ընտրություն: Նրանք իրենց գործունեությունը ծավալում են հիմնականում քարոզչության ոլորտում. սերտ կապեր են հաստատել արաբական գլխավոր լրատվամիջոցների հետ, համագործակցում են հետազոտական կենտրոնների և համալսարանների հետ, միասին աշխատասիրություններ, հրատարակություններ են պատրաստում, գրասենյակը զբաղվում է նաև թարգմանությամբ: Իսկ Արևմուտքի այն ժողովրդավարական երկրներում, որոնցում



զարգացած է էթնիկ լոբբինգի ինստիտուտը, հանրայնացման մեթոդները բավական շատ են ու առավել հասանելի, և Հայ դատի հանձնախմբերն ունեն հաղորդակցության առավել լայն հնարավորություններ, գործիքակազմ և համայնքների աջակցությամբ կարողանում են ազդել ընդունվող որոշումների վրա:

Հայ դատի հանձնախմբերի և գրասենյակների առանցքային նպատակներն են հայկական երկու հանրապետությունների միջազգային շահերի սպասարկումը հանրային դիվանագիտության գործիքակազմով, Հայոց ցեղասպանության ճանաչումը, հայության իրավունքների պաշտպանությունը, սակայն գործունեության ընթացքում ձևակերպվում են հստակ խնդիրներ, և աշխատանք է տարվում դրանք հյուրընկալ պետության բարձրագույն իշխանության քննարկման և որոշման ենթակա հարց դարձնելու ուղղությամբ:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հայ դատի հանձնախմբերի համար տեղեկության հաղորդման խողովակի դեր են կատարում բանավոր խոսակցությունը, հեռախոսային զրույցը, նամակները, սեմինարները, խորհրդակցությունները, խորհրդաժողովները, կլոր սեղան քննարկումները, տեղեկատվական թերթիկները, լրատվամիջոցները, հանձնախմբերի պաշտոնական կայքերը, սոցիալական ցանցերի էջերը, զանգվածային միջոցառումները, ուղիղ եթերները, տեսանյութերը, հայտարարությունները, ուղերձները, հաշվետվությունները և այլն: Հայ դատի՝ Արևմուտքում գործող հանձնախմբերի և գրասենյակների ներկայացուցիչները պարբերաբար ունենում են անհատական հանդիպումներ որոշում ընդունողների հետ, կառույցների աշխատանքում կիրառվում են նաև բաց նամակները, առցանց խնդրագրերը, դիմումները, ստորագրահավաքները,



բողոքի ակցիաները, ցույցերը, թուցիկների և տարատեսակ նյութերի հրապարակումը, պաշտոնյաներին ուղղված զանգերը, նամակները և այլն:

Հայ դատի հանձնախմբերի և գրասենյակների տարածած ուղերձների ճիշտ ապակողավորմանը, հասցեատիրոջը հաղորդելուն, ինչպես նաև ցանկալի որոշումների ընդունմանը նպաստում են նաև հայ ժողովրդի նկատմամբ բարեկամական վերաբերմունք ունեցող քաղաքական և հասարակական գործիչներն ու կազմակերպությունները, որոնք միևնույն ժամանակ կարող են լինել նաև ուղերձների հասցեատերեր:

Հայ դատի հանձնախմբերն ու գրասենյակներն ակտիվ գործունեություն են ծավալում թուրքերի, ադրբեջանցիների, թուրքամետ/ադրբեջանամետ գործիչների ու կազմակերպությունների ոչ հայանպաստ գործունեությանը հակազդելու և նրանց հակազդեցությունը կանխելու ուղղությամբ: Այդ գործում հաճախ օգնության են հասնում հաղորդակցությունն ու հանրային կապերը:

Հայ դատի հանձնախմբերն ու գրասենյակները տեղեկությունը մատուցում են հիմնականում այն լեզուներով, որոնք տարածված են իրենց գործունեության երկրներում: Դա պայմանավորված է նրանով, որ թիրախային լսարանը օտարազգի քաղաքական գործիչներն են, այդ երկրներում գործող լրատվամիջոցները, ինչպես նաև հայկական համայնքները, որոնց ոչ բոլոր անդամներն են լիարժեքորեն տիրապետում հայերենին:

Որևէ գործողություն կատարելու, պաշտոնյաների կողմից ընդունվող որոշումների վրա ազդելու ուղերձներն առանձնանում են իրենց ազդեցիկությամբ, հստակությամբ, հաճախ՝ հակիրճությամբ: Դրանք տարածվում են ինչպես որոշ հանձնախմբերի պաշտոնական կայքերում (նույնիսկ առանձին բաժիններ կան), այնպես էլ սոցցանցերի էջերում: Նման ուղերձներով աչքի է ընկնում, օրինակ, ԱՄՆ հանձնախումբը: Կոչերից մեկով հանձնախումբը հորդորում է դիմել Սպիտակ տանը և Կոնգրեսին՝ պատժամիջոցներ կիրառելու Թուրքիայի և Ադրբեջանի նկատմամբ հայ խաղաղ բնակչության դեմ կասետային ռումբերի օգտագործմամբ պատերազմական հանցագործություններ կատարելու համար: Հայ դատի Եվրոպայի գրասենյակը հանրությանը գործողությունների դրդող (Take action) հրապարակումներով աչքի չի ընկնում, քանի որ ունի այլ խնդիրներ. համակարգում է եվրոպական երկրներում գործող հանձնախմբերի գործունեությունը, աշխատանք տանում եվրոպական կառույցների ներկայացուցիչների հետ: Նման ուղերձներ տարածում են Եվրոպայում գործող առանձին հանձնախմբեր: Իսկ Միջին Արևելքի գրասենյակի ֆեյսբուքյան էջում նմանատիպ հրապարակումներ չկան՝ պայմանավորված արաբական երկրների քաղաքական մշակույթով:

Հայ դատի կառույցներն ապավինում են հայ համայնքների ներկայացուցիչների ֆինանսական աջակցությանը և հանգանակություններին: Նվիրատվություններ ստանալու ակնկալիքով հանձնա-

խմբերն ու գրասենյակները պարբերաբար դիմում են համայնքներին: Դրա համար որոշ կայքերում բաժիններ կան, իսկ ուղերձներն առանձնահատկ ուշադրության են արժանի:

Հայ դատի հանձնախմբերի և գրասենյակների տարածած հաղորդագրություններում երբեմն կիրառվում են պատկերավորման միջոցներ՝ հակադրություններ (Armenia restores mosques. Azerbaijan bombs churchs.²), փոխաբերություններ (Turkey adding fuel to the Azerbaijani fire.³), խաչաձևումներ (Yerevan wants peace. Baku wants Yerevan.⁴), համեմատություններ և այլն, որոնք առավել ազդեցիկ և տպավորիչ են դարձնում ուղերձները:



Պարտերազմական հանցագործությունների ահազանգ⁵



Բարվի ջարդերի մասին հիշեցում⁶

Հայ դատի հանձնախմբերը տեղեկությունը ներկայացնում են՝ օգտագործելով ինչպես խոսքային, այնպես էլ ոչ խոսքային միջոցներ՝ լուսանկարներ,

տեսանյութեր, գրաֆիկներ, անիմացիաներ, տարբեր տառատեսակներ, տառաչափեր, մեծատառեր, գույներ (հիմնականում կարմիր, կապույտ, երկնագույն, դեղին) և այլն: Նրանց տարբերանշանները թեև ունեն ընդհանրություններ, այնուամենայնիվ, շեշտադրումների առումով նկատվում են տարբերություններ (կապ ունեն գործունեության վայրը, առաջադրված խնդիրները, թիրախային լսարանը և այլն):



Թուրքական պետության կողմից ֆինանսավորվող ռասիզմ

Հանրային կարծիքի և լրատվամիջոցների դերը Հայ դատի հանձնախմբերի աշխատանքում

Հայ դատի հանձնախումբը իր գործունեության հենց սկզբից կարևորել է հանրության հետ հարաբերությունները, մասնավորապես՝ նրա իրազեկումը Հայ դատի մասին: Իր գործունեության մասին խոսել, խնդիրները բարձրաձայնել է տարբեր միջոցներով՝ մամուլով, ռադիոյով, հրապարակային ժողովներով, տպագրված նյութերով և այլն. հանրային կարծիքի ձևավորման կարևոր նախապայմանը տեղեկության հասանելիությունն է:

Անկախ հանձնախմբերի և գրասենյակների գործունեության առանձնահատկություններից՝ հանրային կարծիքի ուսումնասիրումն ու ձևավորումը Հայ դատի կառույցների ներկայացուցիչների ուշադրության կենտրոնում են: Մեթոդները, սակայն, տարբեր են. Միջին Արևելքի երկրներում դրանք սահմանափակ են, իսկ Արևմուտքում կան հանրային կարծիքի ձևավորման բազմաթիվ հնարավորություններ, որոնք ևս նպաստել են Հայ դատի՝ Միացյալ Նահանգներում, Կանադայում, Եվրոպայում, Ավստրալիայում գործող հանձնախմբերի ու գրասենյակների գործունեության և դրա ընթացքում կիրառվող մեթոդների, տեխնոլոգիաների, խողովակների, կողմորման փոփոխություններին և փոխակերպումներին:

Հայ դատի հանձնախմբերի և գրասենյակների աշխատանքում հանրային կարծիքի ձևավորումը հնարավոր է դառնում հանրային կապերի, լրատվամիջոցների, սոցիալական մեդիայի, տարատեսակ գիտական ուսումնասիրությունների, գրքերի, ինչպես նաև կարծիքի առաջնորդների և այլ միջոցներով: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հայ դատի որոշ հանձնախմբերի և գրասենյակների գոր-

ծունեության ընթացքում հանրային կարծիքը հիմնականում արտահայտվում է բողոքի ակցիաների, պաշտոնյաներին ուղղված նամակների և զանգերի, ստորագրահավաքների, ինչպես նաև լրատվամիջոցների միջոցով:

Լրատվամիջոցների դերը Հայ դատի հանձնախմբերն ու գրասենյակներն իրենց գործունեության հենց սկզբից էլ կարևորել են և նույնիսկ գրավոր ամրագրել դա: Այսօր օրակարգային թեմաների և հանձնախմբերի ու գրասենյակների գործունեության լուսաբանումները կատարվում են և հայաստանյան, և արտասահմանյան, և համայնքային լրատվամիջոցներով, և դրանցից յուրաքանչյուրում հրապարակումներն ունեն իրենց յուրահատկությունները: Համայնքային լրատվամիջոցներում հրապարակված ուղերձները կատարում են ինչպես տեղեկատվական, այնպես էլ կազմակերպական, համախմբման գործառույթներ: Արտասահմանյան լրատվամիջոցներով տարածվող տեղեկությունները և նյութերը նպատակ ունեն կարևոր ուղերձներ հասցնելու օտարերկրյա լսարանին, իսկ աշխարհահռչակ ԶԼՄ-ներով տարածվողները՝ միջազգային հնչեղություն տալու տարատեսակ հարցերի: Հայաստանյան լրատվամիջոցներով հիմնականում հրապարակվում են Հայ դատի կենտրոնական գրասենյակի տրամադրած մամուլի հաղորդագրությունները, հայտարարություններ, այլ նյութեր, տրվում են պարզաբանումներ հայկական երկու հանրապետություններին, Հայոց ցեղասպանությանն առնչվող այս կամ այն հարցի, դրանց վերաբերյալ օտար երկրների և միջազգային կառույցների ընդունած որոշումների և այլ թեմաների մասին:

Չունենալով հաղորդակցության և հանրային կապերի՝ Արևմուտքի երկրներում առկա լայն հնարավորությունները և գործիքակազմը՝ Հայ դատի Միջին Արևելքի գրասենյակի աշխատանքում մեծ տեղ է հատկացվում լրատվամիջոցների հետ հարաբերություններին: Կառույցը սերտ կապեր է հաստատել արաբական աշխարհի գլխավոր ԶԼՄ-ների՝ թերթերի, հեռուստաընկերությունների, լրատվական գործակալությունների, անցանց լրատվամիջոցների հետ և այս առումով մի շարք հաջողություններ արձանագրել: Արևմուտքի զարգացած ժողովրդավարություններում թեև կան էթնիկ շահերի պաշտպանության լայն հնարավորություններ, հաղորդակցության մեջ, ի թիվս այլոց, անգնահատելի է լրատվամիջոցների նշանակությունը:

Ըստ էության, ասելիքը թիրախային լսարանին հասցնելու նպատակով լրատվամիջոցների ընձեռած հնարավորությունները Հայ դատի հանձնախմբերն իրենց գործունեության ողջ ընթացքում էլ օգտագործել են, և տարիների ընթացքում ԶԼՄ-ների հետ հարաբերությունների առանձնահատկություններն ու փոխակերպումները պայմանավորված են առաջին հերթին նորագույն տեխնոլոգիաների առաջընթացով և տեղեկությունն անմիջականորեն հաղորդելու հնարավորությունների ընդլայնմամբ: Երկրորդ կարևոր գործոնը լրատվադաշտի զարգացման միտումներն են, որոնց վրա մեծ ազդեցություն ունի հենց նորագույն տեխնոլոգիաների՝ լրատվական դաշտ

ներթափանցումը:

Հայ դատի հանձնախմբերի հանրային կայքերի հիմնական միտումները նորագույն տեխնոլոգիաների ժամանակաշրջանում

Նորագույն տեխնոլոգիաները Հայ դատի հանձնախմբերի և գրասենյակների աշխատանքը զգալիորեն հեշտացրել են, տեղեկության հաղորդումը՝ դարձրել օպերատիվ, հաղորդակցությունը՝ առավել փոխներգործուն (ինտերակտիվ): Այդ է վկայում կառույցների մեծ ներկայացվածությունն առցանց տիրույթում:

Հայ դատի առավել մեծ հանձնախմբերն ու գրասենյակներն ունեն պաշտոնական կայքեր: Դրանցից յուրաքանչյուրը ունի իր առանձնահատկությունները, բայց և կան հատկանիշներ, որոնք ընդհանուր են բոլորի համար: Կայքերում կարելի է տեղեկություններ գտնել հանձնախմբերի պատմության, աշխատանքի ուղղությունների, հայությանը/համայնքների հուզող հարցերի, հանձնախմբերի դիրքորոշումների մասին: Հրապարակվում են նաև մամուլի նյութեր, պատմական տեղեկություններ, փաստաթղթեր, աշխատանքի հաշվետվություններ և այլն: Առանձնահատուկ ուշադրության են արժանի որոշ հանձնախմբերի ու գրասենյակների կայքերի այն բաժինները, որոնք կոչ են անում որևէ գործողություն կատարելու՝ մասնակցելու ստորագրահավաքի, նամակ ուղարկելու պաշտոնյաներին, նվիրաբերություն անելու և այլն: Նորագույն տեխնոլոգիաներն այդ քայլերի կատարումը բավական հեշտացրել են. հաճախ պահանջվում է ընդամենը մի քանի վայրկյան:

Հայ դատի կառույցները ներկայացված են «Facebook»-ում, «Twitter»-ում, «Instagram»-ում, «LinkedIn»-ում և այլ սոցիալական ցանցերում: Հանձնախմբերի և գրասենյակների՝ հարթակների առումով նախընտրությունները տարբեր են (պայմանավորված առարկայական և ենթակայական գործոններով), սակայն բոլոր սոցցանցերում հետևորդների թվով առաջատարը Հայ դատի Ամերիկայի հանձնախումբն է (դա թերևս պայմանավորված է հանձնախմբերի շարքում կառույցի ամենամեծ փորձառությամբ և «Facebook»-ի ընձեռած հնարավորություններն առաջինը կիրառելու հանգամանքով): 2021 թ. ապրիլի դրությամբ յուրաքանչյուր հանձնախմբի պարագայում հետևորդների ամենամեծ թիվը «Facebook»-ում է: «Twitter»-ում և «Instagram»-ում հետևորդների թիվը տարբեր հանձնախմբերի պարագայում տարբեր է: «LinkedIn»-ը՝ որպես հստակ ուղղվածություն ունեցող հարթակ, կարծում ենք, լիարժեքորեն չի ծառայում հանձնախմբերի և թիրախային լսարանի միջև կապի ապահովմանը, ուստի այս սոցցանցում հանձնախմբերի էջերի ակտիվությունը և հետևորդների թիվը մեծ չեն:

Հայ դատի հանձնախմբերն ու գրասենյակներն առցանց տիրույթում մեծ ուշադրություն են դարձնում նաև տեսողական բովանդակությանը՝ նկարներին, տեսանյութերին, գրաֆիկներին, անիմացիաներին, գրաֆիկական դիզայնին, գույներին, տառատեսակին, տառաչափին և այլն:



Մուրբ ծննդյան բաղադրապուրակ⁸

Ամփոփելով նշենք, որ Հայ դատի հանձնախմբերի և գրասենյակների պաշտոնական կայքերը և սոցիալական ցանցերում էջերը ծառայում են հիմնականում լուրերի հրապարակմանը, ուղերձների տարածմանը, գործունեության հաշվետվությանը, հանրային կարծիքի ձևավորմանը, հետևորդների (համախոհների) հետ հաղորդակցությանը և փոխներգործուն հետադարձ կապի ապահովմանը: Դրանք չեն փոխարինել պետական պաշտոնյաների հետ անձնական հանդիպումներին, նամակագրություններին և ԶԼՄ հրապարակումներին, այլ դարձել են հաղորդակցության նոր՝ բավական արդյունավետ միջոցներ: ■

Ֆոտոմներ

1. Տևն Sanction Aliyev and Erdogan, <https://marchtojustice.org/sanction-now/issue-form/0/0> (մուտք՝ 08.03.2021):
2. <https://bit.ly/3nddbPT> (մուտք՝ 08.03.2021), թարգմ.՝ Հայաստանը վերականգնում է մզկիթները: Ադրբեջանը նմրակոծում է եկեղեցիները
3. <https://bit.ly/3FtDp7I> (մուտք՝ 11.02.2021), թարգմ.՝ Թուրքիան վառելիք (յոդ) է լցնում Ադրբեջանի կրակին:
4. <https://bit.ly/3Fam7fa> (մուտք՝ 11.02.2021), թարգմ.՝ Երևանն ուզում է խաղաղություն: Բաքուն ուզում է Երևանը:
5. <https://www.facebook.com/armeniannationalcommitteek/photos/3647539761957040> (մուտք՝ 08.03.2021).
6. <https://www.facebook.com/ancagrassroots/photos/10157136340551859> (մուտք՝ 15.03.2021).
7. <https://www.facebook.com/ancagrassroots/photos/10158251138486859> (մուտք՝ 15.03.2021).
8. <https://www.facebook.com/ancaustralia/photos/3477621838958631> (մուտք՝ 13.03.2021).

ՀՅԴ կուսակցության գաղափարախօսությունը մարմնավորող քայլերգը՝ «Մշակ, բանուոր, ռենչպեր աղբեր»-ը (Երգի մը պատմությունը)

Առ Գաթրճեան

Իրաքանչիւր կուսակցութիւն բնականաբար կ'ունենայ իր ծրագիրն ու կանոնագիրը: Ծրագիրը կուսակցութեան անդամներուն գաղափարական առաջնորդն է, կուսակցութեան հիմնական առաջադրանքներուն և հետապնդած նպատակներուն տեսական և պատճառաբանուած բանաձևումը: Իսկ կանոնագիրը կը ճշդէ կուսակցութեան անդամներու պարտաւորութիւններն ու իրաւունքները, ընդհանուր կերպով՝ գործելու և վարուելու եղանակը, անհատ անդամներու և անոնցմէ ընտրուած մարմիններու փոխարարելութիւնները, ժողովական կարգ-կանոնը և այլն:

Կուսակցութիւնը կ'ունենայ նաև իր զինանշանը, դրօշը, քայլերգը, որոնք կը խորհրդանշեն և կը մարմնավորեն տուեալ կուսակցութեան գաղափարախօսութիւնը:

Առ այդ կուսակցութեան մը հեղինակութիւնը, գործունէութեան ընթացքը, կառուցուածքը, կազմակերպչական ու գաղափարական կառոյցի հոլովոյթը և ընդհանրապէս անոր արժէքի մասին կարելի է կռահել և ըմբռնել այդ կուսակցութեան սրբութիւն նկատուած ծրագիր-կանոնագիրի, զինանշանի, դրօշի և քայլերգի միջոցով, ինչպէս նաև կեանքի կոչումէն ետք անոր գործունէութեամբ:

Այս յօդուածին մէջ կ'անդրադառնանք 1890 թ. հիմնուած «Հայ Յեղափոխականների Դաշնակցութիւն», ապա՝ «Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն» կուսակցութեան քայլերգին՝ «Մշակ, բանուոր, ռենչպեր աղբեր»-ին:

Ինչ պայմաններու մէջ ծնունդ առաւ ՀՅԴ քայլերգը, երբ, ինչպէ՛ս, որո՞ւ կողմէ, և ինչո՞ւ հեղինակին անունը ընդհանրապէս մեծ զանգուածի կողմէ անձանօթ կը մնայ:

Մեր հիմնական նիւթը, որքան ալ խորագրէն յստակ թուի, որ երգի մասին է, սակայն ՀՅԴ քայլերգի հանգամանքը նկատի առնելով և անոր հետ առնչուած և յառաջացած կարգ մը բարդոյթները ճշգրտօրէն լոյս աշխարհի բերելու նպատակով պարտաւորուած ենք հիմնական նիւթը ներկայացնել երեք կարևորագոյն ուղղութիւններու վրայ.

ա. «Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն» կուսակցութիւնը,

բ. «Մշակ, բանուոր, ռենչպեր աղբեր» քայլերգի վերլուծումը,

գ. քայլերգի հեղինակը և անոր յարափոփոխ ու այլամերժ նկարագրային գիծերը հանդէպ ՀՅԴ-ի:

Մեր նպատակն է Դաշնակցութեան քայլերգը լուսարձակի տակ առնել և անոր հիման վրայ վերլուծել ու վերարժևորել կուսակցութեան մը ծնունդ տուող ազգի մը կեանքը, անոր հոգեմտաւոր-քաղաքական-



գաղափարական աշխարհը, հարազատ նկարագիրը: Այս մէկը կը պահանջէ թէ՛ երաժշտական և թէ՛ ազգային-քաղաքական վերլուծումը, ինչպէս նաև կուսակցական կարգապահական միջոցներու կիրառման հոլովոյթը:

ՀՅ Դաշնակցութիւնը ծնունդ առաւ և գործեց հետզհետէ սաստկացող փոթորիկներու մէջ: Ան մարմնավորեց օտար բռնագրաւողին և ստրկացնողին դէմ ժողովրդային արդար ընդվզումը, կերտեց հունը՝ ստրկութեան շղթաները կոտրելու ձգտող պայքարին, առանց սակարկելու վերցուց մեր ժողովուրդին ուղղուած ճակատագրական մարտահրաւէրներու ձեռնոցները, յաջորդական սերունդներ վարակեց ազգային-ազատագրական պայքարի ոգիով և զանոնք նետեց յաճախ անհաւասար կռիւի դաշտ՝ գործնապէս ցոյց տալով բոլորին՝ հայոն և ճնշող օտարին, թէ բազմահազար տարիներու կեանք ունեցող հայ ժողովուրդը՝ սեփական հողի, մշակոյթի և ազգային-քաղաքական ժառանգութեանց տէր այս ժողովուրդը, վճռած է չհետանալ պատմութեան բեմէն, այլ ապրիլ ու գոյատևել, իբրև ինքնուրոյն ազգ-պետութիւն վերատիրանալ այդ ժառանգութեանց և վերականգնել ու կերտել իր հաւաքական կեանքը իր սեփական հողին վրայ:

ՀՅ Դաշնակցութիւնը պայքարի դաշտ մուտք գործեց նախ և առաջ ժողովուրդին համար տանելի պայմաններ ապահովելու, հայուն արդար քրտինքով շահուած հացը անոր ընտանիքին ու զաւակներուն բաժին պահելու նպատակով:

Սեփական հողի վրայ մղուած այդ պայքարին հանգրուանները եղան ֆետայական մեծ ու փոքր կռիւները, ինքնապաշտպանական ճակատագրական մարտերը՝ հայկական պետականութիւնը վե-

րականգնելու տեսլականով: ՀՅ Դաշնակցությունը այդ մարտահրավերները դիմագրաւեց մէկ իտէլով՝ իրեն ծնունդ տուող ժողովուրդին անսակարկ ծառայելու կամքով:

ՀՅ Դաշնակցությունը օրըստօրէ բացառիկ վարկ ձեռք բերաւ հայ կեանքի մէջ: ՀՅ Դաշնակցությունը շուտով լայն գործունէութիւն ծաւալեց Արևելեան Հայաստանի մէջ. Կուկունեանի արշաւանք, Պանք Օթոման, Խանասորի արշաւանք, ռուսահայոց ազգային-եկեղեցական գոյքերու պաշտպանութիւն՝ ընդդէմ ցարիզմի, Սասունի ապստամբութիւն, սուլթանի մահափորձ, հայ-թաթարական կռիւներ, միջազգային դիւանագիտական ձեռնարկներ և ժամանակի ընթացքին տակաւին գործունէութեան շատ ու շատ դաշտեր: ՀՅ Դաշնակցութեան պատմությունը այնուհետև պիտի ըլլար հայոց պատմությունը:

Պէտք է ըսել, որ ՀՅԴ կուսակցությունը ծնունդէն մինչև 1905 թուականը քայլերգ չունէր, և ոչ մէկ փորձ կատարուած էր այդ ուղղութեամբ:

1905 թ. հոկտեմբերին Ռուսիոյ մէջ տեղի ունեցաւ յեղափոխութիւն: Մէկ-երկու տարի փոքր-ինչ շունչ քաշեցին ցարական բռնակալութեան տակ հեծող ժողովուրդները, նաև հայութիւնը: Հիմնուեցան արհեստակցական, քաղաքական և մշակութային կազմակերպութիւններ, բացուեցան դպրոցներ, ստեղծուեցաւ կուսակցական մամուլ և այլն:

Դաշնակցութեան ձեռքն անցաւ ղեկավարությունը բովանդակ հայ կեանքի, ոչ պակաս չափով՝ նաև զուտ բանտորական և գիւղացիական շարժումներու: Գործադուլները և աշխատատեղերի ցոյցերը սովորական երևոյթ դարձան: Ապարդիւն անցան Դաշնակցութեան հակառակորդներու և մասնաւորապէս սոցիալ-դեմոկրատներու ջանքերը՝ խլելու ղեկավարությունը կուսակցութեան ձեռքէն:

Այստեղ խիստ անհրաժեշտ կը նկատենք մէջբերել վերոնշեալ միտքին առնչուող՝ ՀՅ Դաշնակցութեան անդրանիկ ծրագրի մէկ կարևոր այն հատուածը, որ առաջին անգամ լոյս տեսած է ՀՅԴ պաշտօնաթերթ «Դրօշակ»-ի առաջին էջին՝ «Մեր ծրագիրը» խորագրին տակ, որուն մէջ կեղեքողներու և կեղեքուողներու մասին կ'ըսուի. «Այն ժամանակից, երբ մարդկությունը ոտ է դրել քաղաքակրթութեան ուղիի վրայ, այն ժամանակից, երբ նա սկսել է ունենալ իր պատմությունը, մենք տեսնում ենք ամէն տեղ և ամէն ժամանակ իշխողներ ու հպատակներ, կեղեքողներ և կեղեքուողներ, տանջողներ և տանջուողներ: Տարապէսի լաց ու կոծի, աշխատատեղի ծանր տնքոցի հետ միասին ամէն տեղից մեր ականջին են հասնում ձրիակները իշխողների ցնծական աղաղակները»: Ապա կը շարունակուի. «Եւ նա կը հասնի կատարեալ յաղթութեան, երբ կը վերանան ամէն տեսակ դասակարգեր, երբ աշխատանքի միջոցները և արդիւնքը կը դառնան աշխատատեղի կատարեալ սեփականություն, երբ մարդկանց կառավարութեան կը փոխարինի իրերի կառավարությունը»:



Գրիգոր Մյունի

Այսպիսով՝ տնտեսությունը դարձած էր բոլորին հետաքրքրութեան առարկան: ՀՅԴ-ն ևս, ազդուելով իր միջավայրէն, քննարկումներ կազմակերպեց ընկերային և տնտեսական հարցերու շուրջ, հիմնեց արհեստատեղական միութիւններ և նախաձեռնեց «Կովկասեան նախագիծ»-ը, որ հիմքը դրաւ ՀՅ Դաշնակցութեան ընկերվարացման և առիթ տուաւ անոր Ռուսիոյ մէջ համագործակցելու այլ ընկերվարական կուսակցութիւններու հետ և իր մեծ մասնակցութիւնը բերելու 1905 թ. ռուսական յեղափոխութեան:

1906 թ. վերջերուն ՀՅԴ անդամ երգահան-երաժշտագէտ Գրիգոր Միրզայեան-Միւնի, որ կը բնակէր Թիֆլիսի «Մամա-Դալիթ» (վրացերէն, իսկ հայերէն՝ Սուրբ Դալիթ, Հայր Դալիթ) կոչուած բլուրի լանջին գտնուող տան մը մէջ, միտք մը կը յղանայ ՀՅԴ կուսակցութեան նուիրուած յատուկ քայլերգ մը յօրինելու և դաշնաւորելու, որուն մէջ ըլլար կուսակցութեան դաւանած գաղափարական վարդապետությունը:

Ո՛վ էր Գրիգոր Միրզայեան և երաժշտական ինչ կարողութիւններ ունէր: Ան ծնած է 10 սեպտեմբեր 1876 թ. Գետաբեկ (Գանձակի շրջան)՝ երաժիշտներու ընտանիքի մը մէջ: Միւնիքի իշխանական տոհմի՝ Միւնիներու հետ հեռաւոր կապի պատճառով յետագային Միւնի մականունը որդեգրած է: 1878 թ. ընտանիքով փոխադրուած է Շուշի, ուր ստացած է նախնական կրթությունը: 1891 թուականէն սորված է Ս. Էջմիածնի «Գէորգեան» ճեմարանին մէջ և Քրիստափոր Կարա-Սուրբայի

ու Կոմիտաս վարդապետի ազդեցութեամբ զբաղած ժողովրդական երգերու հաւաքումով ու դաշնաւորումով: 1895 թ. աւարտելով ճեմարանը՝ Շուշիի մէջ երգչախումբ կազմակերպած և համերգ տուած է իր բազմաձայնած ժողովրդական երգերով: Նոյն տարին մեկնելով Ս. Փեթերպուրկ՝ 1898-1904 թթ. ուսանած ու աւարտած է տեղոյն երաժշտանոցը, նաև ղեկավարած է տեղոյն հայկական եկեղեցիի երգչախումբը:

Երիտասարդ տարիքէն Գրիգոր Սիւնի քաղաքական գործունէութեամբ զբաղած է: Անդամակցած է ՀՅ Դաշնակցութեան և իր երաժշտական գործունէութիւնը նաև ի սպաս դրած է կուսակցութեան՝ յօրինելով ազգային-յեղափոխական երգեր: Միաժամանակ մշակած է հոգևոր և ժողովրդական երգեր ու գրած մեներգեր և բազմաձայն գործեր:

Սիւնն Վրացեան Սիւնիի մասին այսպէս կ'արտայայտուի. «Երաժշտագէտ Գրիգոր Սիւնին իմ մտերիմ ընկերներից էր: Գոնէ ինքը այդպէս էր ցոյց տալիս: Եւ արդէն ո՛ւմ հետ մտերիմ չէր Սիւնին:


Ղարաբաղցի էր, դարաբաղցիական շէշտուած յատկութիւններով: Արտաքինով կոպիտ և առաջին հայեացքից անհամակրելի: Կոշտ խօսելակերպ և շո-ղոքորթ լեզու ունէր: Այդ կառապանի տեսքով մարդը օժտուած էր երաժշտական անվիճելի տաղանդով: Պատանի տարիքին թառ էր նուագում թրքական չայխաններում: Ապա յաջողել էր երաժշտութիւն ուսանել Պետերբուրգում՝ միաժամանակ կատարելով դպրապետի պաշտօն Հայոց եկեղեցում:

Կատաղի դաշնակցական էր Գրիգոր Սիւնին՝ ձախ հակումներով»:

1905-1907 թթ. Գրիգոր Սիւնի երաժշտութիւն դասաւանդած է Թիֆլիսի Ներսէսեան դպրոցին մէջ և Հայոց դրամատիկական ընկերութեան միջոցով բեմադրած իր «Արեգնազան» օփերան: Նաև գրած է «Ալի և Քարամ» երգախառն թատերախաղը: Անոր յետագայ ստեղծագործութիւնները գլխաւորաբար համերգային գործունէութեան նուիրուած են:

Գրիգոր Միրզայեան-Սիւնի այդ ժամանակաշրջանին տեսած ու ապրած էր Ռուսիոյ յեղափոխութեան դրդապատճառը՝ բանուորութեան նիւթական թշուառութիւնը, տանջանքն ու զրկանքը, և առնուած քայլերը՝ վերջ տալու անարդար և անհաւասար համակարգին՝ խլելով դրամագլուխի հարստութիւնը փոքրամասնութեան ձեռքէն և յանձնելով զայն բանուորներուն: Իսկ միւս կողմէ Կովկասի շրջանի, յատկապէս Պաքուի, Թիֆլիսի և հայահոծ այլ քաղաքներու մէջ հայ բանուորին վիճակը տարբեր չէր այլ ազգի բանուորներու վիճակէն. ճարտարարուեստի նոր հնարքին հետ միասին անոնք ևս դատապարտուած էին շահագործումի, ենթարկուած էին տանջանքի և զրկանքի:

Այս բոլորը պատճառներ էին, որ դաշնակցական երգահան-երաժշտագէտ Գրիգոր Միրզայեան-Սիւնին ազդուէր նախ տարածաշրջանի մէջ տեղի ունեցած ընկերային, տնտեսական ու հասարակութիւնը յուզող կենսական իրադարձութիւններէն, ապա՝



Ներսիսյան դպրոցը

ՀՅԴ-ի նախաձեռնած «Կովկասեան նախագիծ»-էն, որ հիմը դրաւ ՀՅ Դաշնակցութեան առաջնային հիմունքներէն ընկերվարացման:

Շտուաբար Դաշնակցութիւնը մեծ դերակատարութիւն ունէր օրուան ռուսական պայմանները՝ մարքսականութիւնը յարմարեցնելու հայկական պայմաններուն հետ: Այս առնչութեամբ քաջ տեղեակ ենք բանուորներու վերաբերեալ Ռոստոմի (Ստեփան Զօրեան) պաշտպանած թեզին բանուորներու, որուն գրիչին կը պատկանի ՀՅԴ անդրանիկ ծրագիրին «Ընդհանուր տեսութիւն» բաժինը (յետագային վերամշակուած):

Գրիգոր Սիւնի Թիֆլիսի իր բնակարանին մէջ օրեր շարունակ լծուեցաւ կուսակցութեան քայլերգի ստեղծման: Մէկ կողմէ՝ բառերու գրութիւն, միւս կողմէ՝ երաժշտական յօրինում: Իր քովը գացող ընկերներու առջև կը կարդար յօրինել սկսած «Մշակ, բանուոր...»-ի տողերը և միևնոյն ժամանակ կը նուագէր իրմէ անբաժան եղող դաշնակի նուագակցութեամբ, կը փորձէր սեփական եղանակաւորումը: Եւ այդպէս՝ շարք մը անգամներ, մինչև որ քայլերգը վերջնականապէս պատրաստ էր:

Սիւնի երկար ժամեր տրամադրեց քայլերգի յօրինման: Ամբողջ թափով լծուեցաւ երաժշտական արուեստի իր մօտեցումներն ու սկզբունքները կատարելագործելու աշխատանքին: Վերջապէս երկարատև այդ աշխատանքին արգասիքը եղաւ իրայատկութեամբ և մասնագիտական բարձր ճաշակով քայլերգ մը:

Ահա այդպէս ծնունդ պիտի առնէր «Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն» կուսակցութեան քայլերգը:

Ստորև կը ներկայացնենք ՀՅԴ քայլերգի բնագիրը.

*Մշակ, բանուոր, ռենչպէր աղբէր,
Արիք, միասանք, յառաջ գնանք...
Աշխատանքի դարի պաշտպան
Դաշնակցութեան թև-թիկունք քանք:*

Ա՛խ, մենք քանջուենք, քրտիկս թափենք,



Նիկոլ Աղբալյան

*Արին-վաստակ դարենք, դիզենք,
Շահագործող ցեցեր վատենն,
Իսկ մեզ չոր հաց բաժին հանեն:*

*Դէհ, սև օրեր, բողոք դարձէք,
Արին, քրտինք երկունք մորէք,
Տանջանք, զրկանք լեզու առէք,
Սոցիալիզմի ճամբայ բացէք...³*

Պէտք է նշել, որ քայլերգի բնագրին մէջ վերջին տողի առաջին բառը, ըստ օրուան պայմաններուն և քայլերգի ծնունդի դրդապատճառներուն, մեկնած՝ արձանագրուած է «Սոցիալիզմի»: Յետագային, սակայն, այդ բառը փոխարինուած է «Դաշնակցութեան» բառով: Ուրեմն՝ «Դաշնակցութեան ճամբայ բացէք»:

«Մշակ, բանուոր...»-ը այդ տարիներուն տակաւին շատ չէր երգուեր դաշնակցական հաւաքոյթներու խրախմբանքներու ժամանակ, այնպէս որ ՀՅԴ շարքայիններու համար «Մշակ, բանուոր...»-ը տակաւին անձանօթ կը մնար:

Ուսումնասիրելով 1905 թուականին Ռուսիոյ և Կովկասի տարածաշրջանի մէջ ստեղծուած գաղափարախօսական մթնոլորտը ընդհանրապէս և ՀՅԴ քայլերգն ու անոր բառերու իմաստը յատկապէս՝ կը հետևեցնենք, թէ երգը իր բովանդակութեամբ կոչ մըն է, ուղղակի կոչ մըն աշխատատար հանրութեան՝ միանալու և պայքարելու ընդդէմ անարդարութեան՝ գլխաւոր կիզակէտը «դասակարգ»-ի մը կամ հասարակական «հատուած»-ի մը վրայ կեդրոնացած:

Հոն կը յայտնուին հիմնական քանի մը բառեր՝ միտքեր և կառուցուածքային հիմքեր, որոնք կ'ընդգծեն ՀՅԴ գաղափարախօսութեան գլխաւոր սլաքները: Այդ առումով ալ լուսարձակի տակ կ'առնենք հոն տեղ գտած այն բառերը, որ բացատրողականի կարիք ունեն: Ուստի կը մանրամասնենք անոնց նախ բառարանային արժէքը,

ապա՝ գաղափարախօսական առանցքները:

ՀՅԴ քայլերգի առաջին իսկ տողը կը սկսի «մշակ» բառով: Մշակը, լայն առումով, հողի մշակութեամբ զբաղուող, երկրագործ, վարձու աշխատող բանուորն է: Հին Հայաստանի մէջ մշակ կոչուած են արքունի և տաճարային տիրոյթներու մէջ աշխատող շինականները: Մշակ կոչուած է այն հողագործը, որը մշակած է ուրիշի հողը, ունեցած սեփական տուն, ընտանիք:

Միջնադարեան Հայաստանի մէջ մշակները կախեալ այն գիւղացիներու խան էին, որոնք, կորսնցնելով իրենց հողակտորը, յաճախ նաև արտադրութեան գործիքները, կը վարձակալուէին հողատէր-աւատատէրի կողմէ և կ'աշխատէին անոնց հողատիրոյթներու մէջ:

Ուշմիջնադարեան Հայաստանի մէջ մշակ կը համարուէին աշխատատար գիւղացիութեան բոլոր խաւերը, ինչպէս նաև վարձքով աշխատող քաղաքաբնակները: XIX դարու և XX դարու սկիզբին մշակ կոչուած են ընդհանրապէս երկրագործները, վարձու աշխատողները, բանուորները: Փոխաբերական իմաստով՝ «մշակ» կը նշանակէ որևէ բնագաւառի (արուեստի, գիտութեան, կրօնի և այլն) աշխատող:

Մշակ, բանուոր, ռենչալեր աղբեր,
Արիք, միանանք, յառաջ գնանք....

Յաջորդ բառը, որ նոյնպէս առաջին իսկ տողին մէջ է, «ռենչալեր»-ն է՝ իբրև համակիր տարր ու նեցուկ: Ըստ Մալխասեանի բացատրական բառարանի՝ ան պարսկերէնէ փոխառեալ է և կը նշանակէ «հողագործ, երկրագործ, աշխատատար»⁴: Պէտք է ըսել, թէ «ռա»-ով սկսող հայերէն բառարմատները թիւով չափազանց սահմանափակ են, այլև օտարամուտ: Այս բառերէն մէկն ալ «ռանչալար»-ն է, որ երբեմն կը գրուի «ռենչալեր» ձևով:

Այլ բառ մըն ալ «Շահագործող ցեցեր վատեն» տողին մէջն է, զոր տողը նախ իր ամբողջութեան մէջ խորիմաստ ըսելիք ունի: Սակայն հոս «ցեց»-ը պարզ բառարանային իմաստով կը նշանակէ «բրդեղենի, մուշտակեղենի, հացահատիկներու, բոյսերու ու կահոյքի վնասատու թիթեռ, ուտիճ»: Իսկ փոխաբերական իմաստով՝ «ա. Ան, ինչ որ կը մաշեցնէ՝ կը սպառէ՝ կը փշացնէ: Երեխան, որ կայ՝ հացի ցեց է (ասացուածք): բ. Հոգին տանջող՝ մաշող հանգամանք: գ. Կեղեքիչ, հարստահարող» :

Հետևաբար խօսքը կը վերաբերի ցարին, սուլթանին և բոլոր անոնց, որոնք հայ ժողովուրդին ունեցումաձքը թալանած և կողոպտած են, և այդ միտքն է, որ ցայտուն կերպով կը շեշտադրուի քայլերգի հետևեալ տողերուն մէջ.

Շահագործող ցեցեր վատենն,
Իսկ մեզ չոր հաց բաժին հանեն:

Իսկ քայլերգի բնագրին մէջ տեղ գտած՝ վերջին տողի առաջին բառը՝ «սոցիալիզմի», արդէն այն

վարդապետությունն էր, որուն Դաշնակցությունը հաւատաց, որդեգրեց և ամրագրեց իր «Ծրագիր»-ով: Քայլերգի «Սոցիալիզմ» բառը յետագային փոխարինուած է «Դաշնակցութեան» բառով: Ուրեմն՝ «Դաշնակցութեան ճամբայ բացէք»:

ՀՅ Դաշնակցութեան էությունը քայլերգով արտացոլող այդ մեծ գաղափարախօսությունը հիմնատրուած էր ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹՅՈՒՆ հիմունքի մէջ:

Սոցիալիզմը կամ ընկերվարությունը (լատ.՝ socialism — ընկերական, հասարակական) տնտեսական և ընկերային համակարգերու համակցություն է, որ կը բնորոշուի արտադրութեան միջոցներու հանրային սեփականութեամբ և աշխատողներու ինքնակառավարմամբ:

Հասարակական սեփականությունը կրնայ ըլլալ հանրային, ընդհանուր կամ համագործակցական սեփականություն: Կան սոցիալիզմի տարբեր տեսակներ, և չկայ ընդհանուր սահմանում, որ բնորոշէ բոլորին, քանի որ հասարակական սեփականությունը կրնայ դրսևորուիլ տարբեր ձևերով:

Ընկերվարությունը՝ իբրև միջազգային վարդապետություն, ցայտուն դարձած է 18-րդ դարուն՝ որպէս երազային կամ ցնորական ընկերվարություն, որուն գլխաւոր արտայայտիչները եղած են անգլիացի Թոմաս Մոր և ֆրանսացի Սեն-Սիմոն: Սակայն անոնք չունէին պայքարի յստակ ուղի:

Գիտական ընկերվարութեան նպատակն էր ընկերութեան մէջ ախտաճանաչումներ կատարել և ատոր հիման վրայ հասնել արդիւնքներու:

Համագործակցական ընկերվարութեան գլխաւոր արտայայտիչն էր Ռոպերթ Օրն: Ան հիմնած էր գործարան մը, որուն հասոյթը հաւասարապէս կը բաժնուէր գործատրներուն: Ան կը ձգտէր իր գաղափարները տարածելու իր գիրքերու ընդմէջէն և ընկերվարությունը իրագործելու նեղ շրջանակի մը մէջ:

Ընկերվարութեան գաղափարախօսներէն էր Քարլ Մարքս:

ՀՅԴ գաղափարաբանութեան հիմունքներուն շարքին է «Ընկերվարությունը»:

1892 թ. Դաշնակցութեան անդրանիկ ծրագիրը Մարքսի գաղափարներու ազդեցությունը կը կրէր, որովհետև յիշեալ գաղափարները այդ օրերուն ամէնէն ազդեցիկներն էին, և Ռոստոմ ազդուած էր անոնցմէ:

1904 թ. Սոֆիայի (Պուլկարիա) մէջ գումարուած 3-րդ Ընդհանուր ժողովին Դաշնակցութեան ծրագիրը դէպի ընկերվարություն քայլ մը արձանագրեց:

1907 թ. Վիեննայի (Աւտրիա) մէջ գումարուած 4-րդ Ընդհանուր ժողովին վերամշակուած ձևով ՀՅԴ ծրագիրը ունեցաւ իր ինքնուրոյն դիմագիծը, որուն մէջ բիրեղացաւ ընկերվարութեան գաղափարը:

ՀՅԴ-ի ընկերվարութեան առանձնայատկությունները հետևեալներն են.

1. Ենթակայական արժէքներու գնահատում, ազգային նկարագիր, անհատական խիղճ, կրօն,

գիտակցություն և այլն, ինչ որ չկար Մարքսի գաղափարախօսութեան մէջ:

2. Անհատական նախաձեռնություններու արժևորում: Մարքսի գաղափարախօսութեան մէջ չէին յիշուէր անձնական (անհատական) արժէքներ, մինչդեռ Դաշնակցութեան ծրագրին մէջ անհատին հոգևոր և մտային զարգացումը իր արժէքը կը ներկայացնէ:

3. Ժողովրդավարություն:


ՀՅ Դաշնակցությունը յաջողեցաւ հաշտեցնել ընկերվարականությունը հայ քաղաքական, ընկերային, տնտեսական և մշակութային պայմաններուն հետ: ՀՅ Դաշնակցութեան ընկերվարականությունը «վերաքննական» և իրապաշտական էր: ՀՅԴ-ն, մերժելով մարքսական ուղղափառությունը, որ որդեգրուեցաւ հայկական և օտար որոշ կուսակցություններու կողմէ, քաղեց ժամանակի ոգիին հետ և մնաց ամէնէն իրապաշտը և հաստատունը հայ ազգի պատմութեան մէջ:

Քաղաքական-հասարակական անձնուէր առաջնորդ ու մտաւորական Նիկոլ Աղբալեան այսպէս արտայայտուած է ՀՅԴ-ի ընկերվարութեան մասին. «ՀՅ Դաշնակցութեան նպատակն է վերադարձնել հայոց ազգին իր պատմական հայրենիքը և հաստատել այնտեղ ընկերվարական կարգեր՝ հայ պետութեան հովանու տակ: Այսպիսով, մեր կուսակցությունը ո՛չ շահասիրական և ո՛չ շահակցական միություն է. միաժամանակ նա բարեսիրական ընկերություն չէ»:

ՀՅԴ ծնունդէն անցած 15 տարիները ընդհանրապէս ՀՅԴ կազմաւորման տարիներն էին: Հետևաբար կուսակցութեան մը հիմնումէն 15 տարի անց անոր կարգաւորումը վիճակը անելի ընդգծուած և յստակ միտքերու տեղ պիտի տար քայլերգին մէջ, քան առաջին օրէն գրուած եթէ ըլլար:

1906 թ. յաջորդող տարիները իրենց հետ բերին յետաշրջություն և հալածանք յեղափոխական կազմակերպություններու և առաւելապէս ՀՅ Դաշնակցութեան դէմ: Հետապնդումներ, հալածանք, դատավարություններ, արքայ, բանտ և այլն: Շատեր կրցան խուսաբիլ և անելի ապահով վայրերու մէջ ապաստանիլ:

Գրիգոր Մինիի՝ այդ օրերու կեցուածքին մասին



կը պատմե՛ անոր՝ Շուշիի թեմական դպրոցի դասընկեր Արտաշէս Աբեղեանը. «Այն ևս իմացանք, որ սայթաքումների ճամբան է բռնել ոչ միայն որպէս անհատ, այլ և ազգային ու քաղաքական գետնի վրայ: Չեն ազդել աննման Ռոստոմի սաստերն անգամ: Միշտ նորանոր վրիպումներ: Այդպիսիների տեղը չէր, ի հարկէ, Դաշնակցութիւնը»⁶:

Ահա թէ ինչպէս դաշնակցական երգահան-երաժշտագետ Գրիգոր Միրզայեանը հետզհետէ կը թեքուէր գաղափարական այլ հոսանքներու:

1908 թ. ցարական կառավարութեան կողմէ հալածանքի ենթարկուելով՝ Միւնի մեկնած է Արևմտեան Հայաստան՝ հաստատուելով նախ Տրապիզոն և 1910 թ. Կարին, ուր մինչև 1914 թուականը դասաւանդած է Սանասարեան վարժարանին մէջ:

Ս. Վրացեան այսպէս կը բնութագրէ Միւնիի՝ Կարին մեկնումն ու անոր դէմ կուսակցութեան կողմէ քննութիւն ու դատ սկսելու եղանակը. «Եւ մի օր, ամէնքի համար անսպասելի կերպով, Միւնի լեցնում է իր ընտանիքի անդամներին ֆուրգոն⁷ և մեկնում է Կարին: Իսկ քիչ վերջը Հայաստանի Բիւրոն ստանում է Նաւահանգստի Կենտ. Կոմիտէից ընդարձակ մի բողոքագիր Գրիգոր Միւնիի դէմ: Առաջ բերուած փաստերը այնքան աղաղակող էին, որ Բիւրոն որոշում է անմիջապէս կախակայել Միւնիին և քննութիւն ու դատ նշանակել: Եւ քննութիւնը ինձ է վիճակում»⁸:

Այս աշխատութիւնը պատեհ առիթ է՝ Գրիգոր Միւնիի կեանքն ու անոր կուսակցական գայթակղութիւնները և յետագային հակադաշնակցական դառնալու իրողութիւնը ամբողջապէս ներկայացնելու՝ մէկընդմիջտ փարատելու համար մեծ երաժշտագէտի կատարած հակականոնագրային ընթացքը և այդ առումով ընդհանրապէս երգարաններու մէջ անոր անունը յիշատակելու պատճառը: Թէև անմիջապէս պէտք է արձանագրել, որ քայլերգի հեղինակին անունի նշումը պէտք չէ կապել անոր անձնական կեանքին հետ, այլ պատմական կարևորութեան և արդար ըլլալու համար պէտք է քայլերգի կողքին Գրիգոր Միւնիի անունը տեղ գտնէ:

Արդարև, Միւնի Վրացեան, ընդունելով Միւնիի կուսակցական քննութիւնը, կը պարզէ. «Այսպէս թէ այնպէս, ես պէտք է դառնայի իմ մտերիմ ընկեր Գրիգոր Միւնիի դատական գործի քննիչ: Երբ ծանօթացայ թղթածրարին, սարսափեցի. այնքան ահաւոր փաստեր էին արձանագրուած: Միւնի մեղադրում էր բազմաթիւ անբարոյական արարքների մէջ իր երգչախումբի անդամ աղջիկների վերաբերմամբ»⁹:

Վրացեան կ'աւելցնէ. «Զգոյշ թէ անզգոյշ՝ ես ձեռնարկեցի քննութեան: Իրար յետևից հարցաքննեցի քսանի մօտ աղջիկներ Տրապիզոնի խոնարհ դասից և անուանի ընտանիքներից: Հարցաքննեցի մի շարք երիտասարդներ, որոնք ամբաստանութեան տակ էին: Տեսնուեցի քահանաների, բժիշկների ու անհատ քաղաքացիների հետ: Պարզուած պատկերները ցնցող էր, սահմոկեցուցիչ — այս բառը նոր էի



Սանասարյան վարժարանը

տվորել Պոլսում:

Հարցաքննութիւնը երևան հանեց ահաւոր փաստեր, որոնք կարելի չէ գրով ներկայացնել»¹⁰:

«Դժուարանում էի քննութեան տեղեկագիրը կազմել: Շշմել էի հայ նահապետական համարուած ընտանիքներում պարզուած բարոյական պատկերից: Միայն Միւնիի հարց չէր. Միւնիին կարելի էր նկատել հիւանդ: Ընդհանուր վիճակը մոռայ էր: Կարող էի երևակայել մի հայ աղջիկ, որ երիտասարդ քննիչի առջև, առանց քաշուելու, բաց ու համարձակ խօսէր սեռական ամենախնտիմ բաների մասին...»¹¹:

Վրացեան Միւնիի քննութիւնն ու դատը աւարտելէ յետոյ տեղեկագիրը կը ներկայացնէ կուսակցութեան համապատասխան մարմինին: Վրացեան այդ մասին կը գրէ. «Երբ վերջը իմ ներկայութեամբ կարդացուեց իմ տեղեկագիրը, բժ. Տէր-Դաթեանը խորհրդաւոր կերպով ասաց Ռոստոմին.

– Տես՜ր... Ռոստոմը գոհ էր, որ ես պատուով դուրս եկայ փորձութիւնից, բայց սաստիկ ազդուել էր Միւնիի արածներից: Նա մասնաւոր հոգածութիւն էր ցոյց տալիս Միւնիի ընտանիքի հանդէպ և տխուր էր, որ կուսակցութիւնը կորցնում էր տաղանդաւոր մի երաժիշտ»¹²:

– Ամէն գիբիլ կարող է օգտակար լինել կուսակցութեան»¹³:

«Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն» կուսակցութեան յետ քննութիւններուն և դատին Գրիգոր Միրզայեան-Միւնի 1910 թ. ՀՅԴ շարքերէն կ'արտաքսուի:

Միւնիի՝ կուսակցութենէն արտաքսման և հակառակ արտաքսման անոր ընտանիքին նիւթաբարոյական օժանդակութեան մասին Վրացեան այսպէս պիտի ընդգծէր. «Բայց կուսակցութիւնից արտաքսուած Միւնիին շարունակեց մնալ մեր ընկերական շրջանակում և իր երաժշտական շնորհքով օգտակար լինել, թէև Կարինի ընտանիքներում նա գրեթէ մուտք չունէր – երես չէին տալիս նրան: – Ռոստոմը շարունակում էր օգնել նրա ընտանիքին,

բայց գլխաւոր ծանրութիւնը ընկաւ իմ վրայ: Սիւնիի կնոջ՝ դպրոցից ստացած ոռճիկը չէր բաւականանում տան կարիքները հոգալու, և ես իմ ոռճիկի մի մասը, ամէն ամիս, տալիս էի Սիւնիի մօրը, որ վարում էր տնտեսութիւնը...¹⁴:

1914 թ. վերադառնալով Թիֆլիս՝ Սիւնի շարունակած է իր կազմակերպական և երաժշտական եռանդուն գործունէութիւնը:

Վրացեան, աւելի պարզաբանելով, Գրիգոր Սիւնիի բարոյական բազմատեսակ սայթաքումներու մասին մեզի կը ներկայացնէ այլ իրողութիւն մը ևս՝ ընդգծելու համար անոր հակամարդկային ու դաշնակցականի ոչ վայել ընթացքը: Այսպէս կը նկարագրէ Վրացեան. «Ամերիկա մեկնելովս իմ յարաբերութիւնները Սիւնիի հետ գրեթէ կտրուեցին: Նորից իրար հանդիպեցինք 1914-ի ամառը, երբ Կարին էի վերադարձել Ընդհանուր Ժողովի առթիւ: Մեր առաջին իսկ տեսակցութիւնից յետոյ, Փիլոսը¹⁵ զգուշացրեց.

– Ձեռք քաշէ այդ շունէն: Ամէն օր ոռու հիւպատոսի մօտ է...

Արդար թէ անարդար՝ Կարինում կարծիք էր ստեղծուել, որ Սիւնին ոռուական գործակալ էր: Ատրումին ասում էր, թէ թուրքերի մօտ էլ նա ճանաչուած էր իբրև ոռուական գաղտնի գործակալ:

Երևի այս կասկածը անհիմն չէր, որովհետև հէնց որ կրօնական պատերազմը սկսուեց, դեռ սէֆեր-պէրլիկը ջայտարարուած, Սիւնին հաւաքեց իր ընտանիքը և, ոռու հիւպատոսի արտօնութեամբ, մեկնեց Կովկաս: Մեկնելիս ասել էր, թէ ընտանիքը պիտի հասցնի Թիֆլիս և վերադառնայ: Տունը մէջի իրերով թողել էր գոց¹⁶:

Սիւնիի մեկնելուց մի քանի օր անցած մօտս եկան Լևոն Մազմանեանը և ախալցխացի դաշնակցական մարտիկ Նիկոլը, որ վերջը վաշտապետ եղաւ Անդրանիկի խմբում: Նրանք արին հետևեալ պատմութիւնը.

Սիւնին, Լևոնը, Նիկոլը և Զուլալը կազմել էին ընկերութիւն, որ զէնք էր բերում արտասահմանից և ծախում հայերին՝ իբրև աջակցութիւն կուսակցութեան ժողովրդական ինքնապաշտպանութեան կազմակերպութեան գործում: Զուլալը մտում էր Տրապիզոնում, Կիրաստնում և Երոպայից զէնքեր ստանալով՝ ջորեպանների միջոցով ուղարկում էր Կարին: Կարինում ջորեպանները սնտուկները յանձնում էին Սիւնիին: Լևոնը և Նիկոլը Սիւնիի հետ բաց էին անում սնտուկները, ստուգում էին մէջի զէնքերը և տեղադրում նախօրօք պատրաստուած պահարաններում:

Վերջին անգամ ջորեպանները սովորական ձևով, գիշերով, սնտուկները հասցնում էին Սիւնիին: Յաջորդ օրը Լևոնն ու Նիկոլը Սիւնիի հետ բաց են անում սնտուկները, որոնք լեցուած են լինում... քարերով: Սիւնին երդում-պատահ է լինում, թէ ինքը ձեռք չի տուել սնտուկներին, թէ Տրապիզոնում կամ ճանապարհին ջորեպանները կարող էին զէնքերը հանել ու տեղը քար լեցնել:



Ռուսրմ և Վրացյան

Լևոնն ու Նիկոլը աշխատել են գողութեան հետքը գտնել, բայց անհետևանք: Չեն կասկածել Սիւնիի վրայ, բայց վերջինիս շոյալ ծախսերի և անակնկալ փախուստի վրայ սկսել են տատանուել: Մտել են Սիւնիի բնակարանը, նայել վեր ու վար, ոչ մի հետք չեն գտել: Հիմա ծանր կասկածի մէջ են...

Պատմութիւնը իմ վրայ էլ ցնցող տպաւորութիւն թողեց:

– Ռոստոմը գիտէ, – հարցրի ես:

Զգիտէր: Ոչ ոքի չէին յայտնել:

Առաջին հերթին, նախքան ուրիշ բանի մասին մտածելը, անհրաժեշտ էր մի անգամ էլ բնակարանը խուզարկել:

Երեքով ելանք-գնացինք Սիւնիի բնակարանը: Նիկոլը դուռը բանալու ձևը գիտէր: Պտտեցինք բոլոր սենեակները, վարի յարկի մատանը, ամէն ծակուծուկ մտանք և աչքէ անցրինք: Բոլոր պատերը մէկ-մէկ բռունցքով ծեծեցինք, ոչ մի բան չթողինք առանց նայելու — զէնքի ոչ մի հետք չգտանք:

Ջղայնացած ու յոգնած պատրաստուում էինք դուրս գալ: Մի անգամ էլ նայեցի հիւրասրահի առաստաղին. դաշնամուրի վերևի անկիւնը կասկածելի երևաց աչքիս: Նիկոլը բարձրահասակ տղամարդ էր. ելաւ նստարանի վրայ և բռունցքով զարկեց առաստաղին: Յանկարծ ծեփը փուլ եկաւ, և բացուած ճեղքից վար ընկաւ մի մաուզէր ատրճանակ... ճեղքը աւելի ևս լայնացրինք, ու մէջից դուրս եկան ուրիշ մաուզէրներ և քիչիկ չափի հրացաններ: Չեմ յիշում թիւը, բայց փոքր չէր քանակը:

Լևոն Մազմանեան շշմած էր: Նիկոլը հայիոյում էր: Վրդովուած էի և ես:

Գողացած զէնքերի մի մասը Սիւնին ծախել էր, հաւանաբար, թուրքերին, միւս մասը պահել էր թաքստոցում, ի հարկէ, վերջը ծախելու նպատակով: Ասում եմ թուրքերին, որովհետև եթէ հայերին ծախած լինէր, անկարելի էր, որ լուրը Լևոնի կամ Նիկոլի ականջը հասած չլինէր...

Նիկոլը հայիոյանքով ու սպառնական խօսքերով նստեց դաշնամուրի առջև, բացեց կափարիչը և իր

ամենի բռունցքը ուժով իջեցրեց ստեղնաշարի վրայ: Լարերը խժայուր ոռնացին և, յանկարծ, դաշնամուրի տակից թափուեցին ինչ-որ բաներ: Փամփուշտներ էին, որ Սիւնին պահել էր դաշնամուրի մէջ...»¹⁷:

1921 թ. Գրիգոր Սիւնի անցած էր Կ. Պոլիս, այնտեղ փորձած էր որոշ չափով կրկին շահիլ վստահութիւնը կարգ մը դաշնակցականներու, ինչպէս՝ Յովսէփ Արղութեանի և ուրիշներու:

1922 թ. աշնան սկիզբը, երբ դաշնակիցները կը պարպէն Կ. Պոլիսը, և Մուսթաֆա Քեմալ իր իշխանութիւնը կը հաստատէ, շատ մը հայեր կը գաղթեն Եւրոպա և Ամերիկա:

Գրիգոր Սիւնի բոլշևիկներու վախէն 1923 թ. իր բազմանդամ ընտանիքով Արսէն Միքայէլեանի և Վահան Նաւասարդեանի աջակցութեամբ փոխադրուած է Միացեալ Նահանգներ՝ հաստատուելով Ֆիլատելֆիա: ԱՄՆ-էն նամակներ գրած է Սիւնի Վրացեանին, որպէսզի վերջինս բարեխօսէ ԱՄՆ-ի կեդր. կոմիտէին, որ Սիւնին ընդունին Ամերիկայի ՀՅԴ կազմակերպական շարքերը: Վրացեան պիտի գրէր. «Բոլոր պատահած խայտարակութիւններից յետոյ միայն Սիւնին կարող էր նման դիմում անել...»¹⁸:

ԱՄՆ-ի մէջ Սիւնի կրկին կը փորձէ սիրաշահիլ դաշնակցականներու սիրտը, կը մօտենայ անոնց՝ նոր կապեր հաստատելու համար, նոյնիսկ անոր առիթ կը տրուի «Հայրենիք» ամսագրին (Պոսթըն) մէջ լոյս ընծայելու իր դաշնաւորումները: Սակայն յաճախակիօրէն և անընդհատ դարձեալ սայթաքումներ և անվերջ:

Ս. Վրացեան օրին նամակներ ստացած է Արսէն Միքայէլեանէ, ԱՄՆ-ի ՀՅԴ կեդր. կոմիտէ՝ Գրիգոր Սիւնիի՝ Դաշնակցութեան շարքերը վերընդունուելու խնդրանքին առնչութեամբ: Վերջապէս Վրացեան հետևեալը կը գրէ. «Պատասխանեցի՝ ներկայացնելով Սիւնիի ամբողջ գործը. ինչպէ՛ս կարելի էր այդպիսի մի մարդ մտցնել Դաշնակցութիւնից ներս:

Նոր Աշխարհում Սիւնին հետզհետէ նոր դիրքաւորում ընդունեց. Դաշնակցութեան հակառակորդները սիրով առին նրան իրենց մէջ: Պտուկը գլորուեց գտաւ իր խուփը...»:

Սիւնիի հակադաշնակցական կեցուածքներու ամենէն ցայտուն օրինակը նոյնիսկ Վրացեան կը ընդօրոգրէ՝ գրելով. «Վերջին անգամ ես Սիւնիին հանդիպեցի Ֆիլատելֆիայում, 1930-ին:

Ֆիլատելֆիայի Հ.Յ.Դ. Կոմիտէն, իմ այցելութեան առթիւ, հրապարակային մեծ ճաշկերոյթ էր կազմակերպել քաղաքի նշանաւոր պանդոկներից մէկում, Հայկ Բագրատունիի նախագահութեամբ: Խոտներամ բազմութիւն լեցուած էր սրահը: Երբ ես մօտեցայ պանդոկի սրահին ընկերների ուղեկցութեամբ, իմ նախկին «մտերիմ ընկեր» Գրիգոր Սիւնին և իմ ծունկերի վրայ հասակ նետած նրայ որդին, միացած մի խումբ սևամորթ ստահակների հետ, բոլշևիկեան թողուցիկներ էին ցրում: Մի հատ էլ ինձ տուին: «Ո՛վ է Վրացեանը» վերնագրով, ամերիկահայ հասարակութեան ներկայացնում էին «Փետրուարեան ապստամբութեան հերոսը»,

«Հայաստանի գանձը փախցնող», «Հիթլերի գործակալ» Վրացեանին...

Այնուհետև ինչ որ արաւ իր կեանքում Սիւնին, բնական էր և տրամաբանական...»¹⁹:

Գրիգոր Սիւնիի սայթաքումներուն ու անոր հակադաշնակցական կեցուածքներու աղբիւրին առնչութեամբ կը դիմենք նաև Արտաշէս Արեղեանի գրութեան, որուն մէջ ամենէն հարազատութեամբ կը ներկայանայ մեզի. «...Ռամկավարներ և բոլշևիկներ գիտցան չարաչար շահագործել իր անձն ու արուեստը: Մինչև իր մահն այդ երկրում...»²⁰: Արեղեան կ'աւելցնէ. «Գրիգոր Միրզայեան-Սիւնին մինակը չէր, ի հարկէ, որ ոտք դրաւ այդ տխուր ճամբու վրայ: Իրենցից առաջ և իրենցից յետոյ՝ շատ անելի մեծ և պատասխանատու անցեալի տէր անձեր նոյնն արին: Յետաշրջութեան և քաղաքական-հանրային վայրէջքի զոհերն են դրանք. ոմանք՝ կամաւոր, ոմանք՝ ակամայ»²¹:

Արեղեան վերջապէս Սիւնիի նկարագրային գիծերու մասին հետևեալը պիտի արձանագրէր. «Ամուր կամքից և նկարագրից գուրկ էր Միրզայեան, անգսպանակ: Չունէր բարոյական յենարաններ և հաստատուն համոզումներ: Երերեալ և տատանեալ էր ի բնէ տաղանդաւոր այդ արուեստագէտը: Լսեցի մինչև իսկ, որ Ամերիկայում հրաժարուել է «Մշակ-բանուոր» քայլերգի հեղինակը լինելու պատուից: Թե՛ «արգիլել» փորձել է երգել ու նուագել այն, որպէս հեղինակ: Մէկը կամ միւսը: Մեծ տարբերութիւն չունի: Ոչ առաջինն էր նա, ոչ էլ վերջինը: Մի ամբողջ շարան: Եւ եթէ առհասարակ մի լաւ բան կապուած կայ իրենց անուան հետ, այն էլ՝ Դաշնակցական օրերից:

Ափսոս իրենց տաղանդին:

«Մշակ-բանուոր» քայլերգը մէկն է դրանից»²²:

Այստեղ ՀՅԴ քայլերգի ընդմէջէն, ինչպէս որ պարտաւոր ենք վեր առնել Գրիգոր Սիւնիի երաժշտական անվիճելի տաղանդը, խիստ կարևոր էր նաև անոր մարդկային և կուսակցական նկարագրի մասին արձանագրել, թէկուզ ոչ մանրամասնութեամբ, որպէսզի ընթերցողին սեփականութիւնը դառնայ Դաշնակցութեան Ծրագրի ու Կանոնագրի հզօրութիւնը:

Գրիգոր Միրզայեան-Սիւնի կազմած է երգչախումբեր ու Խորհրդային Հայաստանի քարոզչութեամբ զբաղած: Եռանդուն կերպով մասնակցած է Հայաստանի օգնութեան կոմիտէի (ՀՕԿ) գործունէութեան և 1934 թ. հրատարակած է «Նոր կեանքի երգեր» շարքը՝ խորհրդահայ գանգուածային երգերու օրինակին հետևելով: Մահացած է 18 դեկտեմբեր 1939 թ. Ֆիլատելֆիայի մէջ:

Յետագային ՀՅԴ քայլերգի քանի մը բառեր փոփոխութեան ենթարկուեցան, և այդ ձևով ալ կ'երգուի մինչև օրս: Ստորև կը ներկայացնենք այսօրուան երգուած վիճակով.

Մշակ, բանուոր, ռենչպէր աղբէր,

Արհիք, միանանք, յառաջ գնանք,
Աշխատանքի, դատի պաշտպան
Դաշնակցության թև-թիկունք տանք:

Բան է տանջունք, քրտինք թափենք,
Արին վատրակ դարենք, դիզենք,
Շահագործող ցեղեր վարենեն,
Իսկ մեզ չոր հաց բաժին հանեն:

Դհ, սև օրեր, բողոք դարձե՛ք,
Արին քրտինք երկունք մերե՛ք,
Տանջանք, գրկանք, լեզու առե՛ք,
Դաշնակցության ճամբայ բացե՛ք²³:

Իբրև վերջաբան կարելի է հաստատել, որ ՀՅԴ քայլերը տասնեակ տարիներ դաշնակցական շարքայիններու շրթներուն վրայ մնաց հաստատ, ազդու ու խօսուն: Դաշնակցության միտքը, կամքն ու խիղճը միաձուլվելով՝ ան դարձաւ շատերու մտրակ, ահագանգ, իսկ անհրաւուրած հայ ժողովուրդին՝ յոյս ներշնչող:

ՀՅԴ քայլերը նոյն ուժգնութեամբ և ուզմունակութեամբ երգուցեալ շուրջ 115 տարի դաշնակցական բանակին կուտ շարքերու կողմէ: Տակաւին պիտի երգեն գալիք սերունդներն ալ նոյն մարտունակութեամբ և նոյն հնչեղութեամբ, քանի որ հայ ժողովուրդին սուրբ դատի միաձուլուած դրոշմն է ան: Եւ ճիշդ հոն է, որ պէտք է փնտռել և տեսնել Դաշնակցության վայելած ժողովրդականութեան՝ անոր հանդէպ մեր ժողովուրդին սիրոյն ու վստահութեան աղբիւրը: Քայլերը մնայուն է, սակայն անոր հեղինակը՝ Գրիգոր Սիւնի, երբ դարձաւ հակադաշնակցական՝ մղուելով իր նեղ շահերէն, եղաւ գնայունը: Անոր նողկալի բազմաթիւ չարագործութիւնները իր կուսակցության հանդէպ պատճառ եղան, որ ան մատնուի մոռացութեան, և որոշ ժամանակ անց ոչ ոք յիշէ գայն, նոյնիսկ զինք «որսացողները»: Շահերը գնայուն են, արժէքները՝ մնայուն:

«Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն» կուսակցության նուիրեալ ծառայութիւնը երեք դարերու մէջ, այլ խօսքով՝ աւելի քան 130 տարիներու բազմաբեղուն գործունէութիւնը իր դրոշմը ձգեց հայոց պատմութեան և հայ ժողովուրդի սրտին վրայ:

Ազգային-ազատագրական պայքարի զանազան հանգրուաններուն պատահած դէպքերն ու գործած դէմքերը խանդավառող ու կրակոտ ենթահող հարթած են Դաշնակցության շարքերուն միացող սերունդներու և Դաշնակցության գործին հաւատացող համակիրներու հսկայ բանակի համար:

Դաշնակցության գաղափարախօսութիւնը ծնունդ առած էր հայ ժողովուրդի արգանդէն: «Ազատութիւն կամ մահ» քաղաքական նշանաբանով ճամբայ ելաւ հարստահարիչներու, կեղեքողներու, մասնատորաբար՝ օտար բռնատիրութեանց դէմ, սակայն նաև իր իսկ կեանքէն ծնած բռնատէրերու և

հարստահարիչներու դէմ պայքարի պատմութիւն կերտած է ու ճգնած. այս ամէնին խտացումն է ՀՅԴ քայլերը:

Իրաքանչիւր դաշնակցական շարքային ու կուսակցության համակիր հարկ է, որ իրացուցած ըլլայ ՀՅԴ քայլերի պատմագրութիւնը՝ իր ամբողջական կառուցուածքով, որպէսզի կարենայ ըմբռնել Դաշնակցության տարողութիւնը: Հետևաբար ՀՅԴ քայլերին երգեցողութիւնը սուրբ դատի, յարատև պայքարի, անձնագոհութեան և գոյատևումի, ինչպէս նաև ԱԶԱՏ, ԱՆԿԱԽ ԵՒ ՄԻԱՅԵԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ տեսլականին բնագիծն է:

ՀՅԴ քայլերը «Մշակ, բանուոր, ոնենչալեր աղբեր»-ը իր երաժշտութեամբ ու բառերով եղաւ գեղարուեստագաղափարական կոթողային ստեղծագործութիւն մը, որուն մէջ դրսևորուեցան և ճառագայթեցին ՀՅԴ գաղափարաբանութիւնն ու նկարագիրը: ■



ԲԱՅԼԵՐԳ

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ



Tempo di Marcia — Դնայուն

Ձեռք շակ բանն արուանց պար սեր պերսա - ընթ միտ-նամբ յառ-ուանց Գրչ-

նամբ աչ - քառսանն իր դու քրի պարզ պան զար ճակ ցու թնան թև թի կունթ քանթ Արն Վնթ քանթ

անթ իջր քրնթ թառ- քրնթ ա- թրն վառ- քան զառ- քրնթ զր- ցենթ շահա գոր-

ճուր ցե - ցեր պար-նեն թակ ճեց չար հայ թառ - ժրն հառ - նենթ դեհ սե օ.

քերս բո-դրթ դար ճեթ սար- ինն իջր- քրնթ եր - կունթ ճե-քրնթ քան շամբ քր

նամ իջ - ցու առ-նեթ դար ճակ ցու - թնան ճառ- քայ թառ - ցեթ:

Հղումներ

- «Դրօշակ», Օգոստոս, 1894, էջ 1:
- Վրացեան Ս., Կեանքի ուղիներով (Դէպքեր, դէմքեր, ապրումներ), Բ. հատոր, Պէյրուք, 1960, էջ 140:
- Երան Ի. Ա., Ժողովրդային երգարան, երկրորդ տպագրություն, թիւ 5: Անլի քան 500 երգեր և ոտանատրներ, ազգային, յեղափոխական, կրօնական, երգիծական մօտ 50 ձայնագրուած երգեր, Պոսթըն, էջ 332: Տեն նաև «Պուկարահայ Նոր երգարան», Սօֆիա, հրատարակութիւն «Հայ-գիր», 1926, էջ 11: Տեն նաև, Տ Ղուկասեան, Ղևոնդ Քինա. [խաւքեց], Երգարան, մատենաշար «Նոր օր», թիւ 19, Աթէնք, 1928:
- Տեն Մալխասեանց Ստ., Հայերէն բացատրական բառարան, Եր., Հայկական ՍՍՌ պետական հրատ., հատոր Դ. 1945, էջ 157:
- Նոյն տեղը, էջ 464
- «Յառաջ» օրաթերթ, Փարիզ, 1950, թիւ 1740 (Երեքշաբթի, Դեկտեմբեր 12):
- Առհասարակ՝ բեռնասայլ:
- Վրացեան Ս., նշ. աշխ., էջ 142:
- Նոյն տեղը:
- Նոյն տեղը, էջ 144:
- Նոյն տեղը:
- Նոյն տեղը, էջ 146:
- Նոյն տեղը, էջ 147:
- Նոյն տեղը:
- Փիլոս Սարգսեան (Փիլոս Մարալ):
- Վրացեան Ս., նշ. աշխ., էջ 147:
- Նոյն տեղը, էջ 148-149:
- Նոյն տեղը, էջ 150:
- Նոյն տեղը, էջ 150:
- «Յառաջ» օրաթերթ, Փարիզ, 1950, թիւ 1740 (Երեքշաբթի,

Դեկտեմբեր 12):

Նոյն տեղը:

Նոյն տեղը:

«Յեղափոխական և ժողովրդային երգեր», հրատարակութիւն «Մշակ» մատենաշարի, Պէյրուք, 1972, էջ 5:

Օգտագործուած գրականութեան ցանկ

- «Գրպանի երգարան, Ազգային-յեղափոխական և ժողովրդական երգեր», հրատարակութիւն «Հայրենիք»-ի, Պոսթըն, 1937:
- «Դրօշակ», Օգոստոս, 1894:
- Երան Ի. Ա., Ժողովրդային երգարան, երկրորդ տպագրություն, թիւ 5: Անլի քան 500 երգեր և ոտանատրներ, ազգային, յեղափոխական, կրօնական, երգիծական մօտ 50 ձայնագրուած երգեր, Պոսթըն:
- «Յառաջ» օրաթերթ, Փարիզ, 1950, թիւ 1739 (Կիրակի, Դեկտեմբեր 10):
- «Յառաջ» օրաթերթ, Փարիզ, 1950, թիւ 1740 (Երեքշաբթի, Դեկտեմբեր 12):
- «Յեղափոխական և ժողովրդային երգեր», հրատարակութիւն «Մշակ» մատենաշարի, Պէյրուք, 1972:
- «Յուշապատում ՀՅ Դաշնակցութեան. 1890-1950», Հրատարակութիւն ՀՅԴ Բիւրոյի, Բոստոն, 1950:
- «Պուկարահայ Նոր երգարան», հրատարակութիւն «Հայ-գիր», Սօֆիա, 1926:
- Վրացեան Ս., Յուշապատում ՀՅ Դաշնակցութեան. 1890-1950, Հրատարակութիւն ՀՅԴ Բիւրոյի, Բոստոն, 1950:
- Վրացեան Ս., Կեանքի ուղիներով (Դէպքեր, դէմքեր, ապրումներ), Բ. հատոր, Պէյրուք, 1960:
- Տ. Ղուկասեան Ղևոնդ Քինա. [խաւքեց], Երգարան, մատենաշար «Նոր օր», թիւ 19, Աթէնք, 1928:

Միլի շարժումը Կ. Պոլսի «Ճակատամարտ» և «Ժամանակ» օրաթերթերի էջերում (1919-1920 թթ.) (մաս 1)

Մարիամ Հովսեփյան

ԳԱԱ պատմության ինստիտուտի աշխատակից, բանասիրական գիտությունների թեկնածու

Առաջին աշխարհամարտում Թուրքիայի կրած պարտությունը մասնատման վտանգի առջև էր կանգնեցրել երբեմնի հզոր Օսմանյան կայսրության ժառանգորդ այդ երկրին: Դրան դիմակայելու համար թուրք ազգայնական գործիչները ոչ միայն սկսեցին միջոցներ փնտրել տեսականորեն, այլև ձեռնարկեցին մտածված քաղաքական պայքար թե՛ իշխող վերնախավի, թե՛ Համաձայնական ուժերի վարած քաղաքականության ու մշակված ծրագրերի դեմ: Դիվանագիտական անուրանալի կարողությունների, բանակցություններ վարելու և իրենց տեսակետներն առաջ տանելու հմտությունների, ինչպես նաև աշխարհաքաղաքական հանգամանքները հոգուտ իրենց ծառայեցնելու շնորհիվ կարճ ժամանակում նրանք հաջողեցին իրենց մտադրություններում և պահպանեցին թուրքական պետությունը:

Որպես Միլի կամ Քեմալական շարժման սկզբնավորման օր թուրքական պաշտոնական պատմագրությունը համարում է 1919 թ. մայիսի 19-ը, որը Թուրքիայի ազգային տոների շարքում է: Այդ օրը Մուստաֆա Քեմալն իր գաղափարակիցների հետ ծովային ուղիով մտնում է Սամսուն: Մասնագետները «Թուրքիայի Հանրապետության պատմություն» բուհական դասագրքում այդ շարժման մասին գրել են հետևյալը. «Քեմալական շարժումը երիտթուրքերի նախապատրաստած ազգայնամոլական շարժում էր, որի նպատակն էր պահպանել Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականությունը և թուրքերի իշխանությունը հպատակ ժողովուրդների նկատմամբ»¹:

1918 թ. հոկտեմբերի 30-ին կնքված Մուդրոսի զինադադարից հետո Անտանտի երկրները 1916 թ. մայիսի 16-ին ստորագրված Մայքս-Պիկոյի համաձայնագրի հիման վրա սկսում են Օսմանյան կայսրության տարածքի բաժանման գործընթաց: Առաջին համաշխարհային պատերազմում Թուրքիայի կրած պարտությունը հայերին, հույներին և արաբներին հնարավորություն էր տալիս ազատագրվելու թուրքական լծից ու իրենց պատմական տարածքներում հիմնելու անկախ պետություններ: Եվրոպական հաղթանակած պետությունների հովանու ներքո այս ժողովուրդների ծավալած ազատագրական պայքարին դեմ էր Մուստաֆա Քեմալի անունով կոչված Քեմալական շարժումը²:

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի պաշտոնական կայքի «Հայոց ցեղասպանության հանրագիտարան» բաժնում Ե. Մարգարյանը փաստում է, որ նպատակին հասնելու համար «Քեմալական շարժումը չխորշեց նաև ցեղասպանությունից՝ Արևելյան Հայաստանում և



Կիլիկիայում կոտորելով հայերին, Փոքր Ասիայի արևմուտքում՝ հույներին և հայերին, Արևմտյան Հայաստանում՝ քրդերին»³:

Միլի շարժումը Թուրքիայում միանշանակորեն չի ընդունվել իր ձևավորման սկզբնական փուլում: Իշխանական վերնախավը հարկ չէր համարում լուրջ պայքար սկսել քեմալականների դեմ, սակայն երբ նրանք արագորեն վերածվում են արդեն քաղաքական գործոնի, որն արգելափակում էր գավառները մայրաքաղաքին կապող ճանապարհները, կարողանում էր իր շուրջը համախմբել հազարավոր մոլեռանդ թալանչիների ու հայատյաց մարդասպանների, և որը պետություն էր ստեղծել պետության մեջ, սկսում է հաշտության եզրեր փնտրել Քեմալի հետ՝ զիջելով երկրի կառավարման ղեկը մի մարդու, որն ունակ էր աշխարհաքաղաքական բարդ իրավիճակում ընդունել տալու երկրի համար բախտորոշ որոշումներ՝ համադրելով անձնական շահը պետականի հետ: Մինչև իշխանության գալը Մուստաֆա Քեմալին իշխանությունները նույնիսկ մահվան էին դատապարտել՝ նրան համարելով պետական դավաճան, որի գործունեության հետևանքով խաթարվել էր երկրի բնականոն կյանքը, և տեղական կառավարման մարմինները չէին կարողացել ի կատար ածել կենտրոնից տրված տարաբնույթ հրամանները⁴: Քեմալը կարողանում է ճարպկորեն խուսափել մահապատժից՝ զինված պայքարով ու դիվանագիտական աշխատանքով իր համար ուղի հարթելով նախ օսմանյան խորհրդարանում որպես երեսփոխան, ապա՝ կառավարությունում՝ դառնալով առաջին դեմք: Քեմալի հեղինակությունն աճում է մասնավորապես այն ժամանակ, երբ նրա գլխավորած Միլի

շարժումը, հանդես գալով թուրք ժողովրդի անունից, հայտարարում է, որ չի ճանաչում Հայկական հարցի վերաբերյալ Փարիզի համաժողովի փաստաթուղթն օրինական, թեև այն ստորագրել էր Թուրքիայի սուլթանական կառավարությունը⁵: Հենց այդ քայլով քեմալականները մուտք են գործում Թուրքիայի կառավարման համակարգ՝ իրենց քաղաքական ծրագրերն ու կամքը պարտադրելով օրվա իշխանություններին: Ակադեմիկոս Ռուբեն Մաֆրաստյանը հիշատակում է 1919 թ. հունիսին Ամասիայում Քեմալի հրավիրած՝ մի քանի բանակային հրամանատարների գաղտնի ժողովում ընդունված շրջաբերականը, որն ուղղված էր զինվորական ու քաղաքացիական իշխանությունների ներկայացուցիչներին⁶: Դրանում նշված էր հետևյալը. «Սուլթանի կառավարությունը չի կարողանում պատշաճ կերպով պաշտպանել կայսրության տարածքային ամբողջականությունը, և այդ պատճառով անհրաժեշտ է, որ «ազգ» իր ձեռքը վերցնի անկախության և տարածքի պաշտպանությունը»⁷: Անվանի պատմաբան Գալուստ Գալոյանը Քեմալի վարած քաղաքական պայքարում կարևորում էր 1919 թ. սեպտեմբերի 4-11-ը Սվազում (Մեքսստիա) տեղի ունեցած Համաթուրքական առաջին ազգային վեհաժողովը, այնտեղ ընդունված հռչակագիրը և այն որոշումը, որով «արգելվում էր Ստամբուլի կառավարությանը հաշտություն կնքելու դաշնակիցների հետ՝ առանց վեհաժողովի կողմից ընտրված գործադիր կոմիտեի համաձայնության»⁸:

Ժողովրդական կամ Միլլի շարժման առաջնորդները, արևմտահայ գավառներում թուրքական իշխանությունների հրահանգով իրականացված Հայոց ցեղասպանության իրական շարժառիթներն ու փաստերը խեղաթյուրելով, նենգափոխելով և սուտը ճշմարտության տեղ մատուցելով, Հայկական հարցը Փարիզի համաժողովում և միջազգային այլ աստիճաններում փոխարինում են Թուրքական հարցով՝ միաժամանակ հիմնականում հայկական պատմական հայրենիքի բռնազավթված ու հայերից բռնաթափված հողերի հաշվին ստեղծելով Թուրքիայի Հանրապետությունը: Այս գործում առանձնահատուկ էր շարժման առաջնորդի դերակատարությունը: Մուստաֆա Քեմալը, որը, ոտնահարելով թուրքահպատակ ժողովուրդների իրավունքները, ֆիզիկապես ոչնչացնելով ու մասնավորապես հայերին բռնի տարհանելով իրենց պատմական հայրենիքից, կարողացավ համախմբել գրեթե ոչնչացման եզրին գտնվող թուրքական բանակի հրամանատարական կազմին, Թուրքիայի վերնախավին, Թուրքիայում բնակվող իսլամադավան ժողովուրդներին, ի թիվս որոնց՝ քրդական ցեղախմբերին, շահագրգռեց եվրոպական հզոր պետությունների ներկայացուցիչներին և կործանումից փրկեց թուրքական պետությունը:

Պետք է նշել, սակայն, որ, դարեր շարունակ զրկված լինելով պետականությունից և հիմնականում

շեշտված անհատական կամ խմբակային պայքար ծավալելով հանուն անկախության կամ ինքնավարության, անգամ օգտվելով պատմական բարենպաստ իրադարձություններից ու իրավիճակներից, հայ ժողովուրդն այդպես էլ չկարողացավ հասնել իր ազատագրական պայքարի բուն նպատակին: Այս առումով բավական է հիշել Փարիզի վեհաժողովն ու Հայկական հարցի համար կամ դրա դեմ տարվող հայկական ու թուրքական պատվիրակությունների դիվանագիտական աշխատանքը և արձանագրած արդյունքները՝ չմոռանալով այն հանգամանքը, որ կային իրար հետ մրցակցող հայկական երկու պատվիրակություններ:

1919-1920 թթ. պոլսահայերի շրջանում բավական բարձր վարկանիշ ունեցած «Ճակատամարտ» և «Ժամանակ» օրաթերթերի էջերում բազմաթիվ հոդվածներ են գետնելված, այդ թվում՝ թուրքական մամուլից թարգմանված, որոնցում դրանց խմբագրակազմերն ընթերցողներին ներկայացրել են Միլլի շարժման առաջացման պատճառներն ու էությունը, Մուստաֆա Քեմալի ղեկավարած գործողություններն ու Թուրքիայի պետականության պահպանման համար ձեռնարկած քայլերը: Մինչև 1919 թ. հոկտեմբերի առաջին տասնօրյակը հիշյալ պարբերականներում, ինչպես նաև Կ. Պոլսում հրատարակված հայկական ու թուրքական թերթերում Միլլի շարժման անդրադարձ է կատարվել հիմնականում երրորդ կամ չորրորդ էջերի մասը լուրերի բաժիններում՝ կարևորություն չտալով Քեմալի հրամանատարության ներքո հավաքված ազգայնականների ձեռնարկներին: Հոկտեմբերի 1-ին, օրինակ, «Ճակատամարտը» «Թուրք թերթեր» խորագրի ներքո թարգմանաբար ներկայացնում էր «Թարիզ» թերթից լուր այն մասին, որ Անատոլիայում գտնվող օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցիչներն իրենց կառավարություններին



ուղարկած տեղեկագրերում նշում են, որ, հակառակ այդ շրջանում եղած անհամաձայնություններին, «գոյություն ունեցող խմբաորումները ազգային և սոսկ ներքին հանգամանք մը ունին, ուստի և անհրաժեշտություն ցոյց կը տրուի՝ խուսափելու համար անտեղի ու անժամանակ խստություններ գործադրելէ»⁹: Հոկտեմբերի 7-ին «Իֆհամ» պարբերականն առաջարկում էր խելամոռն ղեկավարել Անատոլիայում սկսված ազգայնական շարժումը, թե չէ այն «հայրենիքին համար վտանգաւոր արդիւնքներ կ'ունենայ»¹⁰: «Երկիրը, որ այսքան դժուարին ժամանակի մը մէջ ստուգի փափուկ կացութեան մը մատնուած է, չկրնար մխիթարուիլ մինչև որ իր գլուխը չունենայ ամենէն կարող պետական անձերը»¹¹, - գրում էր այդ թերթը: «Ճակատամարտի» նույն համարի 3-րդ էջում ամփոփված վերլուծություններն ու լուրերը կարծես անտողակիորեն մատնանշում էին Թուրքիայի ապագան կերտող այդ պետական պաշտոնյաներին և նրանց առաջնորդ Մուստաֆա Քեմալին: Դրանցից մեկում հատված կա Միլլի շարժման զինվորական ընդհանուր հրամանատարի կողմից Իզմիրի քննիչ մարմինն ուղարկված հիշատակագրից¹²: Դրանում արտահայտված էր միլիոնների զայրույթը Թուրքիայի կառավարության դեմ, որի անկարողության հետևանքով հունական զորքը գրավել էր Իզմիրը: Մասնավորապես նշվում էր, որ թեև իշխանական ուժերն իրենց դեռ չեն ընդունում որպես թուրք ժողովրդի կամքը արտահայտողների, բայց իրենք շարունակելու են զինված պայքարը՝ հանուն երկրի ամբողջականության վերականգնման. «Այսօր պզտիկ բանակ մը ունինք, որուն նուիրական նպատակն է պատերազմը շարունակել, մինչև որ մեր հայրենի հողին վրայ մէկ հելլէն չնայ և մինչև որ մեր դժբախտ հայրենակիցները իրենց տեղերը չի տեղադրուին»¹³: Լուրերից մեկի վերնագիրը շատ խոսուն էր՝ «Դահլիճը կը բանակցի Միլլի ուժերու հետ. Մուստաֆա Քեմալ կը սպառնա»¹⁴: Նա Ֆերիտ փաշային զգուշացնում էր իրենց դեմ գործ չհանել, քանի որ հետևանքների համար կառավարությունն էր պատասխան տալու¹⁵: Պահանջում էր նաև Բարձրագույն ատյանի քննությանը հանձնել Ֆերիտ փաշայի ու նրա զործընկերների որոշումներն ու ձեռնարկները, որոնց պատճառով հույները գրավել էին Իզմիրը, իսկ երկիրն էլ դիվանագիտական անհաջողություններ էր կրել¹⁶: Ըստ «Ճակատամարտի» հրատարակումների՝ Փարիզի համաժողովին մասնակցող թուրքական պատվիրակության անդամ Բիզա Թեֆիք բեյը հայտարարել էր, թե Ֆերիտ փաշան Փարիզում ինքնագլուխ է գործել և առանց մյուս պատվիրակներին տեղյակ պահելու է խմբագրել Հաշտության համաժողովին ներկայացված հիշատակագիրը. «Ասկէ գատ՝ մեծ տարբերութիւն կայ եղեր այդ հիշատակագրին և հոս հրատարակուող պատճէնին միջև»¹⁷: Այս ձևով Միլլի շարժման ներկայացուցիչներն ու համակիրները հող էին նախապատրաստում Փարիզի խաղաղու-

թյան համաժողովին առաջիկայում ուղարկվելիք նոր առաջարկների ու փաստաթղթի համար, որտեղ Հայկական հարցին տրվելու էր թուրքանպաստ լուծում, և ոտնահարվելու էին հայության շահերն ու իրավունքները: Պատահական չէր, որ նրանք Ֆերիտ փաշային մեղադրում էին այն հայտարարության համար, որով նա խոստանում էր Արևմտյան Հայաստանին «տալ լայն ինքնավարութիւն մը, ինչ-որ այդ հողամասն ուրիշներուն ձգուելու տպաւորութիւնը յառաջ բերաւ»¹⁸: Այդ համաժողովում Հայկական հարցի թուրքաժեստ արձարծումը կանխելու նպատակով էին քեմալականները բացատրում կամ հիմնավորում Միլլի շարժման ծագումը: Թուրքական «Թասվիր» թերթը այդ կապակցությամբ մեջբերում էր քեմալականների՝ Էրզրումի համաժողովում ընդունված հայտարարությունից հետևյալ հատվածը. «Արևելեան Անատոլի մէջ իսլամները հայերուն յարձակումներէն պահպանելու անհրաժեշտութենէն ծագում առաւ Միլլի շարժումը»¹⁹: «Վագրթ» թերթը նույնպես Միլլիի առաջացումը կապում էր հունական բանակի առաջխաղացման և Հայկական հարցի հետ: «Անատոլի շարժումը ծնաւ Այտընի հելլէնական գրաւումին վրայ: Ֆերիտ փաշայի կառավարութեան բացա՛ծ այս եղերական շրջանը՝ զարթումի արշալոյս մը եղաւ Արևելեան Անատոլի համար: Թրքական նահանգներու մէջտեղը Հայաստանի մը կազմութեան նպատակը և այդ մասին յանկարծական գործադրութեան մը հաւանականութիւնը տեղացի հայրենակիցները խմբեց վտանգին առջև: Մինչ ասկէց օգտուողը կառավարութիւնը պիտի ըլլար, ընդհակառակը, ան իսկապէս կասկածելի յամառութեամբ մը Անատոլի այս զարթումը իթթիհատական դաւ մը կը նկատէր և անոր գլխատրները իբր դաւաճան կը հռչակէր»²⁰, - կարդում ենք թերթում: Թերթում նշվում էր նաև, որ, չնայած կառավարության գործադրած ջանքերին, Միլլի շարժումը գնալով հզորանում էր՝ Էրզրումում երդվելով Մուդրոսի «զինադադարի կնքման պահուն գոյութիւն ունեցող սահմանին մէջ



հաշտության մը կնքելու համար»²¹: Սերաստիայի համաժողովի վարչության պատրաստած գեկույցում, որը տպագրվել էր «Իրատեի միլիե» թերթում, Թուրքիայի արտաքին ու ներքին հանգամանքներով էր պայմանավորվում Միլլի շարժման առաջացումը. «Մեր հայրենիքը արտաքնապես բաժանուելու վտանգին ենթարկուած է, ներքնապես ալ կեդրոնի կառավարութեան ղեկավարները, դավաճանելով մեր շահերուն, մեր թշնամիներուն հետ հանդիսատեսի դերին մէջ կը մնան: Այս պատճառով ազգին կը մնար իր գլխուն ճարը նայիլ: Ահա այս նուիրական պահանջէն էր, որ ծագում առաւ Միլլի շարժումը»²²: Նույն թերթի խմբագրականներից մեկում էլ ոչ միայն արդարացվում էին Միլլի շարժման հայահալած գործողությունները, այլև համարվում էր, որ «հայ ջարդելը ինքնապաշտպանութիւն է եղեր»²³: Ըստ հոդվածագրի՝ Ֆերիտ փաշայի կառավարությունը, փոխանակ միջոցներ գտնել՝ խուսափելու 1916 թ. Լոնդոնի դաշնագրի համաձայն Թուրքիայի արևելյան նահանգներում (այն է՝ Արևմտյան Հայաստանում) Հայաստան ստեղծելու պարտադրանքից, սկսել էր դատել հայերի տեղահանության պատասխանատուներին և սուլթանի նախագահությանը անցկացված ժողովում հայտարարել էր, թե «արևելեան նահանգներու մէջ Հայաստանի մը կազմութեան պատրաստ է կառավարութիւնը»²⁴: Թերթը գրում էր, որ թուրքերի իրավունքները պաշտպանելու և Թուրքիայի մասնատումը թույլ չտալու համար էր հենց այդ տարածքներում ծավալվել Միլլի շարժումը²⁵: «Ճակատամարտի» թղթակցություններից պարզ է դառնում, որ Միլլի շարժման թափ հավաքելուն զուգընթաց՝ նրա հետ սկսել էին հաշվի նստել, և քեմալականների պահանջով թե՛ արագացվել էր խորհրդարանական ընտրությունների անցկացումը, թե՛ թույլ էր տրվել քեմալականների հսկողությամբ դրանց կազմակերպումը և ընթացքի կառավարումը²⁶: Նույն օրերին «Ճակատամարտը» իր ընթերցողներին տեղեկացնում էր, որ Թուրքիայի նոր վարչախումբը Թեֆիկ փաշայի գլխավորությամբ համագործակցելու է Միլլի շարժման հետ՝ ներման արժանացնելով ու նախկին զինվորական աստիճանները վերադարձնելով այդ շարժման առաջնորդներ Մուստաֆա Քեմալին և Բեուֆ բեյին, որը ոչ վաղ անցյալում Թուրքիայի ծովային նախարարն էր²⁷: Թերթը, այսպիսով, արձանագրում էր այն փաստը, որ թուրքական պետության կառավարման ուղղությունը որոշողների և թելադրողների շարքում հայտնվել էին նոր գործող անձինք, որոնք իրենց փոքրաթիվ զինված ուժերով և մարտավարական ծրագրերով պատրաստվում էին երկրում փոփոխություններ անելու: «Ճակատամարտի» աշխատակիցներից Արտաշես Վանարյանը 1919 թ. հանդես էր եկել երկու հոդվածաշարով՝ «Միլլի շարժման էությունը» և «Հակամիլլի շարժման արժեքը»: Դրանցում նա բավական հանգամանորեն և օբյեկտիվորեն վերլուծության էր ենթարկել թուրքական իրականության

մեջ ոչ պատահականորեն ու անհրաժեշտ պահին ծնունդ առած այդ շարժման առաջացման արտաքին ու ներքին պատճառները, շարժառիթները, նպատակները, համագործակցության շրջանակները: Ամփոփելով ուսումնասիրության արդյունքները՝ հոդվածագիրը փաստում էր, որ «Իթթիհատը ձևափոխուելով «Միլլի Թէշիլաթի»՝ աստիճանաբար նուաճեց ամբողջ նահանգները և այն աստիճան հեղինակութեան տիրացաւ, որ շատ մը վայրերը սոսկ հեռագրելով իրեն հպատակեցուց»²⁸: Նա նշում էր, որ նահանգներում հաստատվելուց հետո նրանք իրենց հարցերը կարգավորեցին Կ. Պոլսում՝ տապալելով «Իթթիլաֆի» կառավարությունը և այն փոխարինել տալով այնպիսի գործադիր իշխանությամբ, որը, եթե նույնիսկ իրենց անվերապահորեն չօժանդակեր, գոնե մինչև խորհրդարանական նոր ընտրություններն ու խորհրդարանի ձևավորումը չէր խանգարի Միլլի գործունեությանը և իշխանազավթման ծրագրերի իրականացմանը²⁹: Ա. Վանարյանը քեմալականների հաջողությունը պայմանավորում էր երկու գործոնով՝

- այդ շարժման կազմակերպիչների և անդամների ներքին ուժով,
- աշխարհի գորեղ պետությունների կողմից Միլլի շարժման Թուրքիայի ներքին ազգային խնդիր համարվելու, դրա ծավալման և ընթացքի մեջ համաձայնական ուժերին ուղղված վտանգ չտեսնելու և այն «չէթէյական շարժում» չբնորոշելու հանգամանքներով³⁰:

Թեև իթթիհատական թերթերը 1919 թ. պնդում էին, որ Միլլի շարժումն իրենց կուսակցության հետ կապ չուներ, սակայն Արտաշես Վանարյանը հակառակն էր ապացուցում իր հոդվածաշարերում³¹: Նա ընթերցողների ուշադրությունը հրավիրում էր այն փաստի վրա, որ իթթիհատական կառույցներն ամեն կերպ խոչընդոտել են խորհրդարանական նոր ընտրությունների անցկացումը, մինչև որ արևմտահայ գավառի տարածքներում թափ չհավաքեց Միլլի շարժումը³²: Ի վերջո ընտրությունները կազմակերպվում են, ինչը համընկնում է Միլլի շարժման աստեղային պահի հետ. «Այդ այն ժամանակն էր, երբ Մուստաֆա Քեմալ փաշան, իր հեղինակութիւնը տարածած Անատոլիոյի Արևելեան շատ մը նահանգներուն վրայ, Միլլի շարժման Կարինի համաժողովը կը գումարէր... Ու վերջապէս հնչեց վստահութեան ժամը: Գաւառէն խլրտումի ձայներ հասան Պօլիս: Մուստաֆա Քեմալ փաշա, դուրս գալով իբր Գ զօրաբանակի քննիչ իրեն տրուած իրաւասութեան սահմանէն, ինքնազուլիս կանոնադրեր կը պատրաստէր կառավարիչներու համար և շատ տեղերու մէջ բացարձակ տիքտատօրի մը պէս կը պարտադրէր իր կամքը»³³: Արտաշես Վանարյանը, վերլուծելով Միլլի շարժման և Թուրքիայի նախորդ, մասնավորապես իթթիհատական իշխանությունների գործելակերպը, հանգում է այն եզրակացությանը, որ չկար որևէ սկզբունքային տարբերություն Միլլի շարժման և նախորդ կառավարությունների միջև³⁴: Հոդվածագրի



կարծիքով՝ խորքում իթթիհատական կուսակցության գաղափարակիր Միլի շարժման նպատակն էր «վերջ տալ ուրիշներու տիրապետութեան, դադրեցնել հալածանքը իթթիհատականներու դէմ, ազատել բանտարկուած ոճրագործները, պաշտօնի անցնիլ, դիրքի տիրանալ և նոր ընտրութիւններով ձեռք առնել կառավարական ղեկը»³⁵: 1919 թ. հոկտեմբերի դրությամբ, ինչպես գրում էր Վանարյանը, Միլին կարճ ժամանակամիջոցում կարողացել էր հասնել իր առջև դրված այդ նպատակների մեծ մասի իրականացմանը: Հողվածագիրը նշում էր, որ քեմալականները նաև արտաքին քաղաքական դաշտում էին հաջողություններ գրանցել: Առաջին հերթին Թուրքիան մասնատումից փրկելն էր նրանց նպատակը, ինչի համար կարողացել էին համախմբել «ամբողջ անատոլուցի թրքութիւնը»՝ կորով ներշնչելով այն մարդկանց, որոնք «հինգ տարուան տառապալից զինուորութենէ մը ջախջախուած ու պարտուած վերադառնալով՝ պարզապէս անզգայ դիակի մը կերպարանքը առած էին, շարժելու անկարող և որևէ գործի անընդունակ»³⁶: Փարիզի համաժողովում Հայկական հարցի պահանջատիրութունից ազատվելու նպատակով քեմալականները պետք է թոյլ չտային ցեղասպանութունից փրկված արևմտահայերի վերադարձն իրենց տներ (ի դեպ, նրանք արգելել էին նաև կոտորածներից փրկված հույների ներգաղթը՝ այդպիսով քրիստոնյա ազգաբնակչությանը դարձնելով ոչ թե ազգային, այլ կրոնական փոքրամասնություն): Վանարյանն այս առիթով գրում էր. «Համաժողովին՝ «արևելեան նահանգներու մէջ հայ չկայ» ըսել կարենալու համար Միլին ոչ միայն չգոհացաւ բազմաթիւ քիւրտ աշիրէթներ բերել-բնակեցնելով հայոց կալուածներուն մէջ, ոչ միայն զանոնք զինեց ոսից զգլուխ և պաշարեց ամբողջ սահմանագլուխը, այլև փորձեց Հայաստանի սահմաններէն ներս ալ դիւային խաղ մը խաղալ, ոտքի հանել թաթարները Հայաստանի

կառավարութեան դէմ, որպէս զի ան հազիւ ժամանակ ունենայ իր ներքին խռովութիւններով զբաղելու և անգամ մըն ալ ջանդգնի»³⁷: Միլին մի կողմից խափանում էր հարյուրհազարավոր արևմտահայերի ներգաղթը հունի մէջ դնելու Հայաստանի առաջին հանրապետության կառավարության ջանքերը, մյուս կողմից՝ խաթարում Մուդրոսի զինադադարից հետո իրենց հայրենի բնակավայրեր վերադարձած հայերի բնականոն կյանքը՝ կարճ ժամանակ անց անգամ օրենքների միջոցով նրանց հեռացնելով սեփական հայրենիքից³⁸: «Հայ տարրին ստեղծագործական կարողութիւնը մոլեգին աստելութիւն մը կ'արթնցնէ: Միլիին քինախնդիր ուղեղներուն մէջ: Անոնք իրենց աչքովս իսկ տեսան, թէ ինչպէս հատ ու կտոր հայ բեկորները քանի մը ամիսներու ընթացքին յաջողեցան նորէն արծարծել մարած ու քանդուած օճախներու մէջ ստեղծագործութեան ու վերաշինման կայծերը: Հապա ինչ պիտի ըլլար, եթէ Կովկաս ապաստանած փախստականութիւնն ալ վերադառնար ու հաստատուէր իր բոյնին մէջ Վան, Կարին, թէ այլուր»³⁹, - գրում էր Արտաշէս Վանարյանը: ■

Պոյուններ

- 1- «Թուրքիայի Հանրապետության պատմություն», Եր., «ՎՍՎ-Պրինտ», 2018, էջ 24:
- 2- Տե՛ս http://www.armeniangenocide-am.armin.am/am/Encyclopedia_Of_armenian_genocide_qemalakan_sharjum :
- 3- Նույն տեղում:
- 4- Տե՛ս «Թուրքիայի Հանրապետության պատմություն», էջ 25:
- 5- Տե՛ս նույն տեղում, էջ 24:
- 6- Տե՛ս նույն տեղում:
- 7- Նույն տեղում:
- 8- Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Եր., «Գիտություն», 1999, էջ 130:
- 9- «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 1919, թիվ 271:
- 10- Նույն տեղում, 1919, թիվ 276:
- 11- Նույն տեղում:
- 12- Տե՛ս նույն տեղում:
- 13- Նույն տեղում:
- 14- Նույն տեղում:
- 15- Տե՛ս նույն տեղում:
- 16- Տե՛ս նույն տեղում:
- 17- Նույն տեղում, 1919, թիվ 275:
- 18- Նույն տեղում, 1919, թիվ 276:
- 19- Նույն տեղում:
- 20- Նույն տեղում, 1919, թիվ 275:
- 21- Նույն տեղում:
- 22- Նույն տեղում:
- 23- Նույն տեղում, 1919, թիվ 278:
- 24- Նույն տեղում:
- 25- Տե՛ս նույն տեղում:
- 26- Տե՛ս նույն տեղում:
- 27- Տե՛ս նույն տեղում, 1919, թիվ 274: :
- 28- Նույն տեղում, 1919, թիվ 321:
- 29- Տե՛ս նույն տեղում:
- 30- Տե՛ս նույն տեղում:
- 31- Տե՛ս նույն տեղում, 1919, թիվ 279:
- 32- Տե՛ս նույն տեղում:
- 33- Նույն տեղում:
- 34- Տե՛ս նույն տեղում, 1919, թիվ 287:
- 35- Նույն տեղում:
- 36- Նույն տեղում:
- 37- Նույն տեղում:
- 38- Տե՛ս նույն տեղում:
- 39- Նույն տեղում:

Գնայուն անցորդներ եւ մնայուն համակիրներ

Վրէժ-Արմէն

Ճարտարապետ, գրող, հրապարակագիր, «Հորիզոն»-ի ու «Հորիզոն գրական»-ի աւագ խմբագիր

Կուսակցութեան մը հիմնական ուժը իր անդամները կը հանդիսանան, սակայն անոր ներուժը իր համակիրներն են: Ահա անոնց է, որ կ'ուզեն անդրադառնալ այստեղ նախքան «անցորդներուն» մասին ալ խօսիլ:

Ճիշտ է, ամեն մարդ չէ, որ կրնայ կուսակցական ըլլալ: Չի բաւեր ընդունիլ կուսակցութեան մը ծրագիրն ու կանոնագիրը, հաշտ ըլլալ անոր գործելակերպին, ենթարկուիլ անոր որոշումներուն, տակաւին ամեն ջանք ալ ընել, իսկ Դաշնակցութեան պարագային՝ երդուել նոյնիսկ կեանքը զոհել անոր նպատակներն իրագործելու համար: Մա կը պահանջէ խիստ ինքնակարգապահութիւն մը, որ բոլորին չի պատշաճիր: Մակայն կայ ազգայիններու զանգուած մը, որ, առանց կուսակցութեան մը շարքերուն մաս կազմելու, տրամադիր է, պատրաստակամ է, նոյնիսկ աւելի քան յօժար՝ ազգին ծառայելու այդ կուսակցութեան կողքին: Այդ զանգուածը կը բաղկանայ անոր համակիրներէն, որոնք կը կազմեն իր ներուժը: Որքան ստուար ըլլայ այդ զանգուածը, այնքան մեծ կ'ըլլայ կուսակցութեան մը ազդեցութիւնը, կասկած չկայ:

Մենք գիտենք, թէ որքան հայորդիներ կամաւոր կու գան ու կը գործեն ՀՅԴ-ի զանազան յանձնախումբերուն մէջ՝ սկսեալ Հայ դատի յանձնախումբէն մինչև այլազան միջոցառումներու-ձեռնարկներու կազմակերպիչ կամ հանգանակիչ յանձնախումբերը, այլև կ'անդամակցին ուղեկից կազմակերպութիւններուն, անխոնջ կը մասնակցին անոնց այլազան աշխատանքներուն՝ տարուէ տարի, հաւատարմաբար, հաւատքով, եռանդով, տագնապելով, քունը փախցնելով և դժուարութիւններու առջև առանց կանգ առնելու, առանց յուսահատելու: Անոնք կը պաշտօնավարեն մեր



դպրոցներուն մէջ իրենց ստացած վարձատրութենէն շատ աւելի մեծ ներդրումով ու նուիրումով, ու յաճախ իրենք կ'ըլլան նոր սերունդը ազգային ոգիով տոգորողն ու կուսակցութեան շարքերը մղողները: Ուրիշներ սիրայօժար կ'աշխատակցին մեր մամուլին՝ առանց որևէ նիւթական վարձատրութեան կամ ակնկալութեան, երկար ժամանակ, իրենց ամբողջ կեանքը: Տակաւին ուրիշներ լուռումունջ իրենց քսակը կը բանան, կուսակցականի նման տարեկան տուրք ալ կը վճարեն՝ առանց վայելելու անդամի մը իրաւունքները:

Այստեղ կ'ուզեն առիթն օգտագործել ու ոչ միայն շնորհակալ ըլլալ մեր այդ անթիւ-անհամար ու անվարան գործակիցներուն, որոնց ներդրումէն եթէ զրկուած ըլլայինք, իհարկէ չէինք կրնար իրագործել այն ամենը, որ կըրցեր ենք անհա 131 տարիէ ի վեր ընել, այլև կ'ուզեն մեր համակիրներու գոյութիւնն արտայայտուած տեսնել ՀՅԴ կանոնագրին մէջ:

Արդարև, այստեղ կայ «Օժանդակներ» գլուխ մը, որ կը յիշատակուին նիւթապէս իրենց կանոնաւոր մասնակցութիւն բերողները, սակայն ոչ՝ միւսները, որոնք առաջիններուն ընծայած նիւթական թէկուզ լիարուն ներդրումէն բազմապատիկ աւելի օժանդակութիւն կը բերեն թէ՛ բարոյապէս և թէ՛ նիւթապէս: Եթէ փորձենք «Համազգային»-ի, ՀՕՄ-ի կամ ՀՄԸՄ-ի ունէ վարչականի՝ պարզապէս միայն մէկ տարուան մէջ և միայն ժողովներու յատկացուցած ժամերը բազմապատկել երկրի նուազագոյն աշխատավարձով, անմիջապէս կ'անդրադառնանք, թէ մեծ է իրենց տուածը, և թէ անարդարութիւն մը տեղի կ'ունենայ իրենց հանդէպ՝ զիրենք դուրս ձգելով օժանդակներու շրջանակէն:

Ոչ միայն մնայուն նուիրատու համակիրներու, այլև նոյնքան մնայուն գործակից համակիրներու անսպառ շունչով և ճակտի քրտինքով է, որ մեր կազմակերպութիւններն ու հաստատութիւնները կը պահուին, մեր կեդրոնները կը գործեն, նոյնիսկ մեր մամուլը կը հրատարակուի:



Ընկերական գրույցներ

Արդարօրէն, ՀՅԴ 33-րդ Ընդհանուր ժողովը կ'առաջադրէր «Մեր կիզակէտին վրայ պահել համակիրները, խորացնել կարևոր հարցերու վերաբերեալ օժանդակներու և համակիրներու հետ խորհրդակցելու գործելակերպը և կիրարկել արագ խորհրդակցութիւններ կազմակերպելու արդիւնաւէտ եղանակներ»: Ուստի ատենն է, որ անոնք ալ, փոխանակ այլազանուելու օժանդակներէն, իրաւամբ համարուին նոյնպէս մեր օժանդակները:

Եւ հիմա կ'ուզեմ ակնարկել խորագրիս առաջին մասով յիշուած «գնայուն անցորդներուն»: Ասոնք անոնք են, որոնք, դիմելով ու մտնելով մեր շարքերը, սխալ դուռ են թակեր: Եկեր են, մնացել տարի մը թէ տասը տարի ու անցեր-գացեր են: Եղեր են նոյնիսկ պարագաներ, երբ իրենց կուսակցական երդումը տալէ անմիջապէս ետք անհետացեր են: Այո՛, հազուադիւս դէպքեր են այս վերջինները, սակայն եղեր են ու մնացեր են մեր յիշողութեան մէջ: Ոմանք արագ անդրադարձեր են, որ իրենց տեղը չէ այս խտտամբեր կազմակերպութիւնը: Ուրիշներ գուցէ ինչ-ինչ առաւելութիւններ և առանձնաշնորհումներ ակնկալեր են ու հիասթափուեր: Չեմ ուրանար

համոզումներու փոփոխութիւնը, որ ոմանց պարագային կրնայ իրաւ ըլլալ, ոչ ալ հաւաքական կեանքի անխուսափելի հետևանք անհաճոյ վերաբերումը, որ կրնայ խրտչեցնել ուրիշներ:

Կարևոր չեն պատճառները կամ պատրուակները: Կարևորը առկայութիւնն է այդ երևոյթին, որ ամբողջովին հակապատկերն է մեր համակիրներու ցուցաբերած հաւատարմութեան ու ընծայած ծառայութեան: Հասկնալի է, որ մարդիկ կրնան առարկայական այլազան պատճառներ ունենալ՝ առողջութեան, այլապէս զբաղուածութեան, ասպարէզին կամ այլ ազդակներու վերաբերեալ, և գիտնք, որ այդպիսիները ցաւով կը բացակային կամ հեռու կը մնան՝ պահելով հանդերձ իրենց համոզումներն ու ազգային երազները և հնարաւոր միջոցներով նոյնիսկ հեռուէ հեռու իրենց ներկայութիւնը կը զգացնեն, սակայն կան նաև ուրիշներ... այդ միւսները:

Աւելի լաւ է՝ մենք ալ զիրենք «գնայուն անցորդներ» նկատենք ու անցնինք... ■



Նեմա հերը



Մանուկ Մարգարյան

Ծնվել է 1985 թ. օգոստոսի 10-ին Կոտայքի մարզի Պողոյան գյուղում: Միջնակարգ կրթությունը ստացել է Պողոյանի Պետրոս Դևոնյանի անվան միջնակարգ դպրոցում: Ընդունվել և սովորել է Երևանի պետական տնտեսագիտական համալսարանի աշխատանքի կառավարում ֆակուլտետում:

2007-2009 թթ. ծառայել է ՀՀ բանակում և զորացրվել ավագ լեյտենանտի զինվորական կոչումով:

2019 թվականից աշխատում էր Նոր Երզնկայի միջնակարգ դպրոցում որպես «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսուցիչ:

2020 թ. սեպտեմբերի 27-ին անդամագրվել է «Կամավորական շարժում» ՀԿ-ի գումարտակի 2-րդ վաշտին, մասնակցել զինվորական պատրաստության մարզումներին: Հոկտեմբերի 2-ին վաշտը մեկնել է Արցախ և անմիջապես ընդգրկվել պատերազմական գործողություններում Վարանգաթաղի (Լույսաագ) բարձունքի շրջանում: Հերոսաբար զոհվել է 2020 թ. հոկտեմբերի 6-ին՝ Մարտակերտի շրջանի համար

մղված մարտերի ժամանակ՝ կյանքի գնով պաշտպանելով Վարանգաթաղի բարձունքը:

Մանուկ Վրեժի Մարգարյանը մարտական գործողությունների ընթացքում ցուցաբերած արիության համար ԱՀ նախագահի հրամանագրով պարգևատրվել է «Արիության համար» մեդալով:



Արկաղյա Իսրայելյան

Ծնվել է 1978 թ. օգոստոսի 19-ին Հրազդան քաղաքում: Միջնակարգ կրթությունը ստացել է Հրազդանի Հակոբ Պարոնյանի անվան թիվ 12 միջնակարգ դպրոցում:

1996-1998 թթ. ծառայել է հայկական բանակում:

1999 թվականից՝ ՀՅԴ ՀԵՄ, այնուհետև ՀՅԴ անդամ էր: Արկաղյան (մեզ համար՝ Ագո) Հայաստանի կիևկուշին կարատեի ֆեդերացիայի անդամ էր:

2020 թ. սեպտեմբերի 27-ին անդամագրվել է «Կամավորական շարժում» ՀԿ-ի գումարտակի 2-րդ վաշտին, մասնակցել զինվորական պատրաստության եռօրյա մարզումներին: Հոկտեմբերի 2-ին վաշտը մեկնել է Արցախ և անմիջապես ընդգրկվել պատերազմական գործողություններում Վարանգաթաղի (Լույսաագ) բարձունքի շրջանում: Հերոսաբար զոհվել է 2020 թ. հոկտեմբերի 6-ին՝ Մարտակերտի

շրջանի համար մղված մարտերի ժամանակ՝ կյանքի գնով պաշտպանելով Վարանգաթաղի բարձունքը:

Արկաղյա Հենրիխի Իսրայելյանը մարտական գործողությունների ընթացքում ցուցաբերած արիության համար ԱՀ նախագահի հրամանագրով պարգևատրվել է «Արիության համար ԱՀ նախագահի հրամանագրով պարգևատրվել է «Արիության համար» մեդալով:

Կարեն Բաղայան

Ծնվել է 1992 թ. փետրվարի 20-ին Կոտայքի մարզի Պողոջան գյուղում: Միջնակարգ կրթությունը ստացել է Պողոջանի Պետրոս Ղևոնդյանի անվան միջնակարգ դպրոցում: Ուսումը շարունակել է Գյուղինստիտուտի «Ֆինանսներ և վարկեր» բաժնում:

2020 թ. սեպտեմբերի 27-ին անդամագրվել է «Կամավորական շարժում» ՀԿ-ի գումարտակի 2-րդ վաշտին, մասնակցել զինվորական պատրաստության եռօրյա մարզումների: Հոկտեմբերի 2-ին վաշտը մեկնել է Արցախ և անմիջապես ընդգրկվել պատերազմական գործողություններում Վարանգաթաղի (Լույսաազ) բարձունքի շրջանում: Հերոսաբար զոհվել է 2020 թ. հոկտեմբերի 6-ին՝ Մարտակերտի շրջանի համար մղված մարտերի ժամանակ՝ կյանքի գնով պաշտպանելով Վարանգաթաղի բարձունքը:

Կարեն Համբարձումի Բաղայանը մարտական գործողությունների ընթացքում ցուցաբերած արիության համար ԱՀ նախագահի հրամանագրով պարգևատրվել է «Արիության համար», իսկ ՀՀ նախագահի հրամանագրով՝ «Մարտական ծառայություն» մեդալներով:



Ալբերտ Մկրտչյան

Ծնվել է 1979 թ. դեկտեմբերի 22-ին Կոտայքի մարզի Պողոջան գյուղում: Միջնակարգ կրթությունը ստացել է Պողոջանի Պետրոս Ղևոնդյանի անվան միջնակարգ դպրոցում:

1996-1998 թթ. ծառայել է հայկական բանակում:

2005 թվականից ՀՅԴ անդամ էր:

2020 թ. սեպտեմբերի 27-ին անդամագրվել է «Կամավորական շարժում» ՀԿ-ի գումարտակի 2-րդ վաշտին, մասնակցել զինվորական պատրաստության եռօրյա մարզումների: Հոկտեմբերի 2-ին վաշտը մեկնել է Արցախ և անմիջապես ընդգրկվել պատերազմական գործողություններում Վարանգաթաղի (Լույսաազ) բարձունքի շրջանում: Հերոսաբար զոհվել է 2020 թ. հոկտեմբերի 6-ին՝ Մարտակերտի շրջանի համար մղված մարտերի ժամանակ՝ կյանքի գնով պաշտպանելով Վարանգաթաղի բարձունքը:

Ալբերտ Յուրիկի Մկրտչյանը մարտական գործողությունների ընթացքում ցուցաբերած արիության համար ԱՀ նախագահի հրամանագրով պարգևատրվել է «Արիության համար» մեդալով:




Հովհաննես Պետրոսյան

Ծնվել է 1996 թ. սեպտեմբերի 25-ին Կոտայքի մարզի Պողոջան գյուղում: Միջնակարգ կրթությունը ստացել է Պողոջանի Պետրոս Ղևոնդյանի անվան միջնակարգ դպրոցում: 2014 թ. ընդունվել է Երևանի Գեղարվեստի ակադեմիա:

2015-2017 թթ. ծառայել է հայկական բանակում: 2016 թ. մասնակցել է Ապրիլյան պատերազմին:

2020 թ. սեպտեմբերի 27-ին անդամագրվել է «Կամավորական շարժում» ՀԿ-ի գումարտակի 2-րդ վաշտին, մասնակցել զինվորական պատրաստության եռօրյա մարզումների: Հոկտեմբերի 2-ին վաշտը մեկնել է Արցախ և անմիջապես ընդգրկվել պատերազմական գործողություններում Վարանգաթաղի (Լույսաազ) բարձունքի շրջանում: Հերոսաբար զոհվել է 2020 թ. հոկտեմբերի 6-ին՝ Մարտակերտի շրջանի համար մղված մարտերի ժամանակ՝ կյանքի գնով պաշտպանելով Վարանգաթաղի բարձունքը:

Հովհաննես Անդրանիկի Պետրոսյանը մարտական գործողությունների ընթացքում ցուցաբերած արիության համար ԱՀ նախագահի հրամանագրով պարգևատրվել է «Արիության համար» մեդալով:





Ամեն ազգի բնական և անկասարելի իրավունքը կազմում է սեփական հայրենիքը՝ իր պարմասաշխարհագրական բնօրրանը, իբրև ինքնուրույն գոյարևման, առաջադիմության և սրբեղծագործության կենսական ազդակ:

Իր հայրենի տարածքի վրա յուրաքանչյուր ազգի գոյարևման երաշխիքը անկախ և իրավական պեղականությունն է: Այն մարմնավորում է ազգի քաղաքական կամքը, պաշտպանում նրա շահերը և ապահովում նրա անվտանգությունն ու ինքնուրույն զարգացումը: Անկախ պեղականությունը նաև ընկերության բնականոն առաջընթացի նախապայմանն է: Քաղաքական որևէ վարչակարգի և իշխանության պարտադրումը ազգերի ինքնորոշման սկզբունքի կոպիտ խախտում է, բռնարհություն է և ըստ ամենայնի՝ մերժելի: Ինքնորոշման իրավունքը անժամանցելի է և ի զորու կլինի նույնիսկ այն ժամանակ, երբ բռնագաղթով կամ ցեղասպանությամբ ազգը դուրս է մղվում իր հայրենիքից: Ազգը բնաջնջելու ամեն փորձ հանցագործություն է մարդկության դեմ: Բոլոր ազգերի անժխտելի իրավունքն է ազգային ազատագրական պայքարի ճանապարհով և նպատակահարմար այլ միջոցներով տապալել ամեն կարգի բռնապեղություն:

ՀՅ Դաշնակցությունը, հավատարիմ իր գաղափարաբանությանը, բոլոր ուժերով նվիրվում է բովանդակ հայ ազգի քաղաքական, տնտեսական, ընկերային և մշակութային շահերի պաշտպանությանը՝ ի ինդիր Ազատ Հայի, Ազատ քաղաքացու, և Ազատ Հայրենիքի կերպման:



ՀԻՍՏՈՐԻԱ RESISTANCE



ԴՐՕՇԱԿ

ՀՀԴ Բյուրոյի
Երիտասարդական գրասենյակ